

Ֆինանսաբանկային քոլեջի հիմնադիրներ

**ՀՀ կրթության և գիտության նախարարություն
ՀՀ կենտրոնական բանկ
Հայաստանի բանկերի միություն**

**Հայաստանի Հանրապետություն
ք. Երևան 2, Ամիրյան 26**

Հեռ. (3 741) 537788

Հեռ./ֆաքս (3 741) 537767

Web-site: <http://www.fbc-edu.am>

E-mail: staff@fbc-edu.am

Ձեռնարկի տպագրությունն իրականացվել է «Բանկ և ոչ բանկ ֆինանսական հաստատությունների ուսուցանում և թրեյնինգ» ծրագրի շրջանակներում, «Շորբանկ» խորհրդատվական ծառայություններ կորպորացիայի դրամաշնորհի միջոցներով՝ ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (USAID) ֆինանսավորմամբ:

The publication of the manual is done within the “Bank and Non Bank Financial Institutions Mentoring and Training” program supported by Shorebank Advisory Services Inc. grant funded by United States Agency for International Development (USAID)

Հրատարակչի գրանցման համարանիշ

© Ֆինանսաբանկային քոլեջ

Հարգարժան ընթերցող

Հայաստանի Հանրապետությունում գործող բանկերի մրցունակությունը բարձրացնելու, դրանք ժամանակակից գիտելիքներով զինված մասնագետներով համալրելու նպատակով ստեղծվեց Ֆինանսաբանկային քոլեջը:

Առաջնորդվելով ուսումնական գործընթացի կազմակերպման միջազգային փորձով՝ Ֆինանսաբանկային քոլեջը կիրառում է ուսուցման ժամանակակից մեթոդներ, այդ թվում՝ քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութեր, որոնք ստացել են Հայաստանի Հանրապետության ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների հավանությունը և արժանի են համարվել որպես դասագիրք տպագրվելու: Դասագրքերի առավելություններից մեկն այն է, որ դրանց հեղինակները հանրապետության բանկային ոլորտի լավագույն մասնագետներ են:

Ողջունում ենք Ֆինանսաբանկային քոլեջի ուսումնական նյութերի տպագրությունը և հուսով ենք, որ դրանք լայն օգտագործման նյութ կդառնան ոչ միայն քոլեջի ուսանողների, Հայաստանի Հանրապետությունում բանկային գործի մասնագետներ պատրաստող մյուս ուսումնական հաստատությունների, այլև ֆինանսաբանկային ոլորտի մասնագետների համար:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհուրդ**

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսների կողմից ստեղծված ուսումնական նյութերը համահունչ են ժամանակի պահանջներին և լիովին համապատասխանում են բանկային մասնագետների պատրաստման միջազգային չափանիշներին: Դրանք արդիական են և ներառում են իրավիճակային օրինակներ ֆինանսաբանկային ոլորտի առօրյայից, որոնց ուսումնասիրությունն էլ ավելի է նպաստում մատուցվող նյութի ընկալմանը:

Ֆինանսաբանկային քոլեջի դասախոսությունների տպագրությունն առաջընթաց քայլ է հանրապետության կրթական ոլորտի բարեփոխումների գործընթացում:

Կարծում ենք, դրանք սեղանի գիրք կդառնան և՛ բանկային գործն ուսումնասիրողների և՛ ընթերցողների ավելի լայն շրջանակի համար:

Հայաստանի բանկերի միություն

Բարի երբ

Առաջաբան

Հեղինակի կողմից ներկայացված «Տնտեսական գործունեության վերլուծություն» առարկան բաղկացած է տասներկու գլուխներից:

Առաջին գլխում ներկայացվում է տնտեսական գործունեության վերլուծության ձևերը և նրա դերը արտադրության կառավարման արդյունավետության բարձրացման գործում:

Երկրորդ և երրորդ գլուխներում հեղինակի կողմից նշվում է առարկան, նրա էությունը և խնդիրները: Առանձին ներկայացվում են առարկայի ուսումնասիրության օբյեկտները, ինչպես նաև առարկայի կապը տնտեսական այլ գիտությունների հետ: Հատուկ շեշտադրում է կատարվում տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկայի և անալիտիկ ցուցանիշների համակարգի վերլուծության վրա:

Չորրորդ և հինգերորդ գլուխները հիմնականում նվիրված են ձեռնարկությանը վերաբերող տնտեսական տեղեկատվության մշակման եղանակներին: Առանձնահատուկ ներկայացվում է տնտեսական գործունեության գործոնային վերլուծության մեթոդիկան:

Վեցերորդ գլխում ընթերցողի ուշադրությանն է հրավիրվում պահուստների հայտնաբերման և դասակարգման մեթոդիկային ձեռնարկությունների տնտեսական գործունեության վերլուծության մեջ:

Նյութի յոթերորդ և ութերորդ գլուխները ներկայացնում են արտադրանքի կառուցվածքի և որակի, նրա առաքման և իրացման հարցերի հետ կապված խնդիրները: Մանրամասը ներկայացվում է ձեռնարկության աշխատանքային ռեսուրսների օտագործման վերլուծությունը:

Հաջորդ գլուխը նվիրված է ձեռնարկության կապիտալի ձևավորման աղբյուրներին, նրա տեղաբաշխման և գնահատման վերլուծությանը: Տրվում է նաև ձեռնարկության կապիտալի ձևավորման օրենսդրական հիմքերը:

Տասներորդ և տասներկերորդ գլուխները նվիրված են ձեռնարկության հիմնական արտադրական ֆոնդերի և նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծությանը: Մասնավորապես ներկայացվում են կազմակերպության տեխնիկական հզորությունների, նյութական ռեսուրսների և նրանց օգտագործման վերլուծությունը, ինչպես նաև նրանց հետ կապված ցուցանիշների հաշվարկները:

Նյութի եզրափակիչ՝ տասներկերորդ գլուխը մանրամասը ներկայացնում է արդյունաբերական արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը: Ընթերցողի ուշադրությանն է ներկայացվում արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստների վերլուծությունը, ինչպես նաև նրան ուղղված կազմակերպչատեխնիկական մակարդակի գնահատումը:

Վերը նշված ուսումնական նյութն ունի ոչ միայն տեսական, այլ նաև գործնական նշանակություն: Իմ կարծիքով, նյութը հեղինակի կողմից ներկայացվել է բավականին ամբողջական, որի արդյունքում ձեռք բերված գիտելիքներն ու հմտություններն ունկնդիրներին հնարավորություն կտան իրենց մասնագիտական գիտելիքներն արդյունավետ օգտագործել առևտրային բանկերի համապատասխան ստորաբաժանումներում: Նյութը պարունակում է բազմաթիվ օրինակներ և շարադրված է մատչելի լեզվով:

Ամփոփելով վերոգրյալը, կարելի է նշել, որ Արթուր Անդրեասյանի «Տնտեսական գործունեության վերլուծություն» ուսումնական նյութը կարող է արդյունավետ ձեռնարկ հանդիսանալ ոչ միայն ՖԲՔ-ի, այլ նաև այլ տնտեսագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների համար:

S. Եսայան

Հունաստանի Արևտրային Բանկի ներքին աուդիտոր

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ ... 7

1.1. Ներածություն 7

1.2. Տնտեսական գործունեության վերլուծության ձևերը 7

1.3. Տնտեսական գործունեության վերլուծության դերն արտադրության կառավարման և արդյունավետության բարձրացման մեջ 9

Ինքնաստուգման հարցեր 9

ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ 10

2.1. Տնտեսական գործունեության վերլուծության առարկան և օբյեկտները 10

2.2. Տնտեսական գործունեության վերլուծության էությունը և խնդիրները 10

2.3. Տնտեսական գործունեության վերլուծության սկզբունքները 10

2.4. Տնտեսական գործունեության վերլուծության կապը մյուս գիտությունների հետ 11

Ինքնաստուգման հարցեր 11

ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ 12

3.1. Տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկան 12

3.2. Անալիտիկ ցուցանիշների համակարգը 13

Ինքնաստուգման հարցեր 14

ԳԼՈՒԽ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՉԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՐՈՒՄ 15

4.1. Համեմատման եղանակը 15

4.2. Համեմատական և միջին մեծությունների կիրառման եղանակները ՏԳՎ-ում 17

4.3. Տեղեկատվության խմբավորման եղանակը ՏԳՎ-ում 17

4.4. Հաշվեկշռային եղանակը ՏԳՎ-ում 18

4.5. Գրաֆիկական եղանակի կիրառումը ՏԳՎ-ում 18

Ինքնաստուգման հարցեր 18

ԳԼՈՒԽ 5. ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ 19

5.1. Գործոնային վերլուծության տիպերը և խնդիրները 19

5.2. Գործոնների դասակարգումը ՏԳՎ-ում 19

5.3. Շրջայական տեղադրումների եղանակ 20

5.4. Ինդեքսացիայի եղանակ 20

5.5. Բացարձակ տարբերությունների եղանակ 21

5.6. Տոկոսների տարբերության եղանակ 21

5.7. Կորելյացիոն եղանակ 22

5.8. Գծային ծրագրավորման եղանակ 22

5.9. Խաղերի տեսության եղանակ 23

5.10. Չանգվածային սպասարկման եղանակի կիրառումը ՏԳՎ-ում 23

Ինքնաստուգման հարցեր 23

ԳԼՈՒԽ 6. ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԴԱՍՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ 24

6.1. Պահուստների էությունը և դրանց դասակարգումը 24

6.2. Պահուստների որոնման սկզբունքներ 25

Ինքնաստուգման հարցեր 25

ԳԼՈՒԽ 7. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՅՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 26

7.1. Արտադրանքի կառուցվածքի վերլուծություն 27

7.2. Արտադրված արտադրանքի որակի վերլուծություն 28

7.3. Արտադրության համաչափության վերլուծություն 30

7.4. Արտադրանքի առաքման և իրացման վերլուծություն 31

7.5. Արտադրանքի իրացման վերլուծությունն ըստ պայմանագրային պարտավորությունների 31

Ինքնաստուգման հարցեր 32

ԳԼՈՒԽ 8. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 33

8.1. Կազմակերպության աշխատանքային ռեսուրսներով ապահովման վերլուծություն 33

8.2. Աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերլուծություն 34

8.3. Աշխատանքի արտադրողականության վերլուծություն 34

8.4. Աշխատանքի աշխատատարության վերլուծություն 34

8.5. Աշխատավարձի ֆունդի վերլուծություն 35

Ինքնաստուգման հարցեր 36

ԳԼՈՒԽ 9. ԿԱՊԻՏԱԼԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ 37

9.1. Վերլուծության նշանակության խնդիրները եւ տեղեկատվական ապահովումը 37

9.2. Կապիտալի հիմնական աղբյուրները, նրա ձևավորման և տեղաբաշխման կարգը 37

9.3. Չեռնարկության կապիտալի ձևավորման աղբյուրների առկայության կազմի և դինամիկայի վերլուծություն 39

9.4. Չեռնարկության կապիտալի տեղախաշխման վերլուծություն 39

Ինքնաստուգման հարցեր 40

ԳԼՈՒԽ 10. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ 41

10.1. Կազմակերպության տեխնիկական մակարդակի զարգացման վերլուծություն 41

10.2 Հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության վերլուծություն	42
10.3. Կազմակերպության սարքավորումների և արտադրական հզորությունների վերլուծություն	43
<i>Ինքնաստուգման հարցեր</i>	<i>44</i>
ԳԼՈՒԽ 11. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՍԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	45
11.1. Նյութական ռեսուրսների վերլուծության խնդիրները և տեղեկատվական աղբյուրները.....	45
11.2. Նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծություն.....	46
11.3. Նյութատարության մասնակի ցուցանիշները.....	46
<i>Ինքնաստուգման հարցեր</i>	<i>47</i>
ԳԼՈՒԽ 12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ	48
12.1. Ապրանքային արտադրանքի արտադրական ծախսերի վերլուծություն	48
12.2. Սեկ դրամ ապրանքային արտադրանքի ծախսերի վերլուծությունը.....	49
12.3. Կարևորագույն արտադրատեսակների ինքնարժեքի վերլուծություն.....	49
12.4. Ուղղակի նյութական ծախսումների վերլուծություն.....	50
12. 5. Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծություն	50
12.6. Իրացման ծախսեր	50
12.7. Անուղղակի արտադրական ծախսումներ	51
12.8. Վարչական ծախսեր	51
12.9. Արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստների վերլուծություն	51
12.10. Կազմակերպության կազմակերպչատեխնիկական մակարդակի վերլուծություն	51
<i>Ինքնաստուգման հարցեր</i>	<i>52</i>
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	53
ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ.....	53
ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՆԵՐԻ ՑՈՒՑԻՉ	54

ԳԼՈՒԽ 1. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՍԱՍԻՆ

Թեմայի նպատակն է՝ տալ պատկերացում տնտեսական գործունեության վերլուծության մասին, ներկայացնել տնտեսական գործունեության վերլուծության ձևերը և բացահայտել տնտեսական գործունեության վերլուծության դերը արտադրության կառավարման արդյունավետության բարձրացման գործում:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Ուսումնասիրելով թեման, ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել տնտեսական գործունեության վերլուծության նպատակահարմարությունը, առանձնացնել տնտեսական գործունեության վերլուծության ձևերը և պատկերացում կազմել տնտեսական գործունեության վերլուծության դերի մասին արտադրության կառավարման արդյունավետության բարձրացման գործում:

1.1. Ներածություն

Բնության և հասարակության կյանքի երևույթների ուսումնասիրման անհնար է առանց վերլուծության: Վերլուծություն բառը հունարեն «analysis» բառի թարգմանությունն է, որը բառացի նշանակում է «բաժանել, մասնատել»: Հետևաբար վերլուծությունն իրենից ներկայացնում է առարկայի կամ երևույթի մասնատում բաղկացուցիչմասերի որպես ամբողջի մասը կազմող տարրերի ուսումնասիրման նպատակով:

Օրինակ, արտադրանքի ինքնարժեքի մասին պատկերացում կազմելու համար անհրաժեշտ է իմանալ ոչ միայն նրա բաղկացուցիչ մասերը, այլև նրանց տեսակարար կշիռները: Որքան մանրամասնորեն ներկայացվի ինքնարժեքի փոփոխությունը ըստ բաղկացուցիչ մասերի, այնքան ավելի հնարավոր կլինի արտադրանքի ինքնարժեքի ձևավորման պրոցեսի կառավարումը:

Այսպիսով վերլուծության ներքո լայն իմաստով հասկացվում է շրջակա միջավայրի առարկաների և երևույթների ընկալումը, որը հիմնված է ամբողջի՝ բաղկացուցիչ մասերի մասնատման և համընդհանուր կախվածության և կապերի մեջ նրանց ուսումնասիրման վրա:

Գիտության մեջ և պրակտիկայում օգտագործվում են վերլուծության տարբեր ձևեր՝ ֆիզիկական, քիմիական, մաթեմատիկական, վիճակագրական, տնտեսական և այլն:

Հասարակության և տնտեսական գործունեության զարգացումը հանգեցրեց նրան, որ տնտեսական վերլուծությունը ձևավորվեց որպես գիտության ինքնուրույն ճյուղ: Այսօր պետք է տարբերել ընդհանուր տեսական տնտեսական վերլուծություն, որը ուսումնասիրում է տնտեսական երևույթները և պրոցեսները մակրո մակարդակի վրա (ազգային տնտեսության և նրա առանձին ճյուղերի պետական մակարդակի վրա) և կոնկրետ տնտեսական վերլուծություն միկրո մակարդակի վրա - ՏԳՎ, որն օգտագործվում է առանձին ձեռնարկությունների տնտեսության ուսումնասիրման համար:

1.2. Տնտեսական գործունեության վերլուծության ձևերը

Տնտեսագիտական գրականության մեջ ՏԳՎ-ի դասակարգումը իրականացվում է տարբեր առանձնահատկությունների հիման վրա:

Ճյուղային առանձնահատկությունը հիմնվում է աշխատանքի հասարակական բաժանման վրա, վերլուծությունը բաժանվում է **Ճյուղային**, որի մեթոդիկան հաշվի է առնում տնտեսության առանձին ճյուղերի առանձնահատկությունները (արտադրության, գյուղատնտեսության, շինարարության, տրանսպորտի, առևտրի և այլն), և **միջճյուղային**, որը հանդիսանում է ՏԳՎ-ի տեսական և մեթոդոլոգիական հիմքը:

Ժամկետային առանձնահատկությամբ՝ ՏԳՎ-ն բաժանվում է նախնականի (պերսպեկտիվ) և հաջորդականի (ռետրոսպեկտիվ, պատմական)։

Նախնական կանխատեսվող վերլուծությունը իրականացվում է նախքան տնտեսական գործունեության իրականացումը: Այն անհրաժեշտ է կառավարչական լուծումների և պլանային խնդիրների հիմնավորման համար, ինչպես նաև ապագա և սպասվող արդյունքների գնահատման և անցանկալի արդյունքներից խուսափելու նպատակով:

Հաջորդական վերլուծությունը իրականացվում է տնտեսական գործունեության ավարտից հետո: Այն օգտագործվում է պլանների վերահսկման, չօգտագործված պաշարների ի հայտ բերման և գործունեության արդյունքների օբյեկտիվ գնահատման համար:

Նախնական հաջորդական վերլուծությունները սերտորեն կապված են միմյանց հետ: Առանց պատմական վերլուծության անհնար է կանխատեսել ապագան: Անցած տարիների գործունեության վերլուծությունը թույլ է տալիս բացահայտել տեղեկեցները, օրինաչափությունները, չօգտագործված հնարավորությունները, առաջավոր փորձը և այլն: Իր հերթին մանրամասն և որակով կատարված կանխատեսումից է կախված հաջորդական վերլուծության արդյունքները:

Հաջորդական վերլուծությունն իր հերթին բաժանվում է օպերատիվային (իրավիճակային) և հանրագումարային վերլուծությունների:

Օպերատիվ վերլուծությունը իրականացվում է անմիջապես տնտեսական գործառնության ավարտից հետո կարճ ժամանակի ընթացքում (հերթափոխ, օր, տասնօրյակ): Նպատակը՝ օպերատիվ ձևով ի հայտ բերել թերությունները և ազդել տնտեսական պրոցեսների վրա:

Հանրագումարային վերլուծությունն իրականացվում է հաշվետու ժամանակի համար (ամիս, եռամսյակ, տարի): Նրա արժեքը կայանում է նրանում, որ ձեռնարկատիրական գործունեությունն ուսումնասիրվում է բազմակողմանիորեն՝ համապատասխան ժամանակահատվածի հաշվետվական տվյալների հիման վրա:

Տարածական առանձնահատկությամբ ՏԳՎ-ն կարելի է բաժանել ներտնտեսականի և միջտնտեսականի:

Ներտնտեսական վերլուծությունն ուսումնասիրում է ձեռնարկության և նրա ստորաբաժանումների գործունեությունը:

Միջտնտեսական վերլուծության դեպքում համեմատվում են երկու կամ ավելի ձեռնարկությունների գործունեության արդյունքները: Դա հնարավորություն է տալիս բացահայտել առաջավոր փորձը, առկա

պաշարները, թերությունները և դրա հիման վրա տալ ձեռնարկության գործունեության առավել արդյունավետ գնահատական:

Շատ կարևոր նշանակություն ունի ՏԳՎ-ի դասակարգումն ըստ կառավարման օբյեկտների: Այս առումով տարբերում են՝

- **տեխնիկատնտեսական վերլուծություն**, որով զբաղվում են ձեռնարկության տեխնիկական ծառայությունները (գլխավոր ինժեներ, գլխավոր տեխնոլոգ և այլն): Նրա էությունը կայանում է տեխնիկական և տնտեսական պրոցեսների փոխազդեցության ուսումնասիրությունը և ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունքների վրա նրանց ազդեցության բացահայտումը
- **ֆինանսատնտեսական վերլուծություն** (ձեռնարկության ֆինանսական ծառայությունները, վարկային և ֆինանսական կազմակերպությունները) - հիմնական ուշադրությունը բևեռվում է ձեռնարկության գործունեության ֆինանսական արդյունքներին, ֆինանսական պլանների իրականացմանը, սեփական և փոխառու կապիտալի արդյունավետ օգտագործման շահութաբերության աճին, ձեռնարկության ֆինանսական վիճակի և վճարունակության բարելավմանը
- **կառավարչական վերլուծություն** - իրականացվում է ձեռնարկության բոլոր ծառայությունները՝ ղեկավարությանը պլանավորման, վերահսկման, արդյունավետ որոշումների ընդունման, ռազմավարության և տակտիկայի մշակման, շուկայավարման, տեխնիկայի և տեխնոլոգիայի բարելավման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման նպատակով
- **սոցիալ - տնտեսական վերլուծություն** (տնտեսական ծառայությունները, սոցիոլոգիական լաբորատորիաները, վիճակագրական օրգանները) - ուսումնասիրում է սոցիալական և տնտեսական գործընթացների փոխհարաբերությունները, նրանց փոխազդեցությունը միմյանց վրա և ձեռնարկության գործունեության տնտեսական արդյունքների վրա
- **տնտեսավիճակագրական վերլուծություն** (վիճակագրական օրգաններ) - օգտագործվում է մասսայական հասարակական երևույթների ուսումնասիրման համար՝ ղեկավարման տարբեր մակարդակներում (ձեռնարկություն, ճյուղային, տարածաշրջան)
- **տնտեսա - բնապահպանական վերլուծություն** - շրջակա միջավայրի պահպանման օրգաններ, ձեռնարկության տնտեսական ծառայություններ - հետազոտում է բնապահպանական և տնտեսական պրոցեսների փոխազդեցությունը՝ կապված շրջակա միջավայրի պահպանման և այդ ուղղությամբ կատարված ծախսերի հետ
- **շուկայավարման վերլուծություն** (ձեռնարկության շուկայավարման ծառայություն) - օգտագործվում է ձեռնարկության գործունեության արտաքին միջավայրի, հումքի և պատրաստի արտադրանքի շուկաների, մրցունակության առաջարկի և պահանջարկի, առևտրային ռիսկի, գնային քաղաքականության հետազոտությունն ու ուսումնասիրումը:

Ըստ օբյեկտների ուսումնասիրման մեթոդիկայի ՏԳՎ-ն կարող է լինել համեմատական, դիագնոստիկ, գործոնային, մարժինալ, տնտեսա-մաթեմատիկական, տնտեսա-վիճակագրական, ֆունկցիոնալ-արժեքային և այլն:

- **համեմատական վերլուծության** ժամանակ սովորաբար սահմանափակվում են հաշվետվական տվյալների համեմատությամբ (փաստացի տվյալները պլանայինի հետ, նախորդ տարիների տվյալների հետ, այլ ձեռնարկությունների տվյալների հետ)
 - **գործոնային վերլուծությունն** ուղղված է արդյունավետության ցուցանիշների մակարդակի և աճի վրա ազդող գործոնների մեծության բացահայտմանը:
 - **դիագնոստիկ վերլուծությունն** իրենից ներկայացնում է տիպիկ նախանշանների հիման վրա տնտեսական պրոցեսների նորմալ ընթացքի խախտման էության բացահայտման միջոց: Օրինակ, եթե համախառն արդյունքի աճի տեմպը գերազանցում է պատրաստի արտադրանքի աճի տեմպին, ապա դա վկայում է անավարտ արտադրության մնացորդի աճի մասին: Նման նախանշանների իմացությունը թույլ է տալիս արագ և բավականին ճշտորեն տալ խախտումների բնութագիրը առանց լրացուցիչ ժամանակ և միջոցներ պահանջող գործողությունների:
 - **մարժինալ վերլուծություն** - այն հանդիսանում է կառավարչական որոշումների արդյունավետության գնահատման և հիմնավորման մեթոդ՝ հիմնված վաճառքի ծավալի, ինքնարժեքի և շահույթի պատճառահետևանքային փոխկապվածության և ծախսերի փոփոխումի և հաստատունի բաժանման վրա:
 - **տնտեսա - մաթեմատիկական վերլուծության** օգնությամբ ընտրվում է տնտեսական խնդիրների առավել արդյունավետ տարբերակը, բացահայտվում են առկա ռեսուրսների առավելագույն օգտագործման հաշվին արտադրության արդյունավետության բարձրացման ռեզերվները:
 - **ղետերմինացված վերլուծություն** - օգտագործվում է գործոնային և հանրագումարային ցուցանիշների միջև առկա փոխկապվածությունն ուսումնասիրելու համար:
 - **վիճակագրական վերլուծություն** (ռեգրեսիոն, կորելիացիոն և այլն) օգտագործվում է ուսումնասիրվող երևույթների և պրոցեսների միջև կախվածությունը հետազոտելու համար:
 - **ֆունկցիոնալ - արժեքային վերլուծություն** - ռեզերվների բացահայտման մեթոդ է: Նրա հիմնական նպատակն է բացահայտել և կանխել ավելորդ ծախսերը և այլն:
- Ըստ վերլուծության սուբյեկտների (օգտագործողների)** տարբերում են ներքին և արտաքին վերլուծություններ: Ներքին վերլուծությունն ամմիջապես իրականացվում է ձեռնարկության կողմից ընթացիկ գործունեության վերահսկման և կարճաժամկետ և երկարաժամկետ պլանավորման նպատակով:
- Ըստ ուսումնասիրվող օբյեկտների ընդգրկվածության, վերլուծությունը** բաժանվում է **համընդհանուրի և ընտրանքայինի**: Առաջինի դեպքում եզրահանգումներ արվում են բոլոր օբյեկտների ուսումնասիրությունից հետո, իսկ երկրորդի դեպքում միայն օբյեկտների մի մասի հետազոտումից հետո:

1.3. Տնտեսական գործունեության վերլուծության դերն արտադրության կառավարման և արդյունավետության բարձրացման մեջ

ՏԳՎ-ն մեծ տեղ է զբաղեցնում տնտեսագիտական գիտությունների մեջ: Կառավարումը կազմվում է հետևյալ փոխկապակցված գործառույթներից՝ պլանավորում, հաշվապահական հաշվառում, վերլուծություն և կառավարչական որոշումների ընդունում:

Պլանավորումը մեծ դեր ունի կառավարման մեջ, որն արտահայտվում է ձեռնարկության տնտեսական զարգացման պլանավորման մեջ: Արտադրությունը կառավարելու համար անհրաժեշտ է լրիվ և հավաստի տեղեկատվություն, որը տրամադրում է հաշվառումը: Ներկայացված տեղեկատվությունը հասկանալու և գնահատելու համար անհրաժեշտ է այն վերլուծել: Ինֆորմացիան վերլուծելուց հետո ընդունվում են արտադրական որոշումներ: Վերլուծությունը մասնակցում է այս գործընթացին և համարվում է արտադրության կառավարման գիտական հիմքերից մեկը:

Այսպիսով տնտեսական վերլուծությունը կառավարման գործառույթ է, որն ապահովում է որոշումների ընդունման գիտությունը:

Վերլուծությունը համարվում է ոչ միայն ծրագրերի հիմնավորման միջոց, այլ նաև նրանց կատարման վերահսկող: Պլանավորումը սկսվում և ավարտվում է ձեռնարկության գործունեության արդյունքների վերլուծությամբ: Մեծ դեր է հատկացվում վերլուծության արտադրության արդյունավետության բարձրացման, պահուստների հայտնաբերման և օգտագործման ժամանակ: Այսպիսով վերլուծությունը համարվում է արտադրության կառավարման համակարգում գլխավոր տարր, ներտնտեսական պահուստների հայտնաբերման միջոց, ծրագրերի և կառավարչական որոշումների գիտականորեն հիմնավորված հիմք:

Ինքնատուգման հարցեր

1. Ինչո՞վ է ընդհանուր տնտեսական վերլուծությունը տարբերվում կոնկրետ տնտեսական վերլուծությունից:
2. Թվարկե՞ք ՏԳՎ ձևերը:
3. Ինչու՞մ է կայանում ՏԳՎ դերը արտադրության արդյունավետության բարձրացման գործում:

1.1.

ԳԼՈՒԽ 2. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ տնտեսական գործունեության վերլուծության առարկայի և օբյեկտների մասին, ներկայացնել տնտեսական գործունեության վերլուծության էությունը և խնդիրները, բացահայտել տնտեսական գործունեության վերլուծության սկզբունքները և կապը մյուս գիտությունների հետ: *Ունակությունների և հմտությունների նկարագիրը:* Թեման ուսումնասիրելուց հետո ունենալու կկարողանա՝ ներկայացնել տնտեսական գործունեության վերլուծության առարկան և օբյեկտները, առանձնացնել տնտեսական գործունեության վերլուծության էությունը և խնդիրները, պատկերացում կազմել տնտեսական գործունեության վերլուծության սկզբունքների մասին և տալ կապը մյուս գիտությունների հետ:

2.1. Տնտեսական գործունեության վերլուծության առարկան և օբյեկտները

Յուրաքանչյուր գիտություն ունի իր ուսումնասիրման առարկան, որն ուսումնասիրում է որոշակի նպատակի հասնելու համար: Միևնույն օբյեկտը կարող է ուսումնասիրվել տարբեր գիտությունների կողմից՝ տարբեր տեսանկյուններով: Դրանցից յուրաքանչյուրն օբյեկտի մեջ գտնում է որոշակի յուրահատուկ կողմեր: Տնտեսական գործունեության ուսումնասիրման օբյեկտ է հանդիսանում տարբեր գիտությունների կողմից՝ տնտեսության ուսումնասիրությունը՝ մակրո և միկրո էկոնոմիկաների, կառավարման, արտադրաֆինանսական գործունեության պլանավորման և կազմակերպման, վիճակագրության, հաշվապահական հաշվառման տեսանկյունից և այլն: Գրականության մեջ ՏԳՎ-ի հանդիպող սահմանումներից կարելի է առանձնացնել հետևյալ խմբերը.

- ձեռնարկության տնտեսական գործունեության ուսումնասիրություն և վերլուծություն
- տնտեսական գործընթացների և երևույթների ուսումնասիրություն և վերլուծություն:

Սակայն վերլուծությունն ուսումնասիրում է տնտեսական գործունեությունը ոչ տեխնոլոգիական կազմակերպչական գործընթացների ձևով, այլ տնտեսավարման տնտեսական արդյունքների՝ որպես տնտեսական գործընթացների, ձևով: Այդ պատճառով վերջերս ՏԳՎ-ի առարկան են համարվում տնտեսական գործընթացները, որոնք տեղի են ունենում տնտեսական գործունեության արդյունքում: Ուսումնասիրելով ձեռնարկության տնտեսական գործունեության պատճառահետևանքային կապը, հնարավորություն է ստեղծվում բացահայտել տնտեսական գործընթացների էությունը և դրա հիմքի վրա ստացված արդյունքներին տալ ճիշտ գնահատական: Այսպիսով՝ ՏԳՎ-ի առարկան համարվում են տնտեսական երևույթների և գործընթացների պատճառահետևանքային կապերը: ՏԳՎ-ի օբյեկտներ են համարվում տնտեսական գործունեության տնտեսական արդյունքները: Օրինակ, արդյունաբերական ձեռնարկությունում վերլուծության օբյեկտ է հանդիսանում արտադրությունը և արտադրանքի իրացումը, ինքնարժեքը, արտադրության նյութական, աշխատանքային և ֆինանսական ռեսուրսների օգտագործումը, ձեռնարկության ֆինանսական դրությունը և այլն: Գյուղատնտեսության մեջ սրանցից բացի օբյեկտ են հանդիսանում հողային ռեսուրսները և այլն:

2.2. Տնտեսական գործունեության վերլուծության էությունը և խնդիրները

ՏԳՎ-ի՝ որպես գիտության, բովանդակությունը բխում է այն գործառույթներից, որոնք այն կատարում է այլ տնտեսագիտական գիտությունների համակարգում: Այսպիսի գործառույթներից մեկն է համարվում տնտեսական օրենքների գործողության բնույթի ուսումնասիրումը, տնտեսական գործընթացների և երևույթների, օրինաչափությունների և միտումների բացահայտումը ձեռնարկության կոնկրետ պայմաններում: ՏԳՎ-ի գլխավոր գործառույթը ընթացիկ և հեռանկարային ծրագրերի գիտական հիմնավորումն է: Վերլուծության գործառույթ է համարվում նաև ռեսուրսների խնայողաբար օգտագործման համար արտադրական որոշումների և ծրագրերի կատարման վրա վերահսկողության սահմանումը:

Վերլուծության գլխավոր գործառույթը արտադրության արդյունավետության բարձրացման պահուստների հայտնաբերումն է առաջատար փորձի և գիտության ու պրակտիկայի ձեռքբերումների հիման վրա: Վերլուծության մյուս գործառույթը ձեռնարկությունների գործունեության արդյունքների գնահատումն է ըստ ծրագրի կատարման՝ օգտագործելով տնտեսության զարգացման նվաճված մակարդակի հնարավորությունները, միջոցառումների մշակումն ըստ հայտնաբերված պահուստների տնտեսական գործունեության ընթացքում:

Այսպիսով՝ ՏԳՎ-ն որպես գիտություն իրենից ներկայացնում է հատուկ գիտելիքների համակարգ, տնտեսական զարգացման տեղեկացների ուսումնասիրման, ծրագրերի արտադրական որոշումների գիտական հիմնավորման, դրանց կատարման, վերահսկման, նվաճված արդյունքների գնահատման, տնտեսական պահուստների հայթայթմանը, չափմանը և հիմնավորմանը, որոնք բարձրացնում են արտադրության արդյունավետությունը և դրանց օգտագործման համար միջոցառումների մշակումը:

2.3. Տնտեսական գործունեության վերլուծության սկզբունքները

Վերլուծության նպատակով կատարվող ուսումնասիրությունները, դրանց արդյունքները և օգտագործումն արտադրության կառավարման մեջ պետք է համապատասխանի որոշակի պահանջների: Կարելի է առանձնացնել վերլուծության հետևյալ կարևոր սկզբունքները.

- Վերլուծությունը պետք է հիմնվի պետական քաղաքականության վրա՝ տնտեսական երևույթների, գործընթացների, արդյունքների տնտեսավարման, գնահատման պայմաններում: Այլ կերպ ասած, տնտեսական կյանքի դրսևորման ժամանակ պետք է հաշվի առնել նրա համապատասխանումը պետական, տնտեսական, սոցիալական, էկոլոգիական, միջազգային քաղաքականությանը և օրենսդրությանը:

- Վերլուծությունը պետք է կրի գիտական բնույթ, այսինքն՝ հիմնվի գիտական տեսության վրա:

- Վերլուծությունը պետք է լինի համալիր, այսինքն՝ համալիր մոտեցումը պահանջում է գործունեության բոլոր կողմերի ներառումը և նրանց բազմակողմանի ուսումնասիրումը:

- Վերլուծության առջև դրված պահանջներից մեկն էլ համարվում է համակարգային մոտեցումը: Երբ յուրաքանչյուր ուսումնասիրվող օբյեկտ դիտվում է որպես բարդ դիմամիկ համակարգ կազմված մի շարք տարրերից, որոնք կապված են միմյանց և արտաքին միջավայրի հետ:
- ՏԳՎ-ն պետք է լինի օբյեկտիվ, կոնկրետ, ճշգրիտ: Այն պետք է հիմնվի ստուգված տեղեկատվության վրա, որն իրապես կարտացոլի օբյեկտի գործունեությունը, իսկ նրա եզրահանգումները պետք է հիմնվեն ճշգրիտ վերլուծական հաշվարկների վրա:
- Վերլուծությունը պետք է լինի գործուն, ակտիվորեն ներգործի արտադրության և նրա արդյունքների վրա, վեր հանի թերությունները, բացթողումներն աշխատանքում և դրա մասին տեղեկացնի ձեռնարկության ղեկավարությանը: Այս սկզբունքից բխում է վերլուծության նյութերի պրակտիկ օգտագործման անհրաժեշտությունից՝ ձեռնարկության կառավարման համար միջոցառումների մշակման համար ծրագրային տվյալների հիմնավորման, կարգավորման համար:
- Վերլուծություն պետք է կատարվի ըստ ծրագրի՝ սիստեմատիկ, սրանից բխում է վերլուծության նյութերի պրակտիկ օգտագործման անհրաժեշտությունն աշխատանքների պլանավորման ժամանակ:
- Վերլուծությունը պետք է լինի օպերատիվ: Օպերատիվությունը նշանակում է արագ և հստակ իրականացնել վերլուծությունը, ընդունել կառավարչական որոշումներ և կատարել դրանք:
- Վերլուծությունը պետք է լինի արդյունավետ, այսինքն նրա վրա կատարված ծախսերը պետք է տան մեծ արդյունք:

2.4. Տնտեսական գործունեության վերլուծության կապը մյուս գիտությունների հետ

ՏԳՎ-ն կապված է մի շարք տնտեսագիտական և ոչ տնտեսագիտական գիտությունների հետ: Այդ կապը գնալով ավելի բազմակողմանի է դառնում: Առաջին հերթին ՏԳՎ-ն կապված է տնտեսագիտության հետ: Տնտեսագիտությունն ուսումնասիրելով տնտեսական օրենքները, դրանց գործունեության մեխանիզմները, տնտեսական հիմք է ստեղծում բոլոր տնտեսագիտական գիտությունների համար:

Բազմաթիվ վերլուծության տվյալներ հավաքվում և հիմք են ստեղծում այս կամ այն օրենքների ստեղծման համար: Այդ փաստերի ուսումնասիրումը թույլ է տալիս ձևավորել նոր օրենքներ և կատարել կանխատեսումներ տնտեսության զարգացման մասին: Նույնը կարելի է ասել նաև ՏԳՎ-ի և ճյուղային էկոնոմիկայի, միկրոէկոնոմիկայի, մակրոէկոնոմիկայի մասին: Իրենց հերթին, ՏԳՎ-ի արդյունքները օգտագործվում են արտադրության կազմակերպման աշխատանքի գիտական կազմակերպման մեջ: Վերլուծությունն ազդում է ձեռնարկությունների և ճյուղերի էկոնոմիկայի զարգացման վրա: Վերլուծությունը պետք է լավ իմանա տնտեսության պետական կարգավորման հիմունքները և արտադրության պլանավորման մեթոդիկան: Միևնույն ժամանակ, տնտեսության գիտականորեն հիմնված պլանավորումը և կառավարումն անհնարին է իրականացնել առանց տնտեսական վերլուծության արդյունքների ուսումնասիրման: Այն հանդիսանում է ծրագրերի և արտադրության որոշումների մշակման համար տեղեկատվական բազա: Մեծ նշանակություն ունի վերլուծության կապը հաշվապահական հաշվառման հետ: Մի կողմից, հաշվառման տվյալները հանդիսանում են տնտեսական վերլուծության զլխավոր ինֆորմացիայի աղբյուր, առանց իմանալու հաշվապահական հաշվառման մեթոդիկան և հաշվետվությունների բովանդակությունից, դժվար է վերլուծության համար գտնել անհրաժեշտ նյութեր և ստուգել դրանք: Մյուս կողմից վերլուծության առջև դրված են նույն պահանջները, ինչը և հաշվառման առջև:

ՏԳՎ-ն կապված է ձեռնարկության ֆինանսավորման և վարկավորման հետ: Առանց իմանալու տնտեսության համապատասխան ճյուղի ֆինանսավորման և վարկավորման ընդունված կարգը ֆինանսական և վարկային օրգանների հետ փոխադարձ կախվածությունը, հնարավոր չէ իրականացնել որակյալ ՏԳՎ:

Սերտ կապ գոյություն ունի ՏԳՎ-ի և վիճակագրության միջև, նույնիսկ այնպիսի կարծիք է արտահայտվում, թե վերլուծությունը հանդիսանում է վիճակագրության բաժիններից մեկը: Դա հիմնավորվում է նրանով, որ երկու գիտություններն էլ օգտագործում են նույն մեթոդներն ու եղանակները և օգտվում են տեղեկատվության նույն աղբյուրներից: Եվ վերջապես՝ վերլուծությունը համարվում է վիճակագրության խնդիրներից մեկը: Վիճակագրությունը հետաքրքրում է տնտեսական կյանքի զարգացման առավել ընդհանուր միտումները՝ մակրո մակարդակով, որը և հանդիսանում է ՏԳՎ-ի և վիճակագրության տարբերությունը:

ՏԳՎ-ն կապված է նաև ոչ տնտեսագիտական գիտությունների հետ: Առաջին հերթին կարելի է նշել մաթեմատիկան և տեխնոլոգիան: Բարդ տնտեսագիտական խնդիրները լուծվում են մաթեմատիկական եղանակներով և մեթոդներով: Մեծ կապ կա մաթեմատիկական ծրագրավորման հետ, որի օգնությամբ կարող է վերանշակվել մեծածավալ տեղեկատվություն: Չի կարելի վերլուծել արտադրության այս կամ այն գործընթացն առանց տեխնոլոգիական առանձնահատկությունների իմացության: Միայն այդ պայմաններում վերլուծողը կարող է հանգել օբյեկտիվ արդյունքների: Դրա վառ օրինակ է ֆունկցիոնալ արժեքային վերլուծությունը: ՏԳՎ-ն կապված է նաև իրավագիտության հետ: Չի կարելի ճիշտ եզրակացությունների հանգել վերլուծական աշխատանքներից հետո, առանց իմանալու բազմաթիվ օրենքներ, որոշումներ:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են տնտեսական գործունեության վերլուծության առարկան և օբյեկտները
2. Ի՞նչ խնդիրներ են դրված ՏԳՎ-ի առջև:
3. Թվարկեք Տնտեսական գործունեության վերլուծության սկզբունքները:
4. Ներկայացրեք ՏԳՎ-ի կապը մյուս գիտությունների հետ:

ԳԼՈՒԽ 3. ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ԵՎ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ

Թեմայի նպատակն է պատկերացում տալ տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկայի մասին և ներկայացնել անալիտիկ ցուցանիշների համակարգը:

Ուսակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկան և պատկերացում կազմել տնտեսական գործունեության վերլուծության անալիտիկ ցուցանիշների համակարգի մասին:

3.1. Տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկան

Յուրաքանչյուր գիտության մեթոդի ներքո հասկանում են առարկայի ուսումնասիրման միջոցը: ՏԳՎ-ի մեթոդի առանձնահատուկ հատկանիշների հիմնական աղբյուրը **մշտական համեմատությունների անհրաժեշտությունն է:** Գործունեության փաստացի արդյունքները համեմատվում են անցած տարիների արդյունքների հետ, պլանային ցուցանիշների հետ, միջճյուղային ցուցանիշների հետ և այլն:

ՏԳՎ-ի կարևորագույն մեթոդաբանական գծերից է համարվում նաև այն, որ այն ի վիճակի է ոչ միայն բացահայտել պատճառա-հետևանքային կապերը, այլև այդ կապերին տալ քանակական բնութագրում, այսինքն պահովել գործունեության արդյունքների վրա տարբեր գործոնների ազդեցության չափագրումը:

Վերլուծության մեջ պատճառային կապերի ուսումնասիրումն ու չափագրումը կարելի է իրականացնել **ինդուկցիայի և դեդուկցիայի** մեթոդով:

Ինդուկցիայի մեթոդով պատճառային կապերի իրենից ենթադրում է որ հետազոտությունը իրականացվում է մասնավորից դեպի ընդհանուրը, մասնավոր դեպքերից դեպի ընդհանրացումներ, պատճառներից դեպի արդյունքներ:

Դեդուկցիայի մեթոդի դեպքում հետազոտությունն իրականացվում է ընդհանուրից դեպի մասնավոր, արդյունքներից դեպի պատճառներ:

ՏԳՎ-ն, ինչպես յուրաքանչյուր տնտեսական երևույթ, պահանջում է **համակարգչային մոտեցում** վերլուծությունն առարկային, որն էլ հանդիսանում է նրա առանձնահատուկ գծերից մեկը:

Համակարգչային մոտեցում ասելով հասկանում են, որ յուրաքանչյուր երևույթ կամ պրոցեսի ուսումնասիրությունը պետք է իր մեջ ներառի հետևյալ քայլերը՝

- մանրամասնում (детализация) - բաղկացուցիչ մասերի տարանջատում
- համակարգում (систематизация) - ուսումնասիրվող օբյեկտի մոտավոր մոդելի կառուցում, գլխավոր կոմպոնենտների ֆունկցիաների, ենթակայության որոշում
- ընդհանրացում (синтез) - հատկանշական գործոնների առանձնացում պատահականների
- ցուցանիշների համակարգի մշակում և օգտագործում:

Այսպիսով, ՏԳՎ-ի մեթոդն իրենից ներկայացնում է համակարգչային, կոմպլեքսային ուսումնասիրություն, ձեռնարկության գործունեության արդյունքների վրա գործոնների ազդեցության չափորոշում և ընդհանրացում պլանային, հաշվապահական և այլ ցուցանիշների համակարգի հատուկ վերամշակման մեթոդներով:

ՏԳՎ-ն օգտագործում է ուսումնասիրման մի շարք ձևեր:

- **Ընդհանուր մեթոդիկան** ուսումնասիրման համակարգ է, որը օգտագործվում է տնտեսական վերլուծության տարբեր օբյեկտների ուսումնասիրման համար՝ ազգային տնտեսության տարբեր ճյուղերում:
- **Մասնավոր մեթոդիկան** օգտագործվում է տնտեսական վերլուծության առանձին օբյեկտներում կամ որոշակի տիպի արտադրություններում:

Վերլուծության յուրաքանչյուր մեթոդիկա ներառում է հետևյալ տարրերը.

1. վերլուծության նպատակի խնդիրները և ձևավորումները
2. վերլուծության օբյեկտը
3. վերլուծության օբյեկտի ուսումնասիրման ցուցանիշների համակարգը
4. վերլուծության հետևողական և պարբերաբար անցկացման համար խորհուրդները
5. վերլուծության տվյալների աղբյուրները
6. օբյեկտների ուսումնասիրման եղանակների նկարագիրը
7. վերլուծության կազմակերպման տվյալները
8. վերլուծության ժամանակ օգտագործվող տեխնիկական միջոցները
9. վերլուծության արդյունքները պարունակող փաստաթղթերի բնութագիրը
10. վերլուծության արդյունքների օգտագործողները:

ՏԳՎ-ի համալիր իրականացման ժամանակ առանձնացնում ենք հետևյալ փուլերը.

1. **Առաջին փուլում** ճշտվում են վերլուծության օբյեկտները, նպատակը և խնդիրները, կազմվում է անալիտիկ աշխատանքների ծրագիրը:
2. **Երկրորդ փուլում** մշակվում է սինթետիկ և անալիտիկ ցուցանիշների համակարգ, որի միջոցով բնութագրվում է վերլուծության օբյեկտը:
3. **Երրորդ փուլում** հավաքվում և նախապատրաստվում է վերլուծության համար անհրաժեշտ ինֆորմացիան:
4. **Չորրորդ փուլում** կատարվում է փաստացի ցուցանիշների մակարդակի համեմատում հաշվետու տարվա ծրագրային ցուցանիշի հետ և անցած տարվա փաստացի ցուցանիշների հետ, ճյուղի առաջատար ձեռնարկությունների հետ և այլն:
5. **Հինգերորդ փուլում** կատարվում է գործոնային վերլուծություն, որոշվում են գործոնները և հաշվարկվում դրանց ազդեցության չափերը:
6. **Վեցերորդ փուլում** հայտնաբերվում են չօգտագործված և հեռանկարային պահուստները:
7. **Յոթերորդ փուլում** տնտեսավարման արդյունքների գնահատում՝ հաշվի առնելով տարբեր գործոնները և չօգտագործված պահուստները, միջոցառումներ է մշակում դրանց օգտագործման համար:

ՏԳՎ-ի մեթոդիկայի գլխավոր տարրերից են վերլուծության տեխնիկական հնարքները և եղանակները: Դրանք օգտագործվում են ուսումնասիրման տարբեր փուլերում:

1. Տվյալների սկզբնական մշակում:
2. Ուսումնասիրվող օբյեկտի վիճակի ուսումնասիրում և զարգացման օրինաչափությունների ի հայտ բերում:
3. Ձեռնարկության գործունեության արդյունքների վրա գործոնների ազդեցության որոշում:
4. Արտադրության արդյունավետության բարձրացման, չօգտագործված և հեռանկարային պահուստների հաշվարկում:
5. Ձեռնարկության գործունեության վերաբերյալ արդյունքների և համալրային գնահատման ընդհանրացում:
6. Տարբեր միջոցառումների կառավարչական որոշումների տնտեսական և սոցիալական զարգացման պլանների հիմնավորում:

ՏԳՎ-ի մեջ օգտագործվում են տարբեր եղանակներ: Կարելի է մասնավորապես նշել ավանդական եղանակները: Դրանք են՝ համեմատման, գրաֆիկական, հաշվեկշռային, միջին և հարաբերական մեծությունների եղանակներ: Խմբավորումների գործոնային վերլուծության ժամանակ ՏԳՎ-ի մեջ օգտագործվում է շղթայական տեղադրումների, բացարձակ և հարաբերական տարբերությունների ինտեգրալ մեթոդը, կորելիացիոն, գծային, ծրագրավորման, զանգվածային սպասարկման տեսությունը և այլն:

3.2. Անալիտիկ ցուցանիշների համակարգը

Յուրաքանչյուր տնտեսական երևույթ, գործընթաց որոշվում է ոչ թե մեկ, այլ ընդհանուր փոխկապակցված ցուցանիշներով, օրինակ՝ հիմնական միջոցների արդյունավետությունը բնութագրվում է ֆոնդահատույցի, ֆոնդազինվածության, ֆոնդատարության միջոցով: Քանի որ վերլուծության մեջ օգտագործվում է ցուցանիշների մեծ քանակություն, անհրաժեշտ է դրանք խմբավորել, համակարգել: Ըստ իրենց բովանդակության ցուցանիշները բաժանվում են քանակականի և որակականի:

Քանակական ցուցանիշներից է, օրինակ, արտադրված արտադրանքի ծավալը, աշխատողների թվաքանակը: Որակական ցուցանիշները ցույց են տալիս առարկայական առանձնահատկությունները, օրինակ, աշխատանքի արտադրողականությունը, ինքնարժեքը, շահութաբերությունը և այլն:

Քանակական ցուցանիշների փոփոխությունն ի վերջո բերում է որակական ցուցանիշների փոփոխության և մակառակ: Որոշ ցուցանիշներ օգտագործվում են տնտեսության բոլոր ճյուղերում, իսկ որոշ ցուցանիշներ՝ միայն որոշակի ճյուղերում: Ըստ այս հատկանիշի, ցուցանիշները լինում են ընդհանուր և յուրահատուկ:

- Ընդհանուր ցուցանիշներից են՝ համախառն արտադրանքը, աշխատանքի արտադրողականությունը, շահույթը, ինքնարժեքը և այլն:
- Յուրահատուկ ցուցանիշներից է, օրինակ, կաթի յուղայնությունը, որևէ բույսի բերքատվությունը և այլն:

ՏԳՎ-ի մեջ ցուցանիշներն ըստ սինթեզի աստիճանի բաժանվում են՝ ընդհանրացնող, մասնավոր և օժանդակ ցուցանիշների:

- Ընդհանրացնող ցուցանիշներից է աշխատանքի արտադրողականությունը՝ միջին տարեկան, միջին օրական, մեկ աշխատողի ժամային արտադրանքը:
- Մասնավոր ցուցանիշներից է որևէ արտադրանքի միավորի արտադրության վրա ծախսված աշխատանքային ժամանակը կամ աշխատանքային ժամանակի միավորի ընթացքում արտադրված արտադրանքի քանակը:
- Օժանդակ ցուցանիշները օգտագործվում են այս կամ այն օբյեկտի ավելի (լրիվ) բնութագրման համար: Օրինակ, աշխատանքային ժամանակի այն քանակը, որը ծախսվում է կատարվող աշխատանքի միավորի վրա:

Անալիտիկ ցուցանիշները բաժանվում են՝ բացարձակի և հարաբերականի:

- Բացարձակ ցուցանիշներն արտահայտվում են դրամական, բնական չափիչներով:
- Հարաբերական ցուցանիշները ցույց են տալիս որևէ երկու բացարձակ ցուցանիշների հարաբերության միջոցով:

Բացարձակ ցուցանիշներն էլ, իրենց հերթին, բաժանվում են՝ բնականի և արժեքայինի: Բնական ցուցանիշները չափվում են ֆիզիկական չափման միավորներով (երկարություն, ծավալ):

Հաշվի առնելով ցուցանիշների պատճառահետևանքային կապերը, ցուցանիշները բաժանվում են՝ գործոնայինի և արդյունքայինի:

Ըստ ձևավորման սկզբունքների, ցուցանիշները լինում են՝

- Նորմատիվային (հունքի, ծախսի նորմաները, նյութերը, էներգիան):
- Ծրագրային (ձեռնարկության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրի տվյալներ):
- Հաշվարկային (հաշվապահական հաշվառման, վիճակագրական տվյալներ):
- Հաշվետու (հաշվապահական, վիճակագրական և օպերատիվ հաշվետվության):
- Անալիտիկ, որոնք հաշվարկվում են վերլուծության ժամանակ արդյունքների գնահատման և աշխատանքի արդյունավետության համար:

Ձեռնարկության, տնտեսության համալիր ուսումնասիրումը կախված է ցուցանիշների համակարգի ընտրությունից, քանի որ ցուցանիշների համախումբն առանց փոխադարձ կապի ազդեցության հաշվի առնելու չի կարող արդյունավետ լինել տնտեսական գործունեության գնահատման համար: Բոլոր ցուցանիշները կախված են վերլուծության օբյեկտից և խմբավորվում են հետևյալ ենթախմբերով:

1. Կազմակերպչատեխնիկական մակարդակի ցուցանիշներ, որոնք բնութագրում են արտադրության արտադրական կառուցվածքը, կառավարման կառուցվածքը, արտադրության մասնագիտացումը, արտադրական ցիկլի անընդհատությունը, աշխատանքի տեխնիկական և էներգետիկական զինվածությունը:

2. Մատակարարման ցուցանիշներ, որոնք բնութագրում են ձեռնարկության ապահովվածությունը հիմնական միջոցներով, սարքավորումներով, նյութական և աշխատանքային ռեսուրսներով:
3. Արտադրության ցուցանիշներ, որոնք ներառում են արտադրանքի արտադրության ծավալը, արժեքային, բնական և պայմանական չափմամբ, արտադրանքի կառուցվածքը, դրա որակը, համաչափությունը և այլն:
4. Առաքման ցուցանիշներ, որոնք ներառում են արտադրանքի առաքման և իրացման ծավալի ցուցանիշները՝ պահեստներում և պատրաստի արտադրանքի մնացորդների ցուցանիշները:
5. Արտադրության միջոցների օգտագործման ցուցանիշներ, որոնցից են համարվում ֆոնդահատույցը, արտադրության հիմնական միջոցների միջին տարեկան արժեքը, ամորտիզացիան և այլն:
6. Աշխատանքի առարկաների օգտագործման ցուցանիշներ, որոնցից են համարվում նյութատարությունը, նյութահատույցը, աշխատանքի առարկաների օգտագործման արժեքը վերլուծվող ժամանակաշրջանում:
7. Աշխատանքային ռեսուրսների օգտագործման ցուցանիշներ:
8. Արտադրանքի ինքնարժեքի ցուցանիշներ:
9. Շահույթի և շահութաբերության ցուցանիշներ:
10. Ձեռնարկության ֆինանսական դրության ցուցանիշներ, որոնք բնութագրում են ձեռնարկության կապիտալի կառուցվածքը, դրանց աղբյուրների կազմը, սեփական և փոխառու միջոցների օգտագործման արդյունավետությունը, կապը ֆինանսական օրգանների, բանկերի, վերադաս կազմակերպությունների ձեռնարկության աշխատողների հետ ըստ սեփական և փոխառու կապիտալի օգտագործման: Այս ենթախմբին են վերաբերում այն ցուցանիշները, որոնք բնութագրում են շահույթը, կուտակման և սպառման ֆոնդերը, բանկի վարկը, ձեռնարկության վճարունակությունը, նրա ֆինանսական կայունությունը: Բոլոր ենթախմբերի ցուցանիշները միմյանց հետ գտնվում են կապի և փոխկապակցվածության մեջ:

Ինքնատուգման հարցեր

1. Նկարագրեք տնտեսական գործունեության համալիր վերլուծության մեթոդիկան:
2. Ի՞նչ է իրենից ներկայացնում անալիտիկ ցուցանիշների համակարգը:
3. Ինչպիսի՞ք են ըստ ձևավորման սկզբունքների ցուցանիշները:

ՔԼՈՒԽ 4. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՄԱՆ ԵՂԱՆԱԿՆԵՐԸ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ տնտեսական տեղեկատվության մշակման եղանակների մասին: Մասնավորապես ներկայացվում են համեմատման, միջին մեծությունների կիրառման, տեղեկատվության խմբավորման և հաշվեկշռային եղանակները:

Ունակություններ և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելով ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել տնտեսական տեղեկատվության մշակման եղանակները, առանձնացնել համեմատման, միջին մեծությունների կիրառման, տեղեկատվության խմբավորման և հաշվեկշռային եղանակները:

4.1. Համեմատման եղանակը

Համեմատումը ճանաչման գիտական մեթոդ է, որի ընթացքում անհայտ երևույթները համեմատվում են նախկինում ուսումնասիրված հայտնի երևույթների հետ՝ նպատակ ունենալով բացահայտել դրանց կամ ընդհանուր կողմերը կամ էլ տարբերությունները, ուսումնասիրում է օբյեկտների փոփոխությունը, այդ փոփոխման տեմպերները: Վերլուծության մեջ համեմատումը օգտագործվում է հիմնական խնդիրները լուծելու համար:

Համեմատման եղանակը օգտագործվում է հետևյալ նպատակների համար.

1. Ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատությունը ծրագրի կատարողականը որոշելու համար:
2. Նորմատիվային ցուցանիշների համեմատությունը փաստացի ցուցանիշների հետ, ինչը հնարավորություն է տալիս սահմանել վերահսկողություն ծախսերի գծով:
3. Փաստացի ցուցանիշների համեմատում անցած տարիների ցուցանիշների հետ տնտեսական գործընթացների զարգացման միտումները որոշելու համար:
4. Վերլուծվող ձեռնարկության ցուցանիշների համեմատությունը առաջատար փորձ ունեցող այլ ձեռնարկությունների հետ պահուստների հայտնաբերման նպատակով:
5. Վերլուծվող տնտեսական ցուցանիշների համեմատումը շրջանի, տարածաշրջանի միջին ցուցանիշների հետ՝ արդյունքների գնահատման և չօգտագործված պահուստների որոշման համար:
6. Ուսումնասիրվող տարբեր ցուցանիշների զուգահեռ և դինամիկ համեմատություն: Օրինակ, արտադրանքի ծավալի, հիմնական ֆոնդերի, ֆոնդահատույցի փոփոխման դինամիկան:
7. Կառավարչական որոշումների տարբերակների համեմատումը առավել օպտիմալ տարբերակ ընտրելու նպատակով:
8. Գործունեության արդյունքների համեմատում այս կամ այն գործոնի փոփոխությունից առաջ և հետո: Ուսումնասիրենք համեմատության տեսակներն ավելի հանգամանորեն: Հետևյալ աղյուսակում տրված է փաստացի տվյալների համեմատությունը ծրագրի հետ և որոշված է ծրագրի կատարողականը:

Աղյուսակ 1. Արտադրանքի արտադրության ծրագրի կատարումը

Արտադրանքի տեսակները	Արտադրանքի ծավալը 1000դ.		Բացարձակ շեղումը ծրագրիծրագրից	Ծրագրի կատարումը %-ով
	ծրագիր	փաստացի		
Ա	400	440	+40	110 %
Բ	300	280	-20	93,3%
Գ	250	230	-20	92%
Դ	550	580	+30	105,5%
Ընդամենը	1500	1530	+30	102%

Փաստացի տվյալները ծրագրերի հետ համեմատում են մալ ծրագրերի ցուցանիշների հիմնավորվածությունը ստուգելու համար: Այդ նպատակով փաստացի տվյալները վերջին 3-5 տարիների միջին մակարդակով համեմատվում են հաշվետու տարվա ծրագրային տվյալների հետ:

Աղյուսակ 2. Փաստացի տվյալների միջին ցուցանիշների

Արտադրանքի տեսակները	Անցած տարիներ				Միջինը 4 տարիների համար	Հաջորդ տարվա ծրագիրը
	1	2	3	4		
Ա	250	280	300	330	290	300
Բ	210	200	220	225	213,8	200
Գ	240	220	250	240	237,5	220
Ընդամենը	700	700	770	795	741,25	720

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ արտադրանքի արտադրության ծրագիրը բավարար չափով հիմնավորված չէ, «բ» և «գ» տեսակի արտադրանքների ծրագիրը կազմելու ժամանակ հաշվի չեն առնվել անցած տարիների արտադրության աճի տեմպերը:

Փաստացի տվյալների համեմատումը ծրագրային տվյալների հետ կատարվում է արտադրության պահուստների հայտնաբերման նպատակով: Այս նպատակով միջոցառումների կատարման փաստացի տվյալները համեմատվում են ծրագրերի հետ: Եթե որևէ միջոցառման ծրագիրը չի կատարվել, ապա դա պետք է դիտել որպես արտադրության բարելավման նպատակով չօգտագործված պահուստ:

Աղյուսակ 3. Կազմակերպատեխնիկական միջոցառումների ծրագրի կատարումը

Միջոցառումներ	Պլան	Փաստացի	Բացարձակ շեղումը ծրագրից	Պլանի կատարումը %-ով
1. Նոր տեխնիկայի ներդրումը 1000դ.	160	130	-30	81,25
2. Սարքավորումների մոդեռնացումը 1000դ.	320	290	-30	90,6
3. Նոր տեխնիկայի գնումը 1000դ.	400	450	+50	113

Նոր տեխնոլոգիայի ներդրման և սարքավորումների նորացման միջոցառումների հետևանքով ծրագիրը չի կատարվում: Ոչ պակաս կարևոր է ցուցանիշների մակարդակի համեմատումը հեռանկարային ծրագրի տվյալների հետ:

Աղյուսակ 4. Արտադրանքի ծրագրի հեռանկարային կատարում

1	2	3	4	5 = 4 + 3	(6 = 2 - 3 - 5)
Արտադրանքի տեսակները	Պլանը 5 տարվա համար	Պլանը 3 տարվա համար	Փաստացին 3 տարվա համար	Շեղումը ծրագրից 4 - 3 սյուն	Պլանի կարգավորում վերջին 2 տարվա համար
Ա	50.000	28.000	26.000	-2000	24.000
Բ	30.000	18.000	16.000	-2000	14.000
Գ	40.000	26.000	28.000	+2000	12.000

Գործնականում անալիտիկ աշխատանքները օգտագործվում են հաստատված նորմաների հետ (օրինակ, հումքի, նյութերի ծախսը և այլն) համեմատություններ կատարելու համար: Այսպիսի համեմատումն անհրաժեշտ է ռեսուրսների տնտեսումն ու զերածախսը հայտնաբերելու համար:

Աղյուսակ 5. Հումքի և նյութերի օգտագործումը

Նյութական ռեսուրսների տեսակները	Ռեսուրսների ծախսը (տոննա)		Շեղումը նորմայից	
	ըստ նորմայի փաստացի արտադրանքի գծով	փաստացի	Բացարձակ	Հարաբերական
հումք	1500	1450	-50	-3,3
նյութեր	5200	6500	+300	+5,8
վառելիք	2800	2650	-150	-5,4

Ընդունված է փաստացի արդյունքները համեմատել անցած տարիների տվյալների հետ հետևյալ բանաձևի հիման վրա:

Աղյուսակ 6. Հիմնական ցուցանիշների դինամիկական

Տարիներ	Համախառն արդյունք		Աշխատողների թիվը		Աշխատանքի արտադրողականությունը	
	1000դրամ	%	մարդ	%	1000դրամ	%
1994	4500	100	1110	100	4.05	100
1995	4610	102.4	1100	99.1	4.19	103.5
1996	4720	104.9	1083	97.6	4.36	107.7
1997	4850	107.8	1074	96.8	4.52	111.6
1998	4920	109.3	1064	95.9	4.62	114.1
1999	4990	110.9	1059	95.4	4.71	116.3

$$\text{Արտադրողականություն} = \frac{\text{համախառն արդյունք}}{\text{աշխատողների թիվը}}$$

Աղյուսակի տվյալներից երևում է, որ արտադրանքի ծավալը 6 տարվա ընթացքում ավելացել է 10.9%-ով, իսկ աշխատանքի արտադրողականությունը՝ 16.3%-ով: Սա պայմանավորված է աշխատողների թվի կրճատմամբ:

Համեմատման հաջորդ տեսակը համեմատությունն է լավագույն արդյունքների հետ, այսինքն աշխատանքի լավագույն օրինակի, առաջատար փորձի, գիտության և նոր տեխնիկայի նվաճումների հետ: Մեծ նշանակություն ունի միջտնտեսական համեմատական վերլուծությունը, որի ժամանակ վերլուծվող ձեռնարկության ցուցանիշները համեմատվում են միջին ճյուղային տվյալների հետ: ՏԳՎ-ում օգտագործվում է զուգահեռ և դինամիկ շարքերի համեմատումը:

Վերլուծության մեջ տարբերում են համեմատության հետևյալ տեսակները՝ հորիզոնական, ուղղահայաց, տրենդային, ինչպես նաև միաչափ և բազմաչափ:

- Հորիզոնական վերլուծությունը օգտագործվում է փաստացի ցուցանիշների՝ բազիսայինից բացարձակ և հարաբերական շեղումների որոշման համար:
- Ուղղահայաց վերլուծության ժամանակ որոշվում է ընդհանուրի մեջ մասերի ունեցած տեսակարար կշիռը:
- Տրենդային վերլուծության ժամանակ օգտագործվում են ցուցանիշների աճի և հավելաճի տեմպերը բազիսային տարվա ցուցանիշների նկատմամբ:

- Միաչափ համեմատական վերլուծության ժամանակ համեմատությունն իրականացվում է մեկ կամ մի քանի ցուցանիշների միջև մեկ օբյեկտի գծով, կամ տարբեր օբյեկտների միջև մեկ ցուցանիշի գծով:
- Բազմաչափ վերլուծության ժամանակ համեմատվում են մի շարք ձեռնարկությունների մեծ թվով ցուցանիշներ:

4.2. Համեմատական և միջին մեծությունների կիրառման եղանակները ՏԳՎ-ում

ՏԳՎ-ի կողմից ուսումնասիրվող տնտեսական երևույթներն, որոնք ունեն քանակական արտահայտություն, արտահայտվում են բացարձակ և հարաբերական մեծություններով:

- **Բացարձակ** մեծությունները ցույց են տալիս երևույթների քանակական չափերը երկարության ծավալի, կշռի, մակերեսի, արժեքի և այլ միավորներով առանց համեմատելու այլ երևույթների չափերի հետ:
- **Հարաբերական** ցուցանիշները ցույց են տալիս ուսումնասիրվող երևույթի մեծության հարաբերությունը մեկ այլ երևույթի մեծության վրա կամ այլ երևույթի մեկ այլ ժամանակի կամ այլ օբյեկտի վրա: Հարաբերական ցուցանիշները ստացվում են մի մեծություն մեկ այլի վրա բաժանելով: Դրանք կարող են լինել ծրագրային տվյալները բազիսային տարվա այլ ձեռնարկությունների միջին ճյուղային տվյալները և այլն:

Հարաբերական մեծություններն արտահայտվում են գործակիցներով կամ տոկոսներով: ՏԳՎ-ի մեջ օգտագործվում են հետևյալ հարաբերական մեծությունները. ծրագրային առաջադրանքի, ծրագրի կատարման, դինամիկայի, կառուցվածքի, կորրոկցիայի, ինտենսիվության, արդյունավետության:

- Ծրագրային առաջադրանքի հարաբերական մեծությունն իրենից ներկայացնում է ընթացիկ տարվա ծրագրային մակարդակի հարաբերությունն անցած 3-5 տարիների միջինի վրա: Պլանի կատարման հարաբերական մեծությունը ցուցանիշների փաստացի և ծրագրային մակարդակների հարաբերություն է:
- Դինամիկ հարաբերական մեծությունը որոշվում է ցուցանիշների ընթացիկ տարվա մակարդակի հարաբերությամբ անցած ժամանակաշրջանի (ամսվա, եռամսյակի, տարվա) մակարդակի վրա: Այն համարվում է աճի (հավելաճի) տեմպ և արտահայտվում է տոկոսով կամ գործակցով: Դինամիկայի հարաբերական մեծությունը կարող է լինել **բազիսային** և **շրջայական**:
- Բազիսայինի ժամանակ յուրաքանչյուր հաջորդ մակարդակ համեմատվում է բազիսային մակարդակին:
- Շրջայականի դեպքում յուրաքանչյուր հատուկ մակարդակ համեմատվում է նախորդ մակարդակի հետ:

Կառուցվածքային ցուցանիշը մասի հարաբերությունն է ընդհանուրին, արտահայտված տոկոսներով կամ գործակցով:

Կորրոկցիայի հարաբերակցությունն իրենց ներկայացնում է ամբողջի մեջ մասերի հարաբերակցությունը, օրինակ, հիմնական միջոցների արժեքի մեջ ակտիվ և պասիվ մասերի հարաբերությունը:

Ինտենսիվության հարաբերական մեծությունները բնութագրում են այս կամ այն երևույթի տարածման կամ զարգացման տոկոսը: Օրինակ, բնակչության առողջական մակարդակը, կամ ավտոմատացված սարքավորումների տոկոսը:

Արդյունավետության հարաբերական մեծությունը արդյունքի հարաբերությունն է ռեսուրսներին կամ ծախսերին: Օրինակ, արտադրանքի արտադրումը 1 դրամ ծախսին, կամ արտադրանքի արտադրությունը 1 բանվորի հաշվով:

Տնտեսավարման պրակտիկայում բացարձակ և հարաբերական մեծությունների հետ միասին հաճախ օգտագործվում են նաև միջին մեծություններ:

Դրանք օգտագործվում են միատեսակ երևույթների ընդհանրացնող քանակական բնութագրում տալու համար, օրինակ, միջին աշխատավարձ միջին մեծության մեջ արտացոլվում են ընդհանուր տիպիկ գծեր, որոնք բնութագրում են այդ երևույթը:

ՏԳՎ-ում օգտագործվում են հետևյալ միջին մեծությունները՝ **միջին թվաբանական** (պարզ և կշռված), **միջին հարմոնիկ**, **միջին երկրաչափական**, **միջին քառակուսային** և այլն: Սակայն միջինները վերլուծությանը տալիս են ընդհանրացված տվյալներ, որոնց տակ հաճախ թաքցվում են, օրինակ, վատ աշխատողներ, վատ արտադրամասեր, բրիգադներ և այլն:

4.3. Տեղեկատվության խմբավորման եղանակը ՏԳՎ-ում

Վերլուծության մեջ մեծ տեղ ունի տեղեկատվության խմբավորումն ըստ ուսումնասիրվող օբյեկտների, բաժանումը որակապես միատեսակ խմբերի՝ համապատասխան հատկանիշներով: Եթե վիճակագրությունը օգտագործում է այս եղանակը երևույթների ընդհանրացման և տիպացման, ապա վերլուծության մեջ խմբավորումը օգնում է պարզաբանել միջին մեծությունների իմաստը, առանձին միավորների դերը միջինների մեջ, ցույց է տալիս ուսումնասիրվող ցուցանիշների կապը: Ելնելով ուսումնասիրման խնդիրներից, օգտագործում ենք **տիպոլոգիական**, **կառուցվածքային** և **անալիտիկ** խմբավորումներ:

- Տիպոլոգիական խմբավորումների օրինակ կարող է լինել բնակչության խմբավորումն ըստ՝ գործունեության տարբեր ձևերի, ձեռնարկությունների խմբերը՝ ըստ ինքնարժեքների և այլն:
- Կառուցվածքային խմբավորումներն ուսումնասիրում են ցուցանիշների ներքին կազմը, նրանց առանձին մասերը: Օրինակ, բանվորների կազմը՝ մասնագիտացումների, ստաժի, տարիքի և այլն:
- Անալիտիկ խմբավորումները օգտագործվում են ուսումնասիրվող ցուցանիշների կապը որոշելու համար: Ըստ կառուցման բարդության, տարբերվում են խմբավորման երկու տեսակ՝ պարզ և կոմբինացված:

– Պարզ խմբավորման ժամանակ ուսումնասիրվում է երևույթների միջև փոխկապվածությունը խմբավորված որևէ հատկանիշով:

– Կոմբինացված խմբավորման ժամանակ այդպիսի բաժանումը լինում է՝ սկզբում ըստ մեկ հատկանիշի, իսկ հետո՝ խմբերի ներսում ըստ մեկ այլ հատկանիշի, այսինքն՝ կարող են կառուցվել 2, 3 խմբավորումներ:

խմբավորման կառուցման մեթոդիկան կարող է որոշվել հետևյալ ալգորիթմով՝

- վերլուծության նպատակի որոշում
- անհրաժեշտ տվյալների ամբողջական հավաքագրում
- ըստ հատկանիշների խմբավորման համար խմբավորումների որոշում
- ինտերվալի ընտրություն և բաժանումը խմբերի
- միջին խմբային ցուցանիշի որոշում ըստ խմբակային և գործոնային հատկանիշների
- ստացված միջին մեծությունների վերլուծություն, ցուցանիշի գործոնների փոխազդեցության ուղղություն և փոխկապակցության որոշում:

4.4. Հաշվեկշռային եղանակը ՏԳՎ-ում

Հաշվեկշռային եղանակը օգտագործվում է երկու խումբ փոխկապակցված հավասարակշիռ տնտեսական ցուցանիշների վերլուծության համար: Այս մեթոդը լայն կիրառում ունի հաշվապահական հաշվառման և պլանավորման մեջ: Այն կիրառվում է նաև ՏԳՎ-ում: Օգտագործվում է ձեռնարկության աշխատանքային, ֆինանսական ռեսուրսներով, հումքով, նյութերով, վառելիքով, հիմնական միջոցներով ապահովվածության վերլուծության ժամանակ: Օրինակ, աշխատանքային ռեսուրսներով ձեռնարկության ապահովվածությունը որոշելիս կազմվում է հաշվեկշիռ, որի մի մասում ցույց է տրվում աշխատանքային ռեսուրսների պահանջը, մյուս մասում՝ փաստացի աշխատանքային ռեսուրսները: Ձեռնարկության վճարունակության որոշման համար օգտագործվում են վճարային հաշվեկշիռներ, որոնց մի կողմում գրվում են վճարման միջոցները, մյուսում՝ վճարման պարտավորությունները: Հաշվեկշռային եղանակը կիրառենք ապրանքային հաշվեկշռի օրինակով՝

$O_{սկ.} + П = P + B + Д + O_{վերջ.}$
որտեղ՝

- $O_{սկ.}$ - ապրանքների մնացորդը տարվա սկզբին
- $П$ - ապրանքների ստացումն է
- B - զույքագրումից առաջացած ավելցուկներ
- P - ապրանքների իրացումը
- $Д$ - ապրանքների այլ ծախսեր (կորուստներ):

Այստեղից իրացված ապրանքների ծավալը հավասար է՝

$P = O_{սկ.} + П + B - Д - O_{վ.}$

Մի շարք դեպքերում հաշվեկշռային եղանակը կարող ենք օգտագործել արդյունքային ցուցանիշի վրա գործոնների ազդեցության չափը որոշելու համար:

4.5. Գրաֆիկական եղանակի կիրառումը ՏԳՎ-ում

Գրաֆիկներն իրենցից ներկայացնում են ցուցանիշի մաշտաբային պատկերումը՝ երկրաչափական պատկերների միջոցով (գիծ, շրջանագիծ) կամ պայմանական պատկերներով: Գրաֆիկը տալիս է ուսումնասիրվող երևույթի ընդհանրացնող պատկերը: ՏԳՎ-ում օգտագործվող գրաֆիկների հիմնական ձևերից են՝ դիագրամները: Դիագրամները լինում են սյունաձև, շերտավոր, շրջանային, քառակուսային, գծային, ձևավոր: Ըստ բնույթի լինում են համեմատման, կառուցվածքի դիսամիկ դիագրամներ, կապի գրաֆիկներ, վերահսկման գրաֆիկներ և այլն:

Համեմատման դիագրամները հիմնականում լինում են սյունաձև և շերտավոր: Դրանց կառուցման համար օգտագործվում են կոորդինատային առանցքները: Աբսցիսների առանցքի վրա կառուցվում են սյուներ, որոնց բարձրությունը համապատասխանում է ցուցանիշների մեծությանը:

- **Շերտավոր** դիագրամները կառուցվում են հորիզոնական ձևով: Շերտի հիմքը տեղադրվում է կոորդինատային առանցքին, իսկ մասշտաբը՝ աբսցիսների առանցքին: Հաճախ օգտագործվում են ձևավոր դիագրամներ, որտեղ օբյեկտների փոփոխությունը ցույց է տրվում տարբեր պատկերների միջոցով:
- **Կառուցվածքային** դիագրամները թույլ են տալիս արտահայտել ամբողջի մեջ մասի տեսակարար կշիռը: Այն պատկերվում է քառակուսու, շրջանի միջոցով:
- **Դիսամիկ** դիագրամները պատկերում են երևույթների փոփոխությունը ժամանակի որոշակի կտրվածքում: Այդ օգտագործվում են սյունաձև, շրջանաձև, քառակուսաձև, ձևավոր և այլ գրաֆիկներ: Սակայն առավել հաճախ օգտագործվում են գծային գրաֆիկները:
- **Գծային գրաֆիկները** հաճախ օգտագործվում են ցուցանիշների միջև կապի ուսումնասիրման ժամանակ: Աբսիսների առանցքի վրա տեղադրվում է գործոնային ցուցանիշը, իսկ օրդինատների վրա՝ արդյունքային ցուցանիշները՝ համապատասխան մասշտաբներով:
- **Վերահսկման գրաֆիկները** օգտագործվում են ՏԳՎ-ում ծրագրի կատարման տվյալների ուսումնասիրման ժամանակ: Այս դեպքում գրաֆիկի մեջ լինում է 2 գիծ՝ ծրագրային և փաստացի մակարդակներով, որոշակի ժամանակաշրջանի համար:

Գրաֆիկների կառուցման ժամանակ պետք է կատարվեն հետևյալ պահանջները.

- նկարի պատկերավորությունը
- ճշգրիտ մասշտաբը
- պարզությունը և զեղեցիկ լինելը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ներկայացրեք համեմատման եղանակը:
2. Որո՞նք են համեմատական և միջին մեծությունների եղանակները:
3. Ի՞նչ է իրենից ներկայացնում տեղեկատվության խմբավորման եղանակը:
4. Լուսաբանեք հաշվեկշռային եղանակը
5. Լուսաբանեք գրաֆիկական եղանակը:

ՔԼՈՒԽ 5. ԳՈՐԾՈՆԱՅԻՆ ՎԵՐԼՈՒԹՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ գործոնային մեթոդիկայի վերաբերյալ, ներկայացնել գործոնային դասակարգումը և շղթայական տեղադրումների եղանակը, ինդքսացիայի, բացարձակ տարբերությունների, տոկոսների տարբերության, կորեյացիոն, գծային ծրագրավորման, խաղերի տեսության եղանակները և զանգվածային սպասարկման եղանակի կիրառումը ՏԳՎ-ում:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելով ընթերցողը կկարողանա՝ ներկայացնել գործոնային մեթոդիկայի էությունը, առանձնացնել շղթայական տեղադրումների եղանակը, ինդքսացիայի, բացարձակ տարբերությունների, տոկոսների տարբերության, կորեյացիոն, գծային ծրագրավորման, խաղերի տեսության եղանակները և զանգվածային սպասարկման եղանակի կիրառումը ՏԳՎ-ում:

5.1. Գործոնային վերլուծության տիպերը և խնդիրները

Գործոնային վերլուծություն ասելով, հասկանում ենք արդյունքային ցուցանիշների մեծության վրա գործոնների ազդեցության համալիր և համակարգային ուսումնասիրում և չափում: Տարբերում ենք գործոնային վերլուծության հետևյալ տիպերը.

1. ֆունկցիոնալ և կորեյացիոն
 2. ուղիղ և հակադարձ
 3. միաստիճան և բազմաստիճան
 4. ստատիկ և դինամիկ
 5. հետադարձ և առաջադարձ:
 - *Ֆունկցիոնալ* գործոնային վերլուծությունն իրենից ներկայացնում է գործոնների ազդեցության ուսումնասիրման մեթոդիկա, որի ժամանակ կապն արդյունքային ցուցանիշի հետ կրում է ֆունկցիոնալ բնույթ:
 - *Կորեյացիոն* վերլուծությունն իրենից ներկայացնում է գործոնների ուսումնասիրման մեթոդիկան, որի ժամանակ կապն արդյունքային ցուցանիշների հետ համարվում է ոչ լրիվ հավանական:
 - *Ուղիղ* գործոնային վերլուծության ժամանակ ուսումնասիրումը կատարվում է ընդհանուրից մասնավորին:
 - *Հակադարձ* գործոնային վերլուծության ժամանակ ուսումնասիրությունը մասնավորից ընդհանուրին:
 - *Միաստիճան* վերլուծության ժամանակ գործոնները գտնվում են մեկ մակարդակի վրա, առանց հետագա մասնատման:
 - *Բազմաստիճան* վերլուծության ժամանակ մասնատումը շարունակվում է:
 - *Ստատիկ* վերլուծության ժամանակ արդյունքային ցուցանիշներն ուսումնասիրվում են համապատասխան մասնավորվելով:
 - *Դինամիկ* վերլուծության ժամանակ ուսումնասիրությունը կատարվում է զարգացման մեջ:
 - *Հետադարձ* վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է արդյունքային ցուցանիշների աճը, պատճառներն անցած ժամանակաշրջանի համար:
 - *Առաջադարձ* վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է առաջիկայում արդյունքային ցուցանիշների վրա գործոնների ազդեցությունը:
- Գործոնային վերլուծության հիմնական խնդիրն է այն գործոնների ընտրումը, որոնք ազդում են արդյունքային ցուցանիշների վրա, դրանց դասակարգումը և սիստեմավորումը, գործոնների և արդյունքային ցուցանիշների միջև կապի ձևերի որոշումը, արդյունքային և գործոնային ցուցանիշների միջև կապի մոդելավորումը, գործոնների ազդեցության հաշվարկը և յուրաքանչյուրի դերն արդյունքային ցուցանիշի մեծության մեջ:

5.2. Գործոնների դասակարգումը ՏԳՎ-ում

Վերլուծության մեջ ուսումնասիրվող գործոնները դասակարգվում են ըստ տարբեր հատկանիշների: Ըստ տնտեսության գործունեության վրա ազդեցության, դրանք բաժանվում են՝ *հիմնականի և օժանդակի, ներքինի և արտաքինի, օբյեկտիվի և սուբյեկտիվի, ընդհանուրի և յուրահատուկի, հաստատունի և փոփոխունի, էքստենսիվի և ինտենսիվի:*

- *Հիմնական* են այն գործոնները, որոնք ունեն որոշիչ ազդեցություն արդյունքային ցուցանիշի վրա:
- *Օժանդակ* են համարվում նրանք, որոնք որոշիչ ազդեցություն չունեն արդյունքների վրա:
- *Ներքին* գործոնները են ձեռնարկության կազմակերպումը, կառավարումը, որոնք ազդում են ցուցանիշների վրա :
- *Արտաքին* գործոնները արտաքին շուկաների, այլ կազմակերպությունների ազդեցությունն են:
- *Օբյեկտիվ* գործոնները կապված չեն մարդկանց կամքից և ցանկություններից: Օրինակ, բնական աղետները:
- *Սուբյեկտիվ* գործոնները կապված են մարդկանցից, ձեռնարկություններից, կազմակերպություններից:
- *Ընդհանուր* գործոնները՝ գործում են տնտեսության բոլոր ճյուղերի մեջ:
- *Յուրահատուկ* են նրանք, որոնք գործում են առանձին ճյուղերում կամ ձեռնարկություններում:
- *Հաստատուն* գործոններն ազդում են երևույթի վրա անընդհատ, ամբողջ ժամանակի ընթացքում:
- *Փոփոխուն* գործոնները հայտնվում են ժամանակ առ ժամանակ: Օրինակ, նոր տեխնիկայի ներդրման ժամանակ և այլն:
- *էքստենսիվ* գործոններն այն գործոններն են, որոնք կապված են արդյունքային ցուցանիշների աճի հետ՝ քանակական ձևով:
- *Ինտենսիվ* գործոնները բնութագրում են որակական կողմը:
- *Քանակական* են համարվում այն գործոնները, որոնք արտահայտում են երևույթի քանակական բնութագիրը (աշխատողների քանակ, սարքավորումների քանակ և այլն):
- *Որակական* գործոնները որոշում են օբյեկտի ներքին որակը:

Վերլուծության մեջ գործոնները բաղկացած են մի քանի տարրերից: Կան նաև այնպիսիք, որոնք չեն բաժանվում մասերի: Դրանց հետ կապված գործոնները լինում են բարդ և հասարակ: Որոշ գործոններ անմիջապես են ազդում ցուցանիշի վրա, և կոչվում են առաջին կարգի գործոններ: Իսկ այն գործոնները, որոնք անմիջապես չեն ազդում ցուցանիշի վրա, այլ ազդում են անուղղակի ճանապարհով՝ առաջին կարգի գործոնների միջոցով, կոչվում են երկրորդ կարգի գործոններ:

5.3. Շրթայական տեղադրումների եղանակ

ՏԳՎ-ում հիմնական մեթոդաբանական հարցերից է համարվում արդյունքային ցուցանիշի վրա առանձին գործոնների ազդեցության մեծության որոշումը: Այդ նպատակով օգտագործվում են հետևյալ եղանակները՝ շրթայական տեղադրման, ինդեքսացիայի, բացարձակ տարբերությունների, տոկոսների տարբերության եղանակները: Դրանցից ամենատարածվածը շրթայական տեղադրման եղանակն է, որը թույլ է տալիս որոշել առանձին գործոնների ազդեցության չափերը արդյունքային ցուցանիշի վրա՝ աստիճանաբար յուրաքանչյուր ցուցանիշի բազիսային մեծությունը փոխարինելով փաստացի մեծությամբ: Յուրաքանչյուր փոխարինումից հետո ստացված արդյունքից հանելով տեղադրումից ստացված արդյունքը, ստացվում է գործոնների ազդեցության չափը: Այս եղանակի կիրառումը բացատրենք արտադրանքի ծավալի վրա գործոնների ազդեցության հաշվարկով: Ենթադրենք՝

$$Y = R * D * t * n$$

որտեղ՝

Y – ն արտադրանքի ծավալն է

R – ն արտադրանքի թվաքանակն է

D – ը մեկ աշխատողի կողմից տարվա ընթացքում աշխատած օրերի թիվն է

t – ն աշխատանքային օրվա միջին տևողությունն է

n–ը մեկ աշխատողի արտադրած միջին աշխատանքային արտադրանքը

Արտադրանքի ծրագրային արժեքը կլինի՝

$$Y_{պլ} = R_{պլ} * D_{պլ} * t_{պլ} * n_{պլ}$$

Կատարենք տեղադրումներ՝ գործոնները հերթականությամբ փոփոխելով փաստացի մեծությամբ:

$$Y_1 = R_{փ} * D_{պլ} * t_{պլ} * n_{պլ}$$

Առաջին գործոնի, այսինքն աշխատողների թվաքանակի փոփոխության ազդեցությունն արտադրանքի ծավալի փոփոխության վրա կլինի՝

$$\pm \Delta Y_1 = Y_1 - Y_{պլ}$$

Երկրորդ տեղադրում

Փոփոխենք երկրորդ գործոնը

$$Y_2 = R_{պլ} * D_{փ} * t_{պլ} * n_{պլ}$$

Երկրորդ գործոնի՝ մեկ աշխատողի աշխատած տարեկան օրերի միջին թվի փոփոխության ազդեցությունն արտադրանքի ծավալի վրա որոշենք հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta Y_2 = Y_2 - Y_1$$

Երրորդ տեղադրում

Փոփոխենք երրորդ գործոնը՝ t-

$$Y_3 = R_{պլ} * D_{պլ} * t_{փ} * n_{պլ}$$

Երրորդ գործոնի աշխատանքային օրվա միջին տևողության փոփոխության ազդեցությունն արտադրանքի ծավալի վրա կորոշվի հետևյալ բանաձևով

$$\pm \Delta Y_3 = Y_3 - Y_2$$

Չորրորդ տեղադրում

Փոփոխենք չորրորդ գործոնը՝ n-ը, մեկ աշխատողի միջին ժամանակային արտադրողականությունը: Այս դեպքում արտադրանքի ծավալը կլինի՝

$$Y_4 = R_{պլ} * D_{պլ} * t_{պլ} * n_{փ}$$

Չորրորդ գործոնի ազդեցության չափն արտադրանքի ծավալի փոփոխության վրա կլինի՝

$$\pm \Delta Y_4 = Y_4 - Y_3$$

Բոլոր գործոնների ազդեցության չափերի հանրահաշվական գումարը հավասար է արտաքին ծավալի փաստացի և ծրագրային մեծությունների տարբերությանը.

$$\pm \Delta Y_1 \pm \Delta Y_2 \pm \Delta Y_3 \pm \Delta Y_4 = Y_{տ} - Y_{պլ} = \pm \Delta Y$$

Շրթայական տեղադրման եղանակի օգտագործման կարևորագույն սկզբունքը գործոնների դասակարգումն է քանակականի և որակականի:

5.4. Ինդեքսացիայի եղանակ

Ընդհանուր ինդեքսների օգնությամբ կարելի է որոշել արդյունքային ցուցանիշի վրա տարբեր գործոնների ազդեցության չափերը: Օրինակի համար վերցնենք ապրանքային արտադրանքի ընդհանուր ինդեքսը:

$$J = \frac{\sum Q_1 P_1}{\sum Q_0 P_0}$$

Որտեղ Q-ն արտադրանքի քանակն է

P-ն արտադրանքի գինը

Ընդհանուր ինդեքսը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ՝

$$J = J_q * J_p$$

Որպեսզի որոշենք, թե ինչպես է փոփոխվել ապրանքային արտադրանքը, ի հաշիվ արտադրանքի քանակի և գնի, պետք է հաշվարկենք արտադրանքի քանակի ինդեքսը, և արտադրանքի գնի ինդեքսը:

$$J_q = \frac{\sum Q_1 P_0}{\sum Q_0 P_0}$$

Այստեղից կարելի է որոշել արտադրանքի քանակի փոփոխության ազդեցությունն արտադրանքի ծավալի վրա:

$$\pm \Delta J = \sum Q_1 P_0 - \sum Q_0 P_0$$

$$J_p = \frac{\sum Q_1 P_1}{\sum Q_1 P_0}$$

Արտադրանքի գնի ազդեցությունն արտադրանքի ծավալի վրա կարելի է հաշվարկել հետևյալ կերպ՝

$$\pm \Sigma J = \sum Q_1 P_1 - \sum Q_1 P_0$$

Այս երկու գործոնների ազդեցության չափերի գումարը հավասար է արտադրանքի ծավալի փոփոխությանը:

$$\pm \Sigma J_{(q)} \pm \Delta J_{(p)} = \pm \Sigma J = \sum Q_1 P_1 - \sum Q_1 P_0$$

5.5. Բացարձակ տարբերությունների եղանակ

Բացարձակ տարբերությունների եղանակը օգտագործվում է ինչպես շրթայական տեղադրման եղանակի ժամանակ, տվյալ արդյունքային ցուցանիշի վրա տարբեր գործոնների չափերը որոշելու համար: Այս եղանակի էությունը բացատրեք հետևյալ օրինակի միջոցով:

Օրինակ, ենթադրենք, որ $y = a * b * c * d$
 y -ի ծրագրային արժեքը հավասար է՝

$$y_{ուլ} = a_{ուլ} * b_{ուլ} * c_{ուլ} * d_{ուլ}$$

a գործոնի ազդեցության չափը y -ի վրա որոշվում է հետևյալ կերպ՝

$$\pm \Delta y (a) = a_{փ} * b_{ուլ} * c_{ուլ} * d_{ուլ}$$

որտեղ՝

$$\pm \Delta a = a_{փ} - a_{ուլ}$$

b գործոնի ազդեցության չափը y -ի վրա որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta y (b) = b_{փ} * a_{ուլ} * c_{ուլ} * d_{ուլ}$$

որտեղ՝

$$\pm \Delta b = b_{փ} - b_{ուլ}$$

c գործոնի ազդեցության չափը y -ի վրա կլինի՝

$$\pm \Delta y (c) = c_{փ} * a_{ուլ} * b_{ուլ} * d_{ուլ}$$

որտեղ՝

$$\pm \Delta c = c_{փ} - c_{ուլ}$$

d գործոնի ազդեցության չափը y -ի վրա որոշվում է հետևյալ կերպ՝

$$\pm \Delta y (d) = d_{փ} * a_{ուլ} * b_{ուլ} * c_{ուլ}$$

որտեղ՝

$$\pm \Delta d = d_{փ} - d_{ուլ}$$

Ազդող գործոնների ազդեցության չափերի հանրահաշվական գումարը հավասար է ցուցանիշի փոփոխությանը.

$$\pm \Delta y (a) \pm \Delta y (b) \pm \Delta y (c) \pm \Delta y (d) = \pm \Delta y = y_{փ} - y_{ուլ}$$

5.6. Տոկոսների տարբերության եղանակ

Ցուցանիշի վրա առաջին գործոնի ազդեցության չափը որոշելու համար անհրաժեշտ է ցուցանիշի ծրագրային մեծությունը բազմապատկել առաջին գործոնի ծրագրի կատարման ցուցանիշի տոկոսին՝ հանած 100%.

$$\pm \Delta y (a) = \frac{Y_{ուլ} * (\%A - 100\%)}{100}$$

որտեղ՝

$$\%A = \frac{a_{փ}}{a_{ուլ}} * 100\%$$

Երկրորդ գործոնի ազդեցության չափը y -ի վրա հաշվարկվում է հետևյալ բանաձևով

$$\pm \Delta y = \frac{Y_{ուլ} * (\%A - \%B)}{100}$$

որտեղ՝

$$\%B = \frac{B_{փ}}{B_{ուլ}} * 100\%$$

Երրորդ գործոնի ազդեցության չափը y -ի վրա հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta y_{(c)} = \frac{Y_{ուլ} * (\%C - \%B)}{100}$$

որտեղ՝

$$\%C = \frac{C_{th}}{C_{ուլ}} * 100\%$$

Երրորդ գործոնի ազդեցության չափը y-ի վրա հաշվարկվում է հետևյալ բանաձևով՝

$$\pm \Delta y_{(d)} = \frac{Y_{ուլ} * (\%d - \%c)}{100}$$

որտեղ՝

$$\%d = \frac{d_{th}}{d_{ուլ}} * 100\%$$

5.7. Կորելյացիոն եղանակ

Նախորդ հարցերի ուսումնասիրման ժամանակ տնտեսական գործընթացները և երևույթները կախված են ֆունկցիոնալ կապերով: Բայց տնտեսության մեջ միշտ չէ, որ այդ կապերը կրում են ֆունկցիոնալ բնույթ: Տնտեսական ուսումնասիրությունների ժամանակ հանդիպում ենք կորելյացիոն կապերի, որոնք տարբերվում են իրենց մոտավորությամբ և անորոշությամբ: Կորելյացիոն կապը ոչ լրիվ հավանական կախվածությունն է ցուցանիչների միջև, որոնք ի հայտ են գալիս միայն մի շարք ուսումնասիրությունների ժամանակ:

Տարբերվում են զույգային և բազմակի կորելյացիաներ:

- **Ջույգային** կորելյացիան կապ է երկու ցուցանիչների միջև, որոնցից մեկը համարվում է գործոնային, մյուսն՝ արդյունքային:
- **Բազմակի** կորելյացիան կապ է մի քանի գործոնային ցուցանիչների և արդյունքային ցուցանիչների միջև:

Կորելյացիոն վերլուծության օգտագործման անհրաժեշտ պայմաններն են՝

- ուսումնասիրվող ցուցանիչների մեծ քանակով ուսումնասիրման առկայությունը
- ուսումնասիրվող գործոնները պետք է ունենան քանակական չափում և արտացոլված լինեն այս կամ այն ինֆորմացիայի աղբյուրի մեջ:

Կորելյացիոն վերլուծության օգտագործումը թույլ է տալիս լուծել հետևյալ խնդիրները՝

6. արդյունքային ցուցանիչի փոփոխության որոշումը մեկ կամ մի քանի գործոնների ազդեցության տակ
7. գտնել արդյունքային ցուցանիչի յուրաքանչյուր գործոնի կախվածության հարաբերական աստիճանը: Խնդրի լուծման համար ընտրվում է մաթեմատիկական հավասարման համապատասխան ձևը: Երկու ցուցանիչների միջև ուղիղ գծային կախվածությունը բնութագրվում է պարզ հավասարմամբ, որն անվանվում է ուղիղ հավասարում:

$$Y = a + bx$$

որտեղ՝

x - ը գործոնային ցուցանիչ է

Y - ն արդյունքային ցուցանիչ է

a - ն և b - ն ռեգրեսիոն հավասարման գործակիցներ են

Լուծումը գտնենք հավասարումների համակարգից, որը ստացվում է փոքրագույն քառակուսիների եղանակով:

Կորելյացիոն կախվածության աստիճանը որոշվում է կորելացիայի գործակցով, որը հավասար է՝

$$R = \frac{\sum \Delta x \Delta y}{\sqrt{\sum \Delta x^2 \Delta y^2}}$$

Կորելյացիոն եղանակի միջոցով կարելի է որոշել օրինակ, մեքենագինվածության և աշխատանքի արտադրողականության, ինչպես նաև աշխատողների արածի և աշխատանքի արտադրողականության ցուցանիչի միջև կորելյացիոն կախվածության աստիճանը: Գտնելով այդ կախվածությունը և համադրելով կորելացիայի գործակիցները կարելի է որոշել, թե այդ ցուցանիչներից որ մեկն է ավելի մեծ ազդեցություն ունեցել աշխատանքի արտադրողականության վրա:

5.8. Գծային ծրագրավորման եղանակ

Գծային ծրագրավորման եղանակի կիրառումը վերլուծության մեջ լուծում է մի շարք բարդ խնդիրներ: Այս եղանակը հիմնվում է գծային հավասարումների լուծման վրա, երբ ցուցանիչների միջև կա խիստ ֆունկցիոնալ կախվածություն: Գծային ծրագրավորման եղանակին յուրահատուկ են հետևյալ հատկանիշները՝

- փոփոխական մեծությունների մաթեմատիկական արտացոլում
- հաշվարկների հաջորդականություն
- տրամաբանական վերլուծություն:

Այս եղանակից օգտվում են այն դեպքում, երբ ուսումնասիրող երևույթներն ունեն մաթեմատիկական որոշակիություն և քանակական սահմանափակվածություն: Այս եղանակով կարելի է լուծել այն խնդիրները, երբ անհրաժեշտ է որոշել այն արտադրական տեսակների թողարկման և իրացման ծավալները, որոնք կապահովեն առավելագույն շահույթ:

Բոլոր խնդիրները տարբերվում են լուծման այլընտրանքային տարբերակներով, իհարկե նաև սահմանափակ պայմաններով: Լուծել խնդիրը, նշանակում է ընտրել առավել արդյունավետ տարբերակը: Այդ նպատակով կազմվում է հետևյալ բանաձևը՝

$$\sum C = \sum P * C_{միավորի} \rightarrow \max$$
$$\sum D * P < \Phi \text{ պաշարներ}$$

- որտեղ՝
- Շ - շահույթ
- Ք - քանակ
- Ծ - ծախսեր
- Պ - պաշար

Կազմակերպության մասին այս հարցերի վերաբերյալ հավաքագրված ինֆորմացիան բերվում է մաթեմատիկական տեսքի, կազմվում է անհավասարումների համակարգ, որից հետո դրանք դարձվում են հավասարումներ՝ նոր փոփոխականների ներմուծմամբ:

5.9. Խաղերի տեսության եղանակ

Խաղերի մաթեմատիկական տեսությունը խաղային բնույթի իրադրություններում հետազոտում է օպտիմալ ռազմավարություն: Դրանցից են առավել շահավետ որոշումների ընտրությունը տնտեսական վերահսկողությունը կազմակերպելու համար: Իրադրությունը բերելով մաթեմատիկական տեսքի, կարող է ներկայացվել որպես խաղ մի քանի խաղացողներով, որոնցից յուրաքանչյուրի նպատակն առավելագույն շահույթի ստացումն է մեկ այլ խաղացողի հաշվին: Այդ պատճառով գոյություն ունի պայմանների որոշակիության հարցը, այսինքն՝ որոշել խաղացողների թիվը, հնարավոր ռազմավարությունը և շահումները: Յուրաքանչյուր խնդրի պայմաններից առավել կարևոր տարրը խաղացողի ռազմավարությունն է: Վերջնական խաղի համար տրվում է շահումների մատրիցան: Անվերջի համար՝ շահումների ֆունկցիան:

Խաղերի մաթեմատիկական տեսությունը կարող է օգտագործվել օպտիմալ որոշումների ընտրության ժամանակ: Օրինակ, նյութերի ռացիոնալ պաշարների գնահատումը, արտադրանքի օպտիմալ ծավալի ապահովումը և այլն:

Դիտարկենք օպտիմալ ծավալի ապահովման խնդիրը:

Տրված է ծախսի նորման, վաճառքի գինը, շահույթի մեծությունն ինչպես տաք, այնպես էլ ցուրտ պայմանների դեպքում: Այստեղ խնդիրն առավելագույն շահույթի ստացումն է՝ հաշվի առնելով եղանակի փոփոխությունը: Այդ նպատակով էլ մշակվում է ռազմավարություն առաջին, երկրորդ, երրորդ և չորրորդ տաքերակներով:

Առաջին տարբերակի դեպքում որոշվում է տարբեր արտադրատեսակների գծով և ընդամենը շահույթի հնարավոր մեծության ստացումը տաք եղանակի դեպքում (գարուն, ամառ):

Երկրորդ տարբերակը՝ ցուրտ եղանակ, այսինքն աշուն, ձմեռ տարբերակը:

Երրորդ և չորրորդ տարբերակների դեպքում համապատասխանաբար առաջին և երկրորդ ռազմավարական տարբերակների որոշակի փոփոխության պայմաններում որոշվում է շահույթի գումարը:

5.10. Չանգվածային սպասարկման եղանակի կիրառումը ՏԳՎ-ում

Չանգվածային սպասարկման եղանակը լայնորեն օգտագործվում է սպասարկման ոլորտում: Եթե նույնիսկ ծառայություն մատուցող կազմակերպությունն ունի իր գործունեության կազմակերպման համար բոլոր պայմանները և ռեսուրսները, ապա սպասարկման գործընթացում առկա են այնպիսի փոփոխական մեծություններ, որոնք կարող էակամորեն ազդել սպասարկման որակի վրա: Ուստի, նպատակահարմար է ընտրել սպասարկման այնպիսի տարբերակ, որի դեպքում սպասարկման ժամանակը պետք է լինի նվազագույնը, իսկ որակն ամենաբարձր մակարդակի: Չանգվածային սպասարկման տեսությունը նպաստում է ծառայություններ, որոնցից յուրաքանչյուրում աշխատում են ենթադրենք երկուական մարդ, ապա անհրաժեշտ է որոշել, թե դրանցից յուրաքանչյուրն ինչ չափով է սպասարկում ներկայացված աշխատանքը, արդյոք հերթեր չեն գոյանում և անհրաժեշտություն կա պահել լրացուցիչ աշխատողներ:

Ենթադրենք՝ 5 օրում յուրաքանչյուր ժամը մեկ կատարվել է 20 ռոպեանոց դիտարկում: Այն ընդամենը հավասար կլինի, ենթադրենք $24 \cdot 5 = 120$ ժամ, իսկ դիտարկման ժամանակ՝ $20 \cdot 120 = 2400$: Միաժամանակ սպասարկող ծառայության ներկայացման լրիվ ժամանակը 2300 ռոպե է: Այժմ հաշվարկենք սպասարկման պահանջագրերի միջին թիվը՝

$$2300 : 2400 = 0,958 \text{ մարդ/րոպե}$$

Վերլուծվող կազմակերպությունում մեկ սպասարկման միջին տևողությունը կազմել է ենթադրենք 1,5 ռոպե: Ելնելով դրանից, որոշենք սպասարկման ինտենսիվությունը՝ $1:1,5 = 0,66$: Եթե առաջին գործակիցը՝ 0,958-ը, փոքր է երկրորդից, ապա հերթեր չեն գոյանում, իսկ մեր օրինակում հակառակը՝ $0,958 > 0,66$: Ուրեմն գոյանում են հերթեր: Ելնելով կատարված հաշվարկներից՝ անհրաժեշտ է հաշվի առնել բանվորների, պարապուրդների, կորուստների, հերթերի ժամանակը և սպասարկող աշխատակիցների պահպանման ծախսերը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ներկայացրեք գործոնային վերլուծության տիպերը և խնդիրները:
2. Նկարագրեք ինդեքսացիայի եղանակը:
3. Ո՞ր բանաձևն է արտահայտում կորեյացիոն եղանակը:
4. Ո՞րն է զանգվածային սպասարկման եղանակի կիրառումը ՏԳՎ-ում:

ԳԼՈՒԽ 6. ՊԱՀՈՒՄՏՆԵՐԻ ՀԱՅՏՆԱԲԵՐՄԱՆ ԵՎ ԴԱՍԱԿԱՐԳՄԱՆ ՄԵԹՈԴԻԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ պահուստների հայտնաբերման և դասակարգման մեթոդիկայի մասին, առանձնացնել պահուստների էությունը և դրանց դասակարգումը, ինչպես նաև պահուստների որոնման սկզբունքները:

Ունակություններ և հմտությունների նկարագիրը: Թեմայի ավարտից հետո ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել պահուստների հայտնաբերման և դասակարգման մեթոդիկան, առանձնացնել պահուստների էությունը և դրանց դասակարգումը, ինչպես նաև պահուստների որոնման սկզբունքները:

6.1. Պահուստների էությունը և դրանց դասակարգումը

Ռեզերվ բառն առաջացել է ֆրանսիական «Ռեզերվ» բառից, որը թարգմանաբար նշանակում է պաշար, իսկ լատիներենից՝ «պահպանող»: Պահուստները, նախ ռեսուրսների պաշարներն են (հումք, նյութեր, սարքավորումներ, վառելիք և այլն), որոնք անհրաժեշտ են կազմակերպության անխափան աշխատանքի համար: Երկրորդ իմաստով պահուստ է համարվում արտադրության արդյունավետության բարձրացման հնարավորությունը: Այսուհետև ռեսուրսների նյութական պաշարները կանվանենք պահուստային ֆոնդեր, իսկ գիտատեխնիկական առաջընթացի ձեռքբերումների հետևանքով արտադրության զարգացման նվաճված մակարդակի հնարավորությունը կանվանենք տնտեսական պահուստներ: Այսպիսով՝ արտադրության արդյունավետության բարձրացման պահուստների տնտեսական բովանդակությունը կայանում է արտադրության աճող պոտենցիալի առավել լրիվ և ռացիոնալ օգտագործման մեջ:

Որպեսզի ավելի ամբողջական լինի պահուստների մասին մեր պատկերացումը, պահուստները դասակարգենք ըստ տարբեր հատկանիշների՝

Ըստ տարածական հատկանիշի, տարբերվում են՝ ներտնտեսական, ճյուղային, ռեգիոնալ և ընդհանուր պետական պահուստներ:

1. **Ներտնտեսական** պահուստներին են վերաբերվում այն պահուստները, որոնք հայտնաբերվում են և կարող են օգտագործվել միայն ուսումնասիրվող կազմակերպությունում: Դրանց են վերաբերվում աշխատաժամանակի և նյութական կորուստներն արտադրության կազմակերպման և տեխնոլոգիական ցածր մակարդակի հետևանքով:

2. **Ճյուղային** պահուստները հայտնաբերվում են ճյուղի մակարդակով: Օրինակ՝ մեքենաների, սարքավորումների նոր ձևերի մշակումը, նոր տեխնոլոգիաների մշակումը, կոնստրուկցիաների կատարելագործումը, որոնք օգտագործվում են ճյուղի այլ կազմակերպությունների կողմից:

3. **Ռեգիոնալ** պահուստները կարող են հայտնաբերվել և օգտագործվել աշխարհագրական, որևէ շրջանի սահմաններում:

4. **Ընդհանուր** պետական պատուստներին է վերաբերվում ընդհանուր պետական մակարդակով միջոցառումների իրականացման հետևանքով պահուստների հայտնաբերումը և օգտագործումը:

Ըստ ժամանակի հատկանիշի, պահուստները բաժանվում են՝ չօգտագործվող, ընթացիկ և հեռանկարային պահուստների:

- Չօգտագործված պահուստները ծրագրի համեմատ և գիտության նվաճումների և առաջատար փորձի օգտագործմանը արտադրության արդյունավետության բարձրացման հնարավորությունների բացթողումներն են:

- Ընթացիկ պահուստները տնտեսական գործունեության արդյունքների բարձրացման հնարավորություններն են, որոնք կարող են օգտագործվել ընթացիկ ժամանակաշրջանում (ամսվա, եռամսյակի, տարվա):

- Հեռանկարային պահուստները հաշվարկվում են սովորաբար երկար ժամանակի համար: Դրանց օգտագործումը կապված է կապիտալ ներդրումների, նոր տեխնիկայի ներմուծման, տեխնոլոգիայի փոփոխման հետ:

Մեծ նշանակություն ունի պահուստների դասակարգումն ըստ արտադրանքի արտադրության ցիկլի փուլերի: Ըստ այս հատկանիշի պահուստները լինում են նախարտադրական, արտադրական, արտադրանքի շահագործման և օգտագործման:

- Նախարտադրական փուլում ուսումնասիրվում է արտադրանքի առաջարկը, մշակվում է արտադրանքի կառուցվածքը, նրա արտադրության տեխնոլոգիան, նախապատրաստվում է արտադրությունը: Այստեղ հայտնաբերվում են արտադրության արդյունավետության բարձրացման պահուստներն ի հաշիվ արտադրանքի կառուցվածքի բարելավման, տեխնոլոգիայի կատարելագործման և այլն:

- Արտադրական փուլում տեղի է ունենում նոր արտադրատեսակների, նոր տեխնիկայի հիմնավորումը, իսկ հետո իրականացվում է արտադրանքի զանգվածային արտադրությունը: Այս փուլում պահուստների մեծությունը նվազում է ի հաշիվ այն բանի, որ աշխատանքներ են կատարվում արտադրական հզորությունների ներդրման, սարքավորումների և գործիքների ձեռք բերման համար: Այս գործընթացի արմատական փոփոխությունը հնարավոր չէ առանց մեծ կորուստների:

- Շահագործման փուլը բաժանվում է երաշխիքային ժամանակաշրջանի, երբ կատարողը պարտավոր է վերացնել սպառողների կողմից ի հայտ եկած թերությունները:

Շահագործման փուլում պահուստների, օբյեկտների առավել արտադրողական օգագործումը և ծախսերի իջեցումը կախված է առաջին և երկրորդ փուլերում կատարված աշխատանքների որակից:

Ըստ վերարտադրության գործընթացի, պահուստները լինում են արտադրական ոլորտի և սպառման ոլորտի: Հիմնական պահուստները գտնվում են արտադրության ոլորտում, բայց շատ են նաև սպառման ոլորտի պահուստները:

ՏԳՎ-ի մեջ գոյություն ունի նաև պահուստների խմբավորում ըստ ռեսուրսների տեսակների: Պահուստները լինում են հողերի, արտադրության հիմնական միջոցների, աշխատանքների առարկաների և աշխատանքային ռեսուրսների օգտագործման:

Ըստ արտադրության արդյունքի վրա փոխազդեցության պահուստները բաժանվում են էքստենսիվ և ինտենսիվ բնույթի:

- էքստենսիվ բնույթի պահուստներին են վերաբերում այն պահուստները, որոնք կախված են արտադրության մեջ լրացուցիչ ռեսուրսների օգտագործումից:

- ինտենսիվ պահուստներ են համարվում այն պահուստները, որոնք կապված են արտադրական ներուժի առավել լրիվ և ռացիոնալ օգտագործման հետ:

Պահուստները խմբավորվում են նաև ըստ ծախսատարության մակարդակի: Դրանք բաժանվում են 3 խմբի՝

1. Փոքրագույն ծախսեր պահանջող պահուստների օգտագործում, ի հաշիվ հումքի և պատրաստի արտադրանքի կորուստների կրճատման:

2. Այս խմբի պահուստների օգտագործումը պահանջում է նշանակալի ծախսեր, որովհետև այն կապված է գիտության ձեռքբերումների ներդրումների հետ առանց արտադրության կոնստրուկցիաների արմատական վերափոխումների:

3. Երրորդ խումբը կախված է արտադրության վերափոխման և տեխնիկական վերազինման հետ:

Ըստ հայտնաբերման եղանակների, պահուստները լինում են հայտնաբերված և թաքնված:

- Հայտնաբերված պահուստներին են վերաբերվում այն պահուստները, որոնք կարող են հայտնաբերվել հաշվապահական հաշվետվության և հաշվառման այլ փաստաթղթերից: Դրանք բաժանվում են ոչ պայմանականի (հումքի, նյութերի, աշխատածամերի կորուստներ) և պայմանականի (նորմաների գերծախսի ժամանակ):

- Թաքնված պահուստներին են վերաբերվում այն պահուստները, որոնք կապված են գիտության և տեխնիկայի ձեռքբերումների և առաջատար փորձի հետ, և որոնք վերանայված չեն ծրագրով:

Դրանց հայտնաբերման համար պետք է կատարել ներտնտեսական վերլուծություն և մի շարք դեպքերում միջազգային համեմատություններ: Պահուստները դասակարգվում են ըստ դրանց հայտնաբերման ժամանակի: Ըստ այս հատկանիշի պահուստները լինում են մինչև ծրագրերի մշակումն ի հայտ եկած պահուստներ և ծրագրերի հաստատումից հետո հայտնաբերված պահուստներ:

6.2. Պահուստների որոնման սկզբունքներ

Պահուստների որոնման ժամանակ պետք է ղեկավարվել հետևյալ սկզբունքներով՝

1. Պահուստների որոնումը պետք է կրի գիտական բնույթ, հիմնվի տնտեսական օրենքների, գիտության և տեխնիկայի նվաճումների վրա:

2. Պահուստների որոնումը պետք է լինի համալիր և համակարգային: Համալիր մոտեցումը պահանջում է պահուստների հայտնաբերում տնտեսական գործունեության բոլոր ուղղություններով: Համակարգային մոտեցումը նշանակում է հաշվի առնել ուսումնասիրվող գործընթացների փոխկապվածությունը:

3. Պահուստների կրկնակի հաշվարկման սկզբունք. կրկնակի հաշվարկն անհրաժեշտ է, քանզի հնարավոր է, որ հետագայում հայտնվեն տնտեսական արդյունքի վրա տարբեր գործոնների ազդեցության հետևանքով փոփոխություններ:

4. Պահուստների որոնման պահանջներից է համարվում նրանց համալիր մոտեցման ապահովումը, այսինքն՝ աշխատանքի գործընթացի երեք հիմնական տարրերի հավասարակշռությունը (աշխատանքի միջավայրի, աշխատանքի առարկաների և աշխատանքի ռեսուրսների): Սրանցից որևէ մեկ ռեսուրսի գծով ավելի շատ պահուստների հայտնաբերումը չի կարող իրացվել, եթե կգտնվեն այլ ռեսուրսների համար պահուստներ:

5. Պահուստները կարող են լինել տնտեսապես հիմնավորված, այսինքն՝ դրանց հաշվարկման ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել կազմակերպության որակական հնարավորությունները:

6. Պահուստների որոնումը պետք է լինի օպերատիվ, ընդ որում որքան օպերատիվ այն կլինի, այնքան արդյունավետ են հայտնաբերված պահուստները:

7. Պահուստների որոնումը պետք է լինի անընդհատ: Այն պետք է լինի ծրագրային, համակարգված, ամենօրյա:

8. Պահուստների որոնման գործընթացին պետք է մասնակցեն բոլոր աշխատողները:

9. Պահուստների որոնման ժամանակ նախապես պետք է գտնվի առաջատար կամ հետադիմական օղակը:

Այսպես որոշվում են հիմնական ուղղությունները, որոնցով պետք է իրականացվի պահուստների որոնումը:

ՏԳՎ-ում գոյություն ունեն պահուստների մեծության հաշվարկման հետևյալ եղանակները.

- ուղղակի հաշվարկի եղանակ
- համեմատման եղանակ
- գործոնային վերլուծություն
- ֆունկցիոնալ արժեքային վերլուծություն
- մաթեմատիկական ծրագրավորման վերլուծություն և այլն:

Ինքնաստուգման հարցեր

1. Ո՞րն է պահուստների հայտնաբերման և դասակարգման մեթոդիկան:
2. Ներկայացրեք պահուստների հայտնաբերման սկզբունքները:

ԳԼՈՒԽ 7. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակն է՝ թեմայի նպատակն է պատկերացում տալ արտադրանքի արտադրության և իրացման վերլուծության առանձնահատկությունների վերաբերյալ և ներկայացնել արտադրանքի որակի, համաչափության, առաքման և իրացման վերլուծությունը, ինչպես նաև քննարկել պայմանագրային պարտավորությունների գծով վերլուծությունը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեմայի ուսումնասիրությունից հետո ունկնդիրը կկարողանա ներկայացնել արտադրանքի արտադրության և իրացման վերլուծության առանձնահատկությունները, առանձնացնել արտադրանքի որակի, համաչափության, առաքման և իրացման վերլուծությունը, ինչպես նաև քննարկել պայմանագրային պարտավորությունների գծով վերլուծությունը:

Արտադրանքի ծավալի աճի բարձր տեմպերը, թողարկման բարձր որակն անմիջականորեն ազդում են արտադրական ծախսումների, շահույթի մեծության և շահութաբերության մակարդակի վրա: Այդ իսկ պատճառով էլ արդյունաբերական ձեռնարկությունների գործունեության վերլուծությունը սկսում ենք արտադրության ծավալի, արտադրության թողարկման ցուցանիշների վերլուծությունից: Արտադրանքի արտադրության վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- Արտադրանքի արտադրության և իրացման ծրագրի կատարման աստիճանի և դինամիկայի ուսումնասիրությունը:

- Ցուցանիշների փոփոխության վրա ազդող գործոնների բացահայտումը:

- Արտադրանքի արտադրության և իրացման ծավալների մեծացման համար արտադրանքի պահուստների հայտնաբերումը և դրանց ազդեցության որոշումը,

- Հայտնաբերված պահուստների օգտագործման համար միջոցառումների մշակումը:

Արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալը կարող է արտահայտվել բնական, բնական պայմանական և արժեքային չափիչներով:

Արտադրանքի արտադրության ծավալն ընդհանրացնող ցուցանիշները ստանում են արժեքային արտահայտություն մեծածախ գներով: Արտադրանքի ծավալի հիմնական ցուցանիշներն են համարվում համախառն արտադրանքը և ապրանքային արտադրանքը:

Համախառն արտադրանքն արտադրված արտադրանքի և կատարված աշխատանքների հանրագումարն է, ներառյալ անավարտ արտադրությունը: Այն սովորաբար արտահայտվում է համադրելի գներով:

Ապրանքային արտադրանքն իրենից ներկայացնում է համախառն արտադրանք՝ առանց անավարտ արտադրության և ներտնտեսական շրջանառության: Այն արտահայտվում է մեծածախ գներով և գործող գներով հաշվետու տարում: Շատ կազմակերպություններում համախառն արտադրանքը և ապրանքային արտադրանքը կառուցվածքով համընկնում են, եթե չկա անավարտ արտադրություն և ներտնտեսական շրջանառություն: Արտադրանքի իրացման ծավալը որոշված է գործող մեծածախ պայմանագրային գներով:

Ներառվում է իրացված արտադրանքի արժեքը: Արտադրական ծրագրի կատարման գնահատման համար կարևոր նշանակություն ունեն մաս արտադրանքի ծավալի բնական ցուցանիշները, որոնք օգտագործվում են արտադրանքի ծավալի վերլուծության ժամանակ, ըստ առանձին միատեսակ արտադրանքի ձևերի:

Պայմանական բնական ցուցանիշներն արժեքայինի պես օգտագործվում են արտադրանքի արտադրության ծավալի ընդհանրացած գնահատման համար: Օրինակ, պահածոների գործարանում օգտագործում են 1000 պայմանական տուփ, նորոգման ձեռնարկություններում՝ պայմանական նորոգումների քանակը և այլն:

Արտադրանքի արտադրության և իրացման տեղեկատվական աղբյուրներ են համարվում կազմակերպության տնտեսական և սոցիալական զարգացման ծրագրերը, օպերատիվ ծրագիր- գրաֆիկներն արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի և պետական կարիքների համար, կենցաղային օգտագործման ապրանքների առաքման հաշվետվությունները, հաշվետվությունն արտադրանքի, ապրանքների արտահանման մասին, ներմուծման, ինչպես նաև տեղեկագրեր պատրաստի արտադրանքի շարժի, դրանց առաքման և իրացման մասին և այլն:

Արտադրանքի ծավալի վերլուծությունը սկսվում է համախառն և ապրանքային արտադրանքի դինամիկայի աճի և հավելաճի բազիսային և շրթայական տեմպերի ուսումնասիրությունից:

Աղյուսակ 7. Ապրանքային արտադրանքի դինամիկական

Տարիներ	Ապրանքային արտադրանքը համադրելի գներով (1000 դրամ)	Աճի տեմպը %- ով	
		բազիսային	շրթայական
1996	15.000	100	100
1997	17.200	114,7	114,7
1998	20.600	137,3	119,8
1999	20.200	134,7	98,1
2000	22.200	148	109,9

Միջին տարեկան աճի (հավելաճի) տեմպը կարելի է հաշվարկել կշռված միջին երկրաչափականով կամ միջին թվաբանականով:

$$T = \sqrt[5]{\prod Ti}$$

$$T = (100 * 114.7 * 119.8 * 98.1 * 109.9)^{1/5} = 110.3$$

որտեղ՝

T_i – i-րդ տարվա աճի տեմպն է:

հավելածը = $110.3 - 100 = 10.3\%$ հավելած 5 տարվա համար

Բերված օրինակում 5 տարվա համար ապրանքային արտադրանքի ծավալն ավելացել է 48%- ով, հավելածի միջին տարեկան տեմպը կազմել է 10.3:

Հաշվետու ժամանակաշրջանի (ամիս, եռամսյակ, տարի) համար ծրագրի կատարման գնահատականը ցույց տանք ստորև:

Աղյուսակ 8. Չեռնարկության ապրանքային թողարկման ծրագրի կատարման վերլուծությունը

Արտադրատեսակներ	Արտադրանքի արտադրական ծավալը (հազար դրամ)			Պլանային թողարկված արտադրանքի շեղումը		Փաստացի թողարկված արտադրանքի շեղումը			
	անցած տարի	հաշվետու տարի		1000 դր.	%	ծրագրից		անցած տարվանից	
		պլան	փաստացի			1000 դր.	%	1000 դր.	%
Ա	21500	20200	19900	-1300	-6.05	-300	-1.49	-1600	-7.44
Բ	19200	20100	20000	+900	+4.69	-100	-0.5	+800	+9.38
Գ	14100	15500	17300	+1400	+9.93	+1800	+11.61	+3200	+22.7
Դ	14400	13200	16200	-1200	-8.33	+3000	+22.73	+1800	+12.5
Ընդամենը	69200	69000	73400	-200	-0.29	+4400	+6.38	+4200	+6.07

Անվանացանկը արտադրված արտադրանքների անունների ցանկն է կողերով, որոնք կարգավորում են արտադրանքի համապատասխան տեսակները:

Տեսականին արտադրված արտադրանքի անունների ցանկն է թողարկման ծավալներով ըստ առանձին տեսակների:

Ըստ անվանացանկի ծրագրի կատարման վերլուծությունը հիմնվում է արտադրանքի ըստ առանձին ապրանքատեսակների թողարկման փաստացի և ծրագրային համեմատման վրա:

Ըստ տեսականու ծրագրի կատարումը կարող է իրականացվել երեք եղանակով.

- նվազագույն տոկոսների եղանակով որոշում ենք տվյալ տեսակի արտադրանքների ծրագրի կատարման աստիճանը և դրանիցից ընտրում նվազագույնը (98.5)
- ընդհանուր թողարկված արտադրանքի մեջ թերակատարված ապրանքատեսակների տեսակարար կշիռը (50%), տեսականին թերակատարվել է
- միջին տոկոսի եղանակով, որը որոշվում է արտադրանքի փաստացի թողարկված ծավալը ծրագրային սահմաններում հարաբերելով արտադրանքի ծրագրային ծավալի վրա:

$$K = \frac{\sum \psi (\text{պլ})}{\sum \text{պլ}} \times 100\% = \frac{68800}{69000} \times 100\% = 99,4\%$$

Աղյուսակ 9. Ծրագրի կատարումն ըստ տեսականու

Արտադրատեսակներ	Ապրանքային արտադրանք ծրագրային գներով		Պլանի կատարումը %-ով $\Phi/\Pi * 100\%$	Ապրանքային արտադրանքը ըստ տեսականու ծրագրի կատարման
	պլան	փաստացի		
Ա	20200	19900	98,5	19900
Բ	20100	20000	99,5	20000
Գ	15500	17300	111,6	15500
Դ	13200	16200	122,7	13200
Ընդամենը	69000	73400	106,4	68800

Ըստ տեսականու ծրագրի, թերակատարման պատճառները կարող են լինել արտաքին և ներքին:

Արտաքինին են վերաբերում շուկայի մրցակցությունը, առաջարկի պահանջարկի փոփոխությունն ըստ առանձին արտադրատեսակների, մատակարարների կողմից մատակարարման խախտումները և այլն:

Ներքին պատճառներից են արտադրության ոչ ճիշտ կազմակերպումը, արտադրական հզորությունների թերի օգտագործումը և այլն:

7.1. Արտադրանքի կառուցվածքի վերլուծություն

Արտադրանքի առանձին տեսակների ծրագրի կատարման անհավասարաչափությունը բերում է նրա կառուցվածքի փոփոխությանը:

Ըստ կառուցվածքի ծրագիրը կատարելը առանձին տեսակների ծրագրավորված հարաբերակցությունը արտադրանքի փաստացի թողարկման մեջ պահպանելն է:

Արտադրանքի կառուցվածքի փոփոխությունը մեծ ազդեցություն կարող է ունենալ բոլոր տնտեսական ցուցանիշների վրա: Մասնավորապես, թողարկման ծավալի նյութատարության, ապրանքային արտադրանքի ինքնարժեքի, շահույթի, շահութաբերության ցուցանիշները առավել զգայուն են: Եթե աճում է ավելի թանկ արտադրանքի տեսակարար կշիռը, ապա թողարկման ծավալն արժեքային արտահայտությամբ աճում է և հակառակը: Գիշտ նույնն է տեղի ունենում շահույթի հետ: Առավել շահութաբեր արտադրատեսակի տեսակարար կշիռի ավելացմամբ աճում է շահույթի գումարը: Արտադրության կառուցվածքի ազդեցության հաշվարկը նշված ցուցանիշների մակարդակի վրա կարելի է հաշվարկել շղթայական տեղադրման եղանակով:

Աղյուսակ 10. Ապրանքային արտադրանքի կառուցվածքի վերլուծությունը

Արտադրատեսակներ	Միավորի մեծածախ գինը	Արտադրանքի արտադրական ծավալը (հազ. դր.)		Ապրանքային արտադրանք ծրագրային գներով			Ապր. արտադ. փոփոխությունը կառուցվածքի հաշվին (հազ. դր.)
		ծրագիր	փաստ	ծրագիր	փաստային պլան. կառուցվածք	փաստ	
Ա	650	60100	58700	39065	40897	38155	-2742
Բ	720	55600	53200	40052	41910	38304	-3606
Գ	800	30200	35400	24160	25293	28320	+3024
Դ	830	20400	26800	16932	17726	22244	+4518
Ընդամենը	-	166300	174100	12189	125826	127023	+1097

Փաստացի ծրագրային կառուցվածքով սյան թվերը ստացվել են ծրագրային սյան յուրաքանչյուր արտադրատեսակի գինը բազմապատկելով ապրանքային արտադրանքի ծրագրի կատարման գործակցով ամբողջ արտադրանքի համար բնեղեն արտահայտությամբ (հատով)

$$174.100 : 166.300 = 1.046903$$

Եթե արտադրության ծրագիրը լիներ հավասարաչափ կատարված 104.6903%-ով բոլոր արտադրատեսակների համար և չխախտվեր ծրագրավորված կառուցվածքը, ապա արտադրության ընդհանուր ծավալը ծրագրային գծով կկազմեր (1000 դ.):

Փաստացի կառուցվածքով այն ավելին է եղել 1097.4 այսինքն՝ թանկարժեք արտադրատեսակների տեսակարար կշիռն ընդհանուր արտադրանքի ծավալի մեջ ավելացել է: Այս հաշվի հիմքում կարելի է օգտվել շղթայական տեղադրման եղանակից և հաշվարկել գործոնների ազդեցության չափն արտադրանքի ծավալի փոփոխության վրա:

7.2. Արտադրված արտադրանքի որակի վերլուծություն

Կազմակերպությունների (արդյունաբերական) գործունեության հիմնական ցուցանիշներից է համարվում արտադրանքի որակը: Դրա բարձրացումն ապահովում է ոչ միայն արտադրական և նյութական ռեսուրսների տնտեսում, այլ նաև թույլ է տալիս լրիվ բավարել բնակչության պահանջը: Արտադրանքի որակի բարձր մակարդակը նպաստում է արտադրանքի պահանջարկի բարձրացմանը և շահույթի գումարի ավելացմանը ոչ միայն իրացման ծավալի հաշվին, այլ նաև բարձր գների հաշվին: Արտադրանքի որակը մի հասկացություն է, որը բնութագրում է արտադրանքի պարամետրական, շահագործման, սպառողական, տեխնոլոգիական հատկանիշները և երկարակեցության մակարդակը: Տարբերում ենք արտադրանքի որակի ընդհանրացնող անհատական և անուղղակի ցուցանիշները:

Օրինակ, ընդհանրացնող ցուցանիշները բնութագրում են ամբողջ արտադրված արտադրանքի որակը, անկախ նրա գնից և կոչումից.

- Ընդհանուր թողարկման մեջ նոր արտադրանքի տեսակարար կշիռը:
- Առեստավորված և չափստավորված արտադրանքի տեսակարար կշիռը:
- Համաշխարհային ստանդարտներին համապատասխանող արտադրանքի տեսակարար կշիռը:
- Արտահանվող արտադրանքի տեսակարար կշիռը, այդ թվում զարգանում է երկրներում արտահանվող արտադրանքի տեսակարար կշիռը:

Արտադրանքի որակի անհատական ցուցանիշները բնութագրում են իրենց հատկություններից որևէ մեկը:

Օրինակ, օգտակարությունը (կաթի յուղայնությունը, հանքաքարի մեջ երկաթի պարունակությունը, սպիտակուցի պարունակությունը սննդի մեջ և այլն) հուսալիությունը, երկարակեցությունը, տեխնոլոգիական հատկանիշները, որոնք բնութագրում են կոնստրուկտորական և տեխնոլոգիական որոշումների արդյունավետությունը:

Անուղղակի ցուցանիշներից են անորակ արտադրանքի ծավալը, տեսակարար կշիռը, ընդհանուր արտադրանքի մեջ կորուստներից և խտաններից և այլն: Վերլուծության առաջնային խնդիրներից է ուսումնասիրել տվյալ ցուցանիշները, դրանց դինամիկան, ծրագրի կատարումը, փոփոխման պատճառները և այլն: Արտադրանքի որակի ծրագրի կատարման գնահատման համար օգտագործում են տարբեր մեթոդներ:

Բազային մեթոդի գնահատման ելությունը կայանում է արտադրանքի որակի միջին կշռված բալի, նրա որոշման և նրա փաստացի և ծրագրային մակարդակների համեմատման միջոցով, ըստ որակի ծրագրի կատարման, հաշվարկվում է յուրաքանչյուր տեսակի արտադրանքի տեսակարար կշիռը ընդհանուր ծավալի մեջ: Ըստ առաջին ցուցանիշի ծրագրի կատարման գնահատման ժամանակ, յուրաքանչյուր տեսակի փաստացի բաժինը ընդհանուր արտադրանքի ծավալի մեջ համեմատում են ծրագրայինի հետ, իսկ որակի դինամիկայի ուսումնասիրման ժամանակ՝ անցած տարիների հետ: Տեսակայնության միջին գործակիցը կարելի է որոշել երկու եղանակով՝

- Առաջին տեսակի արտադրանքի քանակի հարաբերությունն ընդհանուր քանակին:
- Բոլոր տեսակների արտադրանքի արժեքի հարաբերությունն առաջին տեսակի արտադրանքի հնարավոր արժեքին:

Աղյուսակ 11. Ծրագրային և փաստացի ցուցանիշներ

Արտադրատեսակներ	միավորի գինը	Արտադրանքի թողարկումը (հատ)		Արտադրանքի թողարկման արժեքը (հազար դրամ)			
		ծրագիր	փաստացի	ծրագիր	փաստացի	Առաջին տեսակի գնով	
						ծրագիր	փաստացի
Ա	500	30500	35400	15250	17700	15250	17700

Բ	450	22400	20200	10080	9090	11200	10100
Գ	300	15600	8050	4680	2415	7800	4025
Ընդամենը	-	68500	63650	30010	29205	34250	31825

$$K = \frac{\sum V_i \times \Pi_i}{\Pi_i \times \sum V_i}$$

որտեղ՝

K -ն որակի կամ տեսակայնության գործակիցն է

V_i -ն յուրաքանչյուր տեսակի արտադրանքի քանակն է

Π_i -ն յուրաքանչյուր տեսակի արտադրանքի գինն է

Π₁ -ն առաջին տեսակի (բարձր որակի) արտադրանքի գինն է

Այստեղից տեսակայնության գործակիցն ըստ ծրագրի հավասար է՝

$$\frac{30010}{34250} = 0,876$$

իսկ փաստացին հավասար է՝

$$\frac{29205}{31825} = 0,918$$

ծրագրի կատարումն ըստ որակի հավասար է՝

$$\frac{0,918}{0,876} \times 100\% = 104,8\%$$

Միջին կշռված գինը որոշվում է հետևյալ բանաձևով՝

$$\Pi = \frac{\sum V_i \times \Pi_i}{\sum V_i}$$

Միջին կշռված գինը ծրագրով հավասար է՝

$$\frac{30010000}{68500} = 438$$

իսկ փաստացիով՝

$$\frac{29205000}{63650} = 459$$

իսկ ծրագրի կատարման աստիճանը հավասար է՝

$$\frac{459}{438} \times 100\% = 104,8\%$$

Բացի վերը նշվածից, արտադրանքի որակի ծրագրի կատարումը որոշվում է նաև ըստ ատեստավորված արտադրանքի տեսակարար կշռի, խտանված արտադրանքի և գովազդվող արտադրանքի տեսակարար կշռի: Վերլուծության խնդիրներից է նաև որոշել որակի ազդեցությունը կազմակերպության աշխատանքի արժեքային ցուցանիշների վրա, ապրանքային արտադրանքի թողարկման (ΔΠ), իրացումից հասույթի (ΔB) և շահույթի (ΔΠ):

Հաշվարկները կատարվում են հետևյալ բանաձևերով՝

$$\pm \Delta \Pi = (\Pi_1 - \Pi_0) \times K_1$$

$$\pm \Delta B = (\Pi_1 - \Pi_0) \times V_1$$

$$\pm \Delta \Pi = ((\Pi_1 - \Pi_0) \times V_1) - (C_1 - C_0) \times V_1$$

K₁ -ը թողարկված արտադրանքի քանակն է

V₁ - ն իրացված արտադրանքի քանակն է

C – ն արտադրանքի ինքնարժեքը:

Եթե կազմակերպությունն արտադրանքը թողարկում է ըստ տեսակների, և տեղի է ունեցել տեսակների կառուցվածքային փոփոխություն, ապա սկզբից պետք է հաշվել, թե ինչպես է փոփոխվել միջին կշռված գինը և միջին կշռված ինքնարժեքն արտադրանքի միավորի համար, իսկ հետո՝ վերը նշված բանաձևերով որոշել արտադրանքի թողարկման, հասույթի և իրացումից շահույթի վրա տեսակների կառուցվածքի ազդեցությունը:

Արտադրանքի որակի անուղղակի ցուցանիշ է համարվում խտանը: Այն լինում է ուղղելի և անուղղելի, ներքին (կազմակերպության կողմից հայտնաբերված) և արտաքին (սպառողի կողմից հայտնաբերված): Խտանի թողարկումը բերում է արտադրանքի ինքնարժեքի բարձրացման և շահույթի և շահութաբերության նվազման:

Վերլուծության ժամանակ ուսումնասիրում ենք խտանի դինամիկան բացարձակ գումարով և տեսակարար կշռով ապրանքային արտադրանքի ընդհանուր թողարկման մեջ: Որոշվում են նաև կորուստները խտանից, որից հետո հաշվարկվում է որակի իջեցման և արտադրանքի խտանի պատճառներն ըստ դրանց հայտնաբերման տեղերի և մշակվում են միջոցառումներ խտանը վերացնելու համար:

Արտադրանքի թողարկման որակի իջեցման գլխավոր պատճառներից է հանդիսանում հումքի և նյութերի ցածր որակը, տեխնոլոգիայի և աշխատանքի կազմակերպման ոչ բավարար մակարդակը, աշխատողների որակավորման ոչ բավարար մակարդակը, սարքավորումների անսարք լինելը և կազմակերպչական այլ խնդիրներ:

7.3. Արտադրության համաչափության վերլուծություն

Կազմակերպության տնտեսական գործունեության վերլուծության ժամանակ կարևոր նշանակություն ունի արտադրանքի արտադրության համաչափությունը: Համաչափությունը արտադրանքի հավասարաչափ թողարկումն է արտադրանքի թողարկման և տեսականու ծրագրով նախատեսված գրաֆիկներին համապատասխան: Համաչափ աշխատանքը համարվում է արտադրանքի ժամանակին թողարկման և իրացման հիմնական պայմաններից մեկը:

Անհամաչափությունն ազդում է բոլոր տնտեսական ցուցանիշների վրա՝ իջեցնում է արտադրանքի որակը, ավելացնում է անավարտ արտադրության ծավալը և պատրաստի արտադրանքի գերծրագրային մնացորդները պահեստներում և որպես հետևանք՝ դանդաղում է կապիտալի շրջանառություն, չեն կատարվում պայմանագրային պարտավորությունները և կազմակերպությունը դրա համար մուծում է տուգանքներ արտադրանքի ոչ ժամանակին առաքման համար, ոչ ժամանակին է ստացվում հատույթը, տեղի է ունենում աշխատանքի ֆոնդի գերաժախտ կապված այն բանի հետ, որ անսովոր սկզբին վճարում են աշխատողներին պարապուրդի համար, իսկ անսովոր վերջին արտաժամյա աշխատանքի համար: Այս բոլորը բերում է արտադրանքի ինքնարժեքի բարձրացման, շահույթի նվազման և կազմակերպության ֆինանսական դրության վատացման: Արտադրանքի համաչափության ծրագրի կատարման գնահատման համար օգտագործվում են ուղղակի և անուղղակի ցուցանիշներ:

Ուղղակի ցուցանիշներն են համաչափության գործակիցը, վարիացիայի գործակիցը, անհամաչափության գործակիցը, յուրաքանչյուր տասնորյակի արտադրանքի արտադրության տեսակարար կշիռն ամսական թողարկման մեջ, յուրաքանչյուր ամսվա թողարկած արտադրանքի տեսակարար կշիռը եռամսյակային թողարկման մեջ, յուրաքանչյուր եռամսյակի արտադրված արտադրանքի տեսակարար կշիռը տարեկան արտադրանքի թողարկման ծավալի մեջ հաշվետու ամսվա առաջին տասնորյակի արտադրված արտադրանքի տեսակարար կշիռը նախորդ ամսվա երրորդ տասնորյակի թողարկված ծավալի մեջ:

Անուղղակի ցուցանիշներն են արտաժամյա աշխատանքի վճարը, պարապուրդների վճարը, որոնք տեղի են ունեցել տնտեսավարողների կողմից, կորուստները խոտանից, տույժերի վճարը, որոնք վճարվել են ոչ ժամանակին առաքման համար, անավարտ արտադրության և պահեստներում պատրաստի արտադրանքի գերծրագրի մնացորդների առկայությունը: Ամենատարածված ցուցանիշներից մեկն է համաչափության գործակիցը:

Ըստ այս գործակցի, ծրագրի կատարումն ըստ համաչափության հաշվարկվում է փաստացի թողարկված արտադրանքը, բայց ոչ մեծ ծրագրայինից հարաբերելով ծրագրային թողարկման ծավալի վրա:

$$K = \frac{\sum \Pi_{\text{պլ}} - B}{\sum \Pi_{\text{պլ}}}$$

K- համաչափության գործակիցն է

Π- արտադրանքի թողարկման ծրագրային մեծությունն է

B – թերակատարված թողարկման ծավալն է

Աղյուսակ 12. Արտադրանքի թողարկման համաչափությունն ըստ տասնորյակների

Տասնորյակներ	Արտադրանքի թողարկումն ամսվա ընթացքում (հազար դրամ)		Տեսակարար կշիռը տոկոսներով		Պլանի կատարման գործակից	Արտադրանքի ծավալը ըստ համաչափության (հազար դրամ)
	Պլան	Փաստացի	Պլան	Փաստացի		
I	50000	48500	33.3	32	0.97	48500
II	50000	50600	33.3	33	1.012	50000
III	50000	53400	33.3	35	1.068	50000
Ընդամենը	150000	152500	100	100	1.017	148500

Աղյուսակի տվյալներով համաչափության գործակիցը հավասար է

$$\frac{148500}{150000} = 0.99$$

Վարիացիայի գործակիցը որոշվում է որպես օրվա (տասնորյակի, ամսվա, եռամսյակի) ծրագրային պարտավորություններից միջին քառակուսային շեղման հարաբերությունը միջին օրական (միջին տասնորյակի, միջին ամսական, միջին միջին եռամսյա) արտադրանքի ծրագրային թողարկմանը

$$K_B = \frac{\sqrt{\sum \Delta x^2 / n^2}}{X_{\text{պլ}}}$$

K_B վարիացիայի գործակից

n տասնորյակների թիվ

Δx² քառակուսային շեղում միջին տասնորյակային

X_{պլ} - միջին տասնորյակային առաջադրանքն է ըստ գրաֆիկի կամ ծրագրի

$$K_B = \frac{\sqrt{\sum \Delta x^2 / n^2}}{X_{\text{պլ}}} = \frac{\sqrt{((48.5-50)^2 + (50.6-50)^2 + (53.4-50)^2) : 3}}{50} = 0.04$$

Մեր օրինակում վարիացիայի գործակիցը կազմել է 0,04:

Դա նշանակում է, որ արտադրանքի թողարկումն ըստ տասնօրյակի շեղվել է գրաֆիկից 4%-ով: Որքան քիչ համաչափ է աշխատում կազմակերպությունն, այնքան բարձր է անհամաչափության գործակիցը: Սեր օրինակում այն հավասար է 0,03+0,012+0,068=0,11:

Անհամաչափության ներքին պատճառներն են կազմակերպության ծանր ֆինանսական դրությունը, կազմակերպչատեխնիկական ցածր մակարդակը, արտադրության նյութատեխնիկական մատակարարման, պլանավորման և վերահսկության ցածր մակարդակը: Արտաքին պատճառներն են հումքի և նյութերի ոչ ժամանակին մատակարարումը մատակարարների կողմից, էներգառեսուրսների պակասը ոչ կազմակերպության մեղքով և այլն:

7.4 Արտադրանքի առաքման և իրացման վերլուծություն

Վերլուծության գործընթացում անհրաժեշտ է ուսումնասիրել ոչ միայն ապրանքային արտադրանքի արտադրության ծավալի, այլ նաև նրա իրացման ծավալի փոփոխությունները: Իրացման ծավալից է կախված կազմակերպության ֆինանսական արդյունքների մեծությունը, ֆինանսական դրությունը, վճարունակությունը և այլն:

Արտադրանքի իրացման վերլուծությունը կատարվում է յուրաքանչյուր ամիս, եռամսյակ, տարի: Փաստացի տվյալները համեմատվում են ծրագրայինի հետ, անցած ժամանակաշրջանի հետ, հաշվարկվում է ծրագրի կատարման տոկոսը ծրագրային առաջադրանքից բացարձակ շեղումը, ինչպես նաև աճի և հավելաճի տեմպերը վերլուծվող ժամանակաշրջանի համար: Իրացման ծավալի փոփոխության վրա ազդում են բազմաթիվ գործոններ.

- Արտադրանքի առաքման փոփոխությունը:
- Տարվա սկզբին պատրաստի արտադրանքի մնացորդի փոփոխությունը:
- Ապրանքային արտադրանքի թողարկման փոփոխությունը:
- Տարվա վերջին պատրաստի արտադրանքի մնացորդների փոփոխությունը:
- Բարձրված ապրանքների մնացորդների փոփոխությունը վերլուծվող ժամանակաշրջանի սկզբին և վերջում:
- Վճարման ժամկետները, որոնք դեռ չեն եկել:
- Ժամանակին չվճարումները գնորդների կողմից:
- Գնորդների մոտ պատասխանատու պահպանության դրված ապրանքները

Եթե կազմակերպության հասույթը որոշվում է ապրանքային արտադրանքի առաքմամբ, ապա ապրանքային արտադրանքի հաշվեկշիռն ունի հետևյալ տեսքը:

$$Oսկ + \Pi = P + Oվ$$

որտեղ՝

Oսկ -և Oվ -ապրանքային արտադրանքի մնացորդներն են ամսվա սկզբին և վերջին

\Pi -ն թողրկված արտադրանքի ծավալը

P -ն իրացված արտադրանքն է

Այստեղից իրացման ծավալը հավասար է՝

$$P = Oսկ + \Pi - Oվ$$

Եթե հասույթը որոշվում է բարձրված արտադրանքի վճարումից հետո, ապա ապրանքային արտադրանքի հաշվեկշիռը կունենա հետևյալ տեսքը՝

$$Oսկ + \Pi + Tսկ = P + Oվ + Tվ$$

որտեղ՝

Tսկ և Tվ բարձրված ապրանքների մնացորդն է ամսվա սկզբին և վերջին, այստեղից՝ իրացման ծավալը՝

$$P + Oսկ + \Pi + Tսկ = Oվ + Tվ$$

Oգտագործելով գործոնային վերլուծության եղանակները, կարող ենք որոշել իրացման ծավալի վրա ազդող գործոնների ազդեցության չափերը:

7.5. Արտադրանքի իրացման վերլուծությունն ըստ պայմանագրային

պարտավորությունների

Արտադրանքի իրացման վերլուծությունը սերտորեն կապված է արտադրանքի առաքման պայմանագրային պարտավորությունների կատարման վերլուծության հետ: Ըստ պայմանագրերի, ծրագրի թերակատարումը բերում է հասույթի և շահույթի նվազման, տուգանքների վճարման: Բացի դրանից նրցակցության ժամանակ կազմակերպությունը կարող է կորցնել արտադրանքի իրացման շուկաներ, որը կբերի արտադրության դադարեցման:

Վերլուծության ժամանակ որոշվում է արտադրանքի առաքման ծրագրի կատարումն ամսվա համար աճող գումարներով ամբողջությամբ կազմակերպության համար և առանձին պատվիրատուների և արտադրանքի տեսակների կտրվածքով: Բացահայտվում են թերակատարման պատճառները և տրվում է պայմանագրային պարտավորությունների կատարման գնահատականը:

Պայմանագրային պարտավորությունների կատարման տոկոսը հաշվարկվում է պայմանագրային պարտավորագրի առաքման ծրագրային ծավալի և նրա թերակատարման տարբերության հարաբերությամբ ծրագրային ծավալի:

$$K = \frac{O\Pi \text{ պլ}-O\Pi \text{ թերակ.}}{O\Pi \text{ պլ}}$$

Աղյուսակ 13. Պայմանագրային պարտավորությունների կատարման վերլուծությունը (հազար դրամ)

Արտադրատեսակներ	Պատվիրատուներ	Պլանը ըստ պայմանագրի	Փաստացի առաքված արտադրանք	Չառաքված արտադրանք	Ծավալը ծրագրի սահմաններում
Ա	1	600	680		600
	2	600	550	-50	550
	3	500	600		500
Բ	1	400	400		400
	2	1300	1150	-150	1150
Ընդամենը		3400	3380	-200	3200

Բերված հաշվարկը ցույց է տալիս, որ հաշվետու ամսում, ըստ պայմանագրի, թերի է առաքվել 200.000 դրամի արտադրանք կամ թերակատարումը կազմել է 6%:

Արտադրանքի թերի առաքումը բացասական ազդեցություն է ունենում ոչ միայն տվյալ կազմակերպության գործունեության վրա, այլ նաև առևտրային կազմակերպությունների միջնորդ և տրանսպորտային կազմակերպությունների վրա:

Վերլուծության ժամանակ պետք է ուշադրություն դարձնել չվճարված արտադրանքի մնացորդների ավելացման վրա: Ժամկետանց վճարումները վատացնում են կազմակերպության ֆինանսական վիճակը, դրա համար էլ պետք է միջոցառումներ կազմակերպել դրանք վերացնելու համար:

Վերլուծության հաջորդ փուլում ուսումնասիրում ենք ապրանքային արտադրանքի թողարկման և իրացման վրա տարբեր գործոնների ազդեցությունները: Արդյունաբերական ձեռնարկություններում ապրանքային արտադրանքի ծավալը կախված է բազմաթիվ գործոններից:

Ըստ տնտեսական բնույթի դրանք կարելի է միավորել 3 խմբի մեջ՝

- Ձեռնարկության ապահովումն աշխատանքային ռեսուրսներով և դրանց օգտագործման արդյունավետությունը:
- Ձեռնարկության ապահովումը հիմնական ֆոնդերով, այդ թվում մեքենաներով և սարքավորումներով և դրանց օգտագործման արդյունավետությունը :
- Ձեռնարկության ապահովումը հումքով և նյութերով և դրանց օգտագործման արդյունավետությունը:

Ինքնաստուգման հարցեր

1. Ինչպես է կատարվում արտադրանքի կառուցվածքի վերլուծությունը:
2. Ի՞նչն է կարևորվում արտադրանքի որակի վերլուծության ընթացքում:
3. Ի՞նչ խնդիրներ են քննարկվում ըստ պայմանագրային պարտավորությունների իրացման վերլուծության դեպքում:

ԳԼՈՒԽ 8. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերլուծության մասին, ներկայացնել աշխատանքի արտադրողականության, աշխատատարության և աշխատավարձի ֆոնդի վերլուծության առանձնահատկությունները:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելով ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերլուծությունը, առանձնացնել աշխատանքի արտադրողականության, աշխատատարության և աշխատավարձի ֆոնդի վերլուծության հատկանիշները:

8.1. Կազմակերպության աշխատանքային ռեսուրսներով ապահովման վերլուծություն

Աշխատանքային ռեսուրսներին է վերաբերում բնակչության այն մասը, որն օժտված է անհրաժեշտ ֆիզիկական տվյալներով, գիտելիքներով և աշխատանքային ունակությամբ՝ համապատասխան ճյուղում աշխատելու համար: Կազմակերպության բավարար ապահովումն անհրաժեշտ աշխատանքային ռեսուրսներով, դրանց ռացիոնալ օգտագործումը, աշխատանքի արտադրողականության բարձր մակարդակը մեծ նշանակություն ունի արտադրանքի ծավալի և արտադրության արդյունավետության բարձրացման համար: Վերլուծության հիմնական խնդիրներն են՝

- Կազմակերպության և նրա կառուցվածքային ստորաբաժանումների, ինչպես նաև ըստ կատեգորիաների և մասնագիտության, աշխատանքային ռեսուրսներով ապահովվածության գնահատումը:
- Կադրերի հոսունության ցուցանիշների որոշումը և ուսումնասիրումը:
- Աշխատանքային ռեսուրսների պահուստների համեմատումն առավել լրիվ և արդյունավետ օգտագործման համար:

Տեղեկատվական աղբյուրներն են համարվում կազմակերպության բիզնես ծրագիրը, վիճակագրական հաշվետվությունն աշխատանքի մասին, հաշվետվությունն աշխատուժի շարժի, աշխատանքային տեղերի մասին, հաշվետվություն կառավարչական ապարատում աշխատողների քանակի և աշխատավարձի վճարման մասին, հաստիքացուցակի հաշվառման տվյալները: Կազմակերպության ապահովումն աշխատանքային ռեսուրսներով գնահատվում է աշխատողների փաստացի քանակն ըստ կատեգորիաների և մասնագիտությունների համեմատելով ծրագրային պահանջի հետ:

Անհրաժեշտ է վերլուծել նաև աշխատանքային ռեսուրսների որակական կազմն ըստ կատեգորիաների և տարակարգերի: Աշխատողների որակավորման գնահատման համար օգտագործվում են միջին տարիֆային տարակարգերը, որոնք հաշվարկվում է միջին կշռված թվաբանականով.

$$T_p = \frac{\sum TP}{\sum P}$$

T_p - միջին տարիքային դրույքն է

P - աշխատողների քանակը

T - տարիֆային դրույքը

Եթե աշխատողների միջին տարիֆային տարակարգը ցածր է ծրագրայինից, ապա արդյունքը կարող է լինել ավելի ցածր որակը:

Եթե աշխատողների միջին տարակարգը բարձր է աշխատանքի միջին տարակարգից, ապա աշխատողների վճարները պետք է բարձրացնել ավելի որակյալ աշխատանքի համար: Կառավարման ապարատը պետք է ստուգի յուրաքանչյուր պաշտոն զբաղեցնող աշխատողի կրթական մակարդակը և զբաղվի կադրերի հավաքմամբ, նրանց նախապատրաստմամբ և որակավորման բարձրացման հարցերով: Աշխատողների որակավորման մակարդակը էապես կապված է աշխատանքային ստաժի, կրթության հետ: Այդ նպատակով, վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է աշխատողների կառուցվածքի փոփոխությունն ըստ տարիքի, ստաժի, կրթության: Աշխատուժի շարժի բնութագրման համար հաշվարկվում և վերլուծվում են հետևյալ ցուցանիշները.

- Աշխատանքի ընդունվածների շրջանառության գործակիցը, որը հավասար է աշխատանքի ընդունվածների թվի հարաբերությանն անձնակազմի միջին ցուցակի թվաքանակին:
- Աշխատանքից դուրս եկածների շրջանառության գործակիցը, որը հավասար է աշխատանքից դուրս եկածների թվի հարաբերությանն անձնակազմի միջին ցուցակի թվաքանակին:
- Կադրերի հոսունության գործակիցը, որը հավասար է ըստ սեփական կամքի և աշխատողների կարգազանցության հետևանքով թվի հարաբերությանն անձնակազմի միջին ցուցակային թվաքանակին:
- Մշտական անձնակազմի գործակիցը, որը հավասար է ամբողջ տարին աշխատողների թվի հարաբերությանն անձնակազմի միջին ցուցակային թվաքանակին:

Անհրաժեշտ է ուսումնասիրել աշխատողների աշխատանքից ազատման պատճառները: Կազմակերպության աշխատանքային ռեսուրսներով ապահովման վերլուծությունը պետք է կատարել կազմակերպության սոցիալական զարգացման ծրագրի կատարման վերլուծության սերտ կապի մեջ:

Աշխատանքային ռեսուրսների լարվածությունը կարելի է թեթևացնել աշխատուժի առավել լրիվ օգտագործմամբ, աշխատողների աշխատանքի արտադրողականության բարձրացման, արտադրական գործընթացների համալիր մեքենայացման միջոցով, ավտոմատացման նոր տեխնիկայի ներդրմամբ: Վերլուծության ընթացքում պետք է գտնվեն պահուստներ աշխատանքային ռեսուրսների բավարարման համար: Եթե կազմակերպությունը ընդլայնում է իր գործունեությունը, ավելացնում է արտադրական հզորությունները, ստեղծում է նոր աշխատատեղեր, ապա ստեղծվում է աշխատանքային ռեսուրսների լրացուցիչ պահանջ ըստ մասնագիտությունների:

Արտադրանքի թողարկման ավելացման պահուստներն ի հաշիվ լրացուցիչ աշխատանքային տեղերի, որոշվում են աշխատանքային տեղերի հավելաճը բազմապատկելով աշխատողի կողմից թողարկվող միջին տարեկան փաստացի արտադրանքով:

8.2. Աշխատանքային ռեսուրսների օգտագործման վերլուծություն

Աշխատանքային ռեսուրսների օգտագործումը կարելի է գնահատել ըստ մեկ աշխատողի աշխատած ժամերի՝ վերլուծվող ժամանակաշրջանում, ինչպես նաև օգտագործելով աշխատածամանակի ֆոնդը: Այսպիսի վերլուծությունը կատարվում է ըստ աշխատողների առանձին կատեգորիաների, ըստ արտադրական ստորաբաժանումների: Աշխատածամանակի ֆոնդը կապված է աշխատողների թվաքանակի հետ, մեկ աշխատողի կողմից տարվա ընթացքում աշխատուժի օրերի թվից և աշխատանքային օրվա միջին տևողությունից:

$$\Phi P = P * D * \Pi$$

որտեղ՝

ΦP - աշխատածամանակի ֆոնդ

P - աշխատածամանակը օրերով

D - օրվա տևողությունը

Π - աշխատողների թվաքանակ

Եթե 1 աշխատողը փաստացի աշխատել է ավելի քիչ օրեր և ժամեր, քան սահմանված է եղել ծրագրով, ապա կարելի է որոշել աշխատածամանակի գերծրագրային կորուստներն ամբողջ օրվա կտրվածքով շրթայական տեղադրումների եղանակով:

8.3. Աշխատանքի արտադրողականության վերլուծություն

Աշխատանքի արտադրողականության մակարդակը գնահատելու համար օգտագործվում են ընդհանրացնող, մասնավոր և օժանդակ ցուցանիշներ: Ընդհանրացնող ցուցանիշներն են մեկ բանվորի միջին տարեկան, միջին ամսեկան, միջին օրական և միջին ժամային թողարկված արտադրանքը, և մեկ աշխատողին ընկնող միջին տարեկան թողարկման արտադրանքն արժեքային արտահայտությամբ:

Մասնավոր ցուցանիշներն են՝ որոշակի տեսակի միավոր արտադրանքի արտադրության վրա ծախսած ժամանակը կամ որոշակի տեսակի արտադրանքի թողարկումը բնեղեն արտահայտությամբ՝ մեկ մարդ - օրում կամ մեկ մարդ-ժամում:

Օժանդակ ցուցանիշները բնութագրում են ժամանակի այն ծախսը, որը կատարվում է որոշակի տեսակի արտադրանքի միավորի կատարման վրա կամ էլ միավոր ժամանակում կատարված աշխատանքների ծավալը: Աշխատանքի արտադրողականության ընդհանրացնող ցուցանիշներից է համարվում մեկ աշխատողին ընկնող միջին տարեկան արտադրանքը, որի մեծությունը կախված է ոչ միայն արտադրած արտադրանքից, այլ նաև դրա տեսակարար կշռից ընդհանուր արդյունաբերաարտադրական անձնակազմի մեջ, ինչպես նաև աշխատած օրերի թվից և աշխատանքային օրվա միջին տևողությունից: Մեկ աշխատողի միջին տարեկան արտադրանքը կարելի է ներկայացնել հետևյալ բանաձևի տեսքով.

$$\Gamma B = Y * D * \Pi * CB$$

ΓB - մեկ բանվորի միջին տարեկան արտադրանքն է

Y - բանվորների տեսակարար կշիռն է արդյունաբերաարտադրական անձնակազմի մեջ

D - նրանց կողմից աշխատած տարեկան օրերի թիվն է

Π - աշխատանքային օրվա տևողությունը

CB - մեկ ժամվա արտադրված արտադրանքի ծավալը

Այս գործոնների ազդեցությունն աշխատանքի արտադրողականության փոփոխության վրա կարելի է որոշել գործոնային վերլուծության եղանակներով: Վերլուծվում է միջին ժամային արտադրանքի փոփոխությունը՝ որպես աշխատանքի արտադրության հիմնական ցուցանիշ և գործոն, որից կախված է բանվորների միջին օրական, միջին տարեկան արտադրանքի ծավալը: Այս ցուցանիշի մեծությունը կապված է արտադրանքի աշխատատարության և նրա արժեքային գնահատման հետ: Գործոնների երկրորդ խմբին են վերաբերում արտադրության տեխնիկական մակարդակը, արտադրության կազմակերպումը, աշխատածամանակը և արտադրական ծախսերը՝ կապված խտանի և նրա ուղղման հետ: Երրորդ խմբին են պատկանում այն գործոնները, որոնք կապված են արտադրանքի արտադրական ծավալի փոփոխության հետ արժեքային գնահատմամբ: Այս գործոնների ազդեցությունը միջին ժամային արտադրանքի վրա որոշվում է շրթայական տեղադրման եղանակով: Աշխատանքի արտադրողականության բարձրացմանը կարելի է հասնել ի հաշիվ՝

- աշխատանքի աշխատատարության իջեցման
- արտադրական հզորությունների առավել լրիվ օգտագործման:

8.4. Աշխատանքի աշխատատարության վերլուծություն

Աշխատատարությունը արտադրանքի միավորի կամ ամբողջ արտադրված արտադրանքի վրա աշխատածամանակի ծախսն է: Միավոր արտադրանքի աշխատատարությունը հաշվարկվում է որոշակի արտադրանքի համար աշխատածամանակի ֆոնդի հարաբերությունն այդ տեսակի արտադրանքի քանակի հարաբերակցության միջոցով, բնական կամ բնական պայմանական չափիչներով արտահայտված: Մեկ դրամի աշխատատարությունը հաշվարկվում է հարաբերելով աշխատածամանակի ընդհանուր ֆոնդը արտադրանքի ծավալին արժեքային արտահայտությամբ:

Ստացված ցուցանիշը միջին ժամային արտադրանքի հակադարձ ցուցանիշն է: Արտադրանքի աշխատատարության իջեցումը աշխատանքի արտադրողականության բարձրացման գլխավոր գործոնն է: Աշխատանքի արտադրողականության աճը տեղի է ունենում առաջին հերթին արտադրանքի աշխատատարության իջեցման հաշվին, ինչը տեղի է ունենում հատկապես կազմակերպչական միջոցառումների ծրագրի կատարման հաշվին, գիտության և տեխնիկայի ձեռքբերումների, արտադրության գործընթացների մեքենայացման և ավտոմատացման արտադրության կազմակերպման, գնովի կիսաֆաբրիկատների և կոմպլեկտավորման շինվածքների տեսակարար կշիռների ավելացման հաշվին:

Վերլուծության ժամանակ ուսումնասիրում են աշխատատարության դինամիկան, ծրագրի կատարման աստիճանը, նրա փոփոխման պատճառները և ազդեցությունն աշխատանքի արտադրողականության վրա:

Աղյուսակ 14. Արտադրանքի աշխատատարության դինամիկայի վերլուծություն

Ցուցանիշներ	Անցած տարի	Հաշվետու տարի		Ցուցանիշների մակարդակի աճը տոկոսներով (%)		
		Պլան	Փաստացի	Պլանն անցած տարվա նկ.	Փաստացին անց. տ.	Փաստ. պլ. նկ.
Ապրանքի արտադր. 000 դրամներով	69.200	70.900	73.400	102,46	106,7	105
Բոլոր բանվորների կողմից աշխատած մարդաժամերը	3.144.000	3.198.700	3.105.550	101,74	98,78	97,09
Տեսակարար աշխատատարություն (000դր/ժամ)	45,43	45,1	42,3	99,27	93,1	99,79
Միջին ժամային արտադրանքն արտ. ծավ / ժամ	22,01	22,17	23,64	100,73	107,4	106,63

Աղյուսակից երևում է, որ փաստացի աշխատատարությունը նվազել է և աշխատանքի արտադրողականության հավելաճը բարձրացել է հաշիվ աշխատատարության իջեցման, ինչը կարելի է որոշել հետևյալ բանաձևով.

$$\pm \Delta CB = \frac{\Delta TE * 100}{100 - \Delta TE}$$

ΔCB - միջին ժամային արտադրանք
 ΔTE - աշխատատարության փոփոխություն
 TE - աշխատատարություն

Իմանալով, թե ինչպես փոփոխվեց միջին ժամային արտադրանքը, կարելի է որոշել արտադրանքի աշխատատարության փոփոխությունը.

$$\pm \Delta TE = \frac{\Delta CB * 100}{100 - \Delta CB}$$

Ինչպես տեսնում ենք, արտադրանքի աշխատատարության և աշխատանքի արտադրողականության միջև գոյություն ունի հակադարձ կապ: Այդ պատճառով էլ արտադրանքի տեսակարար աշխատատարությունը կախված է նույն գործոններից, որոնցից կախված է միջին ժամային արտադրանքի փոփոխությունը:

8.5. Աշխատավարձի ֆոնդի վերլուծություն

Կազմակերպությունում աշխատանքային ռեսուրսների օգտագործման, աշխատանքի արտադրողականության վերլուծությունն անպայման պետք է դիտարկել աշխատավարձի հետ սերտ կապի մեջ: Աշխատանքի արտադրողականության աճի հետ ռեալ հնարավորություններ է ստեղծված վճարման մակարդակի բարձրացման համար:

Աշխատանքի վճարման միջոցները պետք է օգտագործել այնպես, որ աշխատանքի արտադրողականության աճի տեմպերն առաջ անցնեն վճարման աճի տեմպերից: Միայն այդ պայմաններում է հնարավորություն ստեղծվում ընդլայնված վերարտադրության տեմպերի աճի համար, այստեղից էլ պարզ է աշխատուժի վճարման միջոցների վերլուծության մեծ նշանակությունը: Վերլուծության ընթացքում պետք է իրականացնել սիստեմատիկ վերահսկողություն աշխատավարձի ֆոնդի օգտագործման ժամանակ:

Աշխատավարձի ֆոնդի օգտագործման վերլուծությունը պետք է սկսել նրա փաստացի մեծության ծրագրայինի հետ համեմատումից, բացարձակ և հարաբերական շեղումների որոշումից:

Բացարձակ շեղումը որոշվում է փաստացի օգտագործված աշխատանքի վճարման միջոցներն աշխատավարձի ծրագրային ֆոնդի հետ համեմատելիս, ինչպես ամբողջ կազմակերպության, այնպես էլ առանձին ստորաբաժանումների և կատեգորիաների համար:

$$\pm \Delta \Phi_{բաց.} = \Phi_{փ} - \Phi_{պլ}$$

Φ - աշխատավարձի ֆոնդն է:

Սակայն աշխատավարձի ֆոնդի բացարձակ շեղումն ամբողջությամբ չի բնութագրում աշխատավարձի ֆոնդի օգտագործումը:

Հարաբերական շեղումը հաշվարկվում է որպես աշխատավարձի ֆոնդի փաստացի հաշվարկված գումարի և ծրագրային ֆոնդի տարբերությամբ բազմապատկած արտադրանքի արտադրական ծրագրի կատարման գործակցով կամ տոկոսներով: Արտադրանքի արտադրական ծրագրի կատարման տոկոսը հաշվարկվում է փաստացի արտադրանքի ծավալը հարաբերելով ծրագրային արտադրանքի ծավալին բազմապատկած 100% -ով:

Պետք է նշել, որ այս կարգավորումը վերաբերում է միայն աշխատավարձի ֆոնդի մի մասին, որը փոփոխվում է արտադրանքի արտադրության ծավալի հետ համամասնորեն: Դա գործավարձով աշխատող բանվորների աշխատավարձերը, պարզատրուումներն են և կառավարչական անձնակազմի արտադրության արդյունքների համար պարգևատրումները, ինչպես նաև աշխատավարձի փոփոխումն մասին բաժին ընկնող արձակուրդայինների գումարը: Աշխատավարձի ֆոնդի հարաբերական շեղումը ներկայացնենք հետևյալ բանաձևով, որտեղ K-ն արտադրության կատարման տոկոսն է՝

$$\pm \Delta \Phi_{հատ} = \Phi_{փ} - (\Phi_{պլհատ} + \frac{\Phi_{պլ փոփ} \times K\%}{100})$$

$$K\% = \frac{K_{\text{տ}}}{K_{\text{սլ}}} \times 100$$

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ դեր է խաղում աշխատանքային ռեսուրսների վերլուծությունը:
2. Ինչպե՞ս է վերլուծվում աշխատանքի արտադրողականությունը:
3. Ի՞նչ կապ կա աշխատանքի արտադրողականության և վճարման հնարավորությունների միջև:

ԳԼՈՒԽ 9. ԿԱՊԻՏԱԼԻ ՉԵՎԱՎՈՐՄԱՆ ԵՎ ՏԵՂԱՔԱՇԽԱՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԹՅՈՒՆ

Թեմայի նպատակն է՝ րուսաբանել ձեռնարկության կապիտալի ձևավորման և տեղաբաշխման վերլուծությունը, ներկայացնել կապիտալի հիմնական աղբյուրները, նրանց առկայության կազմի և դինամիկայի, ինչպես նաև տեղաբաշխման արդյունավետության վերլուծությունը:

Ունակություններ և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ունկնդիրը կկարողանա առանձնացնել կազմակերպության կապիտալի վերլուծության նշանակությունը, խնդիրները և առանձնահատկությունները, ներկայացնել ձեռնարկության կապիտալի ձևավորման աղբյուրները, տեղաբաշխման ուղղությունները:

9.1. Վերլուծության նշանակության խնդիրները եւ տեղեկատվական ապահովումը

Ցանկացած տնտեսական գործունեություն պահանջում է հետևյալ երեք հարցերի պատասխանը.

- ինչպիսի արտադրական պոտենցիալ պետք է տնօրինի տնտեսավորման սուբյեկտը նպատակադրված արդյունքներին հասնելու համար.
- որտեղ գտնել ֆինանսավորման աղբյուրներ եւ ինչպիսին պետք է լինի նրանց օպտիմալ կազմը.
- ինչպես կազմակերպել ֆինանսների կառավարումը, որպեսզի ապահովվի ձեռնարկության ֆինանսական կայունությունն ու մրցունակությունը:

Շուկայական տնտեսության պայմաններում կտրուկ բարձրանում է ֆինանսական ռեսուրսների նշանակությունը: Ձեռնարկությունում տնօրինման տակ գտնվող կապիտալից, կառուցվածքի օպտիմալության աստիճանից, հիմնական և շրջանառու ֆոնդերի խելամիտ բաշխվածությունից է կախված ձեռնարկության ֆինանսական բարեկեցությունը և գործունեության արդյունքները: Այդ իսկ պատճառով կապիտալի ձևավորման և տեղաբաշխման վերլուծությունը ունի բացառիկ կարևոր նշանակություն:


Վերլուծության հիմնական խնդիրներն են .

1. Ձեռնարկության գործունեության ելակետային պայմանների ուսումնասիրում
 2. Հաշվետու ժամանակաշրջանում կապիտալի կառուցվածքում փոփոխությունների սահմանում և իրականացված փոփոխությունների գնահատում
 3. Կապիտալի մեծացման ուղիների հայտնաբերում ,ֆոնդատվության մակարդակի բարձրացման և ձեռնարկության ֆինանսական կայունության ամրապնդում:
- Ձեռնարկության ֆինանսական վիճակի, կապիտալի ձևավորման և տեղաբաշխման վերլուծության համար տեղեկատվության հիմնական աղբյուրներ են ծառայում հաշվետու հաշվապահական հաշվեկշիռ, ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունը, կապիտալի շարժի վերաբերյալ հաշվետվությունը, դրամական հոսքերի շարժի մասին և այլ հաշվետվություններ:

9.2. Կապիտալի հիմնական աղբյուրները, նրա ձևավորման և տեղաբաշխման կարգը

Կապիտալը այն միջոցներն են, որոնց տնօրինում է տնտեսավարող սուբյեկտը՝ շահույթ ստանալու նպատակով գործունեություն իրականացնելու համար: Կապիտալը ձևավորում է սեփական (ներքին) և փոխառու (արտաքին) աղբյուրների հաշվին:

Ֆինանսավորման հիմնական աղբյուրը հանդիսանում է սեփական կապիտալը, որի կազմը կարելի է ներկայացնել հետևյալ կերպ.



Նկար 1. Ձեռնարկության սեփական կապիտալի կազմը


Կանոնադիր կապիտալը հիմնադիրների կողմից գործունեության ապահովման նպատակով ներդրված գումարն է:

Լրացուցիչ կապիտալը ձևավորվում է գույքի վերագնահատման կամ արժեթղթերի անվանական արժեքից բարձր գնով վաճառքի դեպքում:

Կուտակյալ ֆոնդը ստեղծվում է ձեռնարկության շահույթի, ամորտիզացիայի հատկացումների և գույքի վաճառքի հաշվին:


Նպատակային ֆինանսավորումը անվերադարձ ստացված արժեքներն են, բյուջետային հատկացումները, գրանտները:

Փոխառու կապիտալը (նկ. 4.2.) դա բանկերի և ֆինանսական կազմակերպությունների վարկերն են, փոխառությունները, կրեդիտորական պարտավորությունը, լիզինգը, առևտրային թղթերը և այլն: Այն բաժանվում է երկարաժամկետ (մեկ տարուց ավել) և կարճաժամկետ (մինչև մեկ տարի):



Նկար 2. Փոխառու կապիտալի դասակարգումը

Կապիտալն օգտագործվում է հիմնական միջոցների, ոչ նյութական ակտիվների ձեռքբերման և վարձակալման, արտադրանքի և ոչ արտադրական նշանակության տարածքների շինարարության, հումքի, նյութերի, վառելիքի, էներգիայի ձեռքբերման, աշխատանքի վարձատրության, հարկերի վճարման, վարկերի տոկոսագումարների, դիվիդենդների վճարման և այլնի համար:



Նկար 3. Ձեռնարկության կապիտալի վերաբաշխումը

Կապիտալի արդյունավետ տեղաբաշխումից է կախված ձեռնարկության արդյունավետ գործունեությունը: Այդ պատճառով կապիտալի ձևավորման և տեղաբաշխման աղբյուրների վերլուծությունն ունի կարևոր նշանակություն ձեռնարկության ֆինանսական կայունության գնահատման գործում: Որպես

տեղեկատվության հիմնական աղբյուր նման վերլուծության անցկացման համար հանդիսանում է հաշվապահական հաշվեկշիռը:

9.3. Ձեռնարկության կապիտալի ձևավորման աղբյուրների առկայության կազմի և դինամիկայի վերլուծություն

Ձեռնարկության կապիտալի փոփոխությունը կարելի է որոշել (ի հայտ բերել) հաշվեկշռի պասիվային մասում բերվում է տվյալների հիման վրա: Այդ տվյալների հիման վրա կարելի է որոշել թե ինչպես են փոփոխվել սեփական և փոխառու կապիտալների կառուցվածքը, ինչպես կարճաժամկետ և երկարաժամկետ միջոցներ են փոխառնվել , այսինքն հաշվեկշռի պասիվային մասը ցույց է տալիս թե որտեղից են առաջացել կամ ձեռք բերվել միջոցները և ում նկատմամբ է ձեռնարկությունը պարտավորություն կրում այդ միջոցների գծով:

Փոխառու միջոցների, օր. կրեդիտորական պարտքերի ներգրավումը տնտեսական գործունեության մեջ համարվում է նորմալ երևույթ: Դա օժանդակում է ձեռնարկության ֆինանսական վիճակի ժամանակավոր բարելավմանը, այն պայմանով, որ միջոցները չսառեցվեն և ժամանակին ետ վերադարձվեն: Այդ իսկ պատճառով վերլուծության պրոցեսում անհրաժեշտ է ուսումնասիրել կրեդիտորական պարտքերի ժամկետային կառուցվածքը՝ ժամկետանց պարտքերից, նախատեսված տույժերից և տուգանքներից խուսափելու համար:

Կրեդիտորական պարտքերի օգտագործման միջին ժամկետայնությունը (կ₀) հաշվարկվում է հետևյալ ձևով.

$$k_0 = \frac{\text{կրեդիտորական պարտքի միջին մնացորդ} \times \text{ժամանակաշրջանի օրեր (360 օր)}}{\text{կրեդիտորների հետ հաշվարկի գծով դեբետային շրջանառություն}}$$

Օրինակ՝

	Նախորդ տարի	Ընթացիկ տարի
Կրեդիտորական պարտքի միջին մնացորդ	7500	9000
Կրեդիտների հետ հաշվարկի գծով դեբետային շրջանառություն	90000	115700
Կրեդիտորական պարտքի օգտագործման ժամանակաշրջան (օր)	30	28

Կրեդիտորական պարտքի վերլուծության ժամանակ պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ այն միաժամանակ հանդիսանում նաև պարտքի ծածկման աղբյուր: Այդ իսկ պատճառով կարևոր է դեբիտորական և կրեդիտորական պարտքերի գումարների համեմատումը: Եթե դեբիտորական պարտավորությունը գերազանցում է կրեդիտորական պարտավորությանը, ապա նշանակում է, որ ձեռնարկության սեփական կապիտալը ձևափոխվում է դեբիտորական պարտավորության: Եթե կրեդիտորական պարտավորությունը գերազանցում է դեբիտորական պարտավորությանը 2 և ավելի անգամ, դա նշանակում է, որ ձեռնարկության ֆինանսական վիճակն անկայուն է:

9.4. Ձեռնարկության կապիտալի տեղախաշխման վերլուծություն

Ձեռնարկության կապիտալի տեղաբաշխման մասին տեղեկատվությունը արտացոլված է հաշվեկշռի ակտիվային մասում:

Հաշվեկշռի ակտիվային մասի հոդվածների խմբավորման հիմնական սկզբունքը նրանց իրացվելիության աստիճանն է: Ակտիվների վերլուծության պրոցեսում առաջնահերթ պետք է ուսումնասիրել նրանց կազմի և կառուցվածքի փոփոխությունները:

Օր. եթե դրամական ակտիվների գերազանցում են դրամական պասիվներին, ապա գների աճի և դրամի գնողունակության անկման դեպքում ձեռնարկությունը կկրի ֆինանսական կորուստներ՝ ակտիվների արժեզրկման պատճառով: Եվ հակառակը, եթե դրամական պասիվների գումարը գերազանցում է դրամական ակտիվներին, ապա ինֆլյացիայի պատճառով դեպքում ձեռնարկության շահույթն աճում է: Կրած վնասի կամ օգուտի մեծությունը կարելի է հաշվել հետևյալ բանաձևով.

$$\Delta KL = (M\Pi H - MAH) \times I_k / I_m + (M\Pi K - MAK) \times I_k / I_c - (M\Pi K - MAK)$$

որտեղ ΔKL - կապիտալի գումարի փոփոխություն (վնաս կամ օգուտ)

MAH, MAK - դրամական ակտիվների վերլուծման ժամանակաշրջանի սկզբում և վերջում

$M\Pi H, M\Pi K$ - դրամական պասիվների վերլուծման ժամանակաշրջանի սկզբում և վերջում

I_H, I_K, I_C - ինֆլյացիան վերլուծման ժամանակաշրջանի սկզբում, վերջում և ժամանակաշրջանի միջինը

Օրինակ՝

	Տարվա սկիզբ	Տարվա վերջ
Ինֆլյացիա %	2,5	3,0
Դրամական ակտիվներ մլն.դրամ	16355	20855
Դրամական պասիվներ մլն.դրամ	20700	27300

$$\Delta KL = (20700 - 16355) \times 3 / 2.5 + (27300 - 20855) \times 3 / 2.6 - (27300 - 20855) = 6205 \text{ մլն. դրամ}$$

Այսպիսով դրամական պասիվների ավելացման պատճառով ձեռնարկությունը ստացել է 6205 մլն. դրամ լրացուցիչ շահույթ:

Ինքնաստուգման հարցեր

1. Ի՞նչ նշանակություն ունի ձեռնարկության կապիտալի վերլուծությունը:
2. Ինչպիսի՞ աղբյուրների հաշվին է ձևավորվում ձեռնարկության կապիտալը:
3. Ի՞նչպես է կատարվում ձեռնարկության կապիտալի տեղաբաշխումը և ինչպե՞ս է կատարվում տեղաբաշխման վերլուծությունը:

ԳԼՈՒԽ 10. ՀԻՄՆԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՖՈՆԴԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ

Թեմայի նպատակն է՝ լուսաբանել հիմնական արտադրական ֆոնդերի վերլուծությունը, ներկայացնել կազմակերպության տեխնիկական մակարդակի զարգացման, հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության, սարքավորումների և արտադրական հզորությունների վերլուծությունը:

Ունակություններ և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել հիմնական արտադրական ֆոնդերի վերլուծությունը, առանձնացնել կազմակերպության տեխնիկական մակարդակի զարգացման, հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության, սարքավորումների և արտադրական հզորությունների վերլուծության առանձնահատկությունները:

10.1. Կազմակերպության տեխնիկական մակարդակի զարգացման վերլուծություն

Արդյունաբերական կազմակերպություններում արդյունաբերական արդյունավետության բարձրացման գլխավոր գործոններից է համարվում անհրաժեշտ քանակով հիմնական ֆոնդերի ապահովվածությունը և դրանց առավել լրիվ օգտագործումը: Վերլուծության խնդիրներն են՝

- որոշել կազմակերպության և նրա ստորաբաժանումների հիմնական ֆոնդերով ապահովվածությունը և նրանց օգտագործման մակարդակը ընդհանրացնող և մասնակի ցուցանիշներով գնահատում, ինչպես նաև դրանց փոփոխման պատճառների հայտնաբերումը
- հաշվարկել հիմնական ֆոնդերի օգտագործման ազդեցությունն արտադրանքի արտադրության ծավալի և այլ ցուցանիշների վրա
- ուսումնասիրել կազմակերպության արտադրական հզորությունների և սարքավորումների օգտագործման աստիճանը
- հայտնաբերել պահուստներ հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության բարձրացման ուղղությամբ:

Տեղեկատվական աղբյուրներ են համարվում կազմակերպության բիզնես ծրագիրը, հաշվապահական հաշվառման հաշվետվության ձև N1 հաշվեկշիռը, ձև N5 ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ, տեխնիկական զարգացման ծրագիրը, չտեղակայված սարքավորումների մասին հաշվետվությունները, զույթագրման ակտերը, հիմնական ֆոնդերի օբյեկտների, մուտքի և շարժի, ինչպես նաև կապիտալ ներդրումների օգտագործման ծրագրի կատարման հաշվետվությունը, հիմնական միջոցների հաշվառման քարտերը, անձնագրերը:

Վերլուծությունը սկսենք հիմնական միջոցների ծավալի, դրանց դինամիկայի և կառուցվածքի ուսումնասիրումից:

Կազմակերպության ֆոնդերը բաժանված են արդյունաբերաարտադրական և ոչ արդյունաբերաարտադրականի, ինչպես նաև ոչ արտադրական նշանակության ֆոնդերի: Կազմակերպության արտադրական հզորությունները որոշում են արդյունաբերաարտադրական ֆոնդերը: Բացի դրանից, ֆոնդերն ընդունված է բաժանել ակտիվ մասի (մեքենաներ, սարքավորումներ, գործիքներ) և պասիվ մասի (շենքեր, կառույցներ, շինություններ):

Աղյուսակ 15. Հիմնական ֆոնդերի կազմը, կառուցվածքը և շարժը

Հիմնական միջոցների խմբերը	Տարվա սկզբին		Ստացվել է տարվա ընթացքում		Դուրս է գրվել տարվա ընթացքում		Տարվա վերջին	
	1000 դրամ	տես. կշիռը %	1000 դրամ	տես. կշիռը %	1000 դրամ	տես. կշիռը %	1000 դրամ	տես. կշիռը %
Արդյունաբերաարտադրական ֆոնդեր	15000	90.9	2000	87	1000	62.5	16000	93
Ոչ արտադրական հիմնական ֆոնդեր	1500	9.1	300	23	600	37.5	1200	7
Ընդամենը հիմնական ֆոնդ	16500	100	2300	100	1600	100	17200	100
Այդ թվում ակտիվ մասի	9000	54.5	1800	78.3	800	50	10000	58

Աղյուսակի տվյալները ցույց են տալիս, որ հաշվետու ժամանակաշրջանում տեղի են ունեցել նշանակալի փոփոխություններ, հիմնական ֆոնդերի արժեքն աճել է 700.000 դրամով կամ 4,2 % -ով, այդ թվում հիմնական արտադրական ֆոնդերը 1,000,000 դրամով կամ 6,7% -ով: Ավելացել է հիմնական արտադրական ֆոնդերի տեսակարար կշիռը ընդհանուր ֆոնդերի մեջ 1,07%-ով և համապատասխանաբար նվազել է ոչ արտադրական ֆոնդերի տեսակարար կշիռը: Չգալիորեն ավելացել է ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշիռը՝ 54,5 -ից դարձել է 58, որը գնահատվում է դրական: Կարևոր նշանակություն ունի հիմնական արտադրական ֆոնդերի շարժի և տեխնիկական վիճակի վերլուծությունը, դրա համար հաշվարկենք հետևյալ ցուցանիշները.

1. **Նորացման գործակիցը**, որը հավասար է նոր ստացված հիմնական ֆոնդերի արժեքը հարաբերած հիմնական միջոցների արժեքին տարվա վերջում.

$$K_1 = \frac{2000}{16000} = 0.125$$

2. **Դուրսգրման գործակիցը** հավասար է դուրս գրված ֆոնդերի հիմնական արժեքը հարաբերած հիմնական ֆոնդի արժեքին տարվա սկզբին.

$$= \frac{1000}{16000} = 0.067$$

$$K_2 = \frac{1000}{15000} = 0.067$$

3. **Հավելածի գործակիցը** հավասար է հիմնական արտադրաֆոնդի հավելածի գումարը հարաբերած հիմնական արտադրական ֆոնդի սկզբնական արժեքին.

$$K_3 = \frac{2000 - 1000}{15000} = 0.067$$

4. **Մաշվածքի գործակիցը** հավասար է հիմնական արտադրական ֆոնդերի մաշվածքի գումարը հարաբերած հիմնական արտադրական ֆոնդերի սկզբնական արժեքին.

$$K_4 = \frac{\text{հիմն. արտ. ֆ. մաշ. գումար}}{\text{հիմն. արտ. ֆոնդ. սկզբն. արժեք}}$$

5. **Պիտանելիության գործակիցը.** Գնահատվում է ծրագրի կատարումն ըստ նոր տեխնիկայի ներդրման, նոր օբյեկտների գործունեության մեջ ներդրելու և հիմնական միջոցների նորոգման:

$$K_5 = \frac{\text{հիմն. արտ. ֆոնդերի մնացորդային արժեք}}{\text{հիմն. արտ. ֆոնդի սկզբն. արժեք}} = \frac{\text{հիմն. արտ. ֆոնդ. սկզբն. արժեք} - \text{մաշվ. գումար}}{\text{սկզբնական արժեք}}$$

Որոշվում է պրոգրեսիվ մեքենասարքավորումների տեսակարար կշիռն ընդհանուր մեքենաների մեջ և ավտոմատացված մեքենասարքավորումների տեսակարար կշիռն ընդհանուր սարքավորումների մեջ: Որոշվում են նաև հիմնական ֆոնդերն ըստ տարիքային կազմի և բարոյական մաշվածության: Այն վերլուծելու համար պետք է հիմնական ֆոնդերը խմբավորել ըստ տարիքային կազմի և բարոյական մաշվածության: Այն վերլուծելու համար պետք է հիմնական ֆոնդերը խմբավորել ըստ տարիքային կազմի (մինչև 1 տարի, 1-ից 5, 5-ից 10, 10-ից 20, 20-ից ավելի): Բանվորական մեքենաների, սարքավորումների, գործիքների վիճակը բնութագրելու համար օգտագործում ենք խմբավորումը ըստ տեխնիկական պիտանելիության:

Վերլուծության հաջորդ խնդիրը կազմակերպության հիմնական արտադրական ֆոնդերով զբաղվածության վերլուծությունն է մեքենաներով, սարքավորումներով, շինությունների բացարձակ ապահովվածությունը որոշվում է նրանց փաստացի արժեքից հանած ծրագրով նախատեսվածը, իսկ հարաբերական ապահովվածությունը որոշվում է հիմնական ֆոնդերի փաստացի արժեքից հանած նրանց ծրագրային արժեքը վերահաշվարկված արտադրանքի արտադրական ծրագրի կատարման աստիճանով:

$$\Phi = \Phi_{\text{փ}} - \Phi_{\text{պ}}$$

$$\pm \Delta \Phi_{\text{հաս}} = \Phi_{\text{փ}} - \frac{\Phi_{\text{պ}} \times K}{100}$$

$$K \% = \frac{\Pi_{\text{փ}}}{\Pi_{\text{պ}}}$$

Կազմակերպության հիմնական արտադրական ֆոնդերով ապահովվածության աստիճանը բնութագրող ցուցանիշներից է համարվում աշխատանքի ֆոնդազինվածությունը և տեխնիկական զինվածությունը: Աշխատանքի ընդհանուր ֆոնդազինվածության ցուցանիշը հաշվարկվում է արդյունաբերաարտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեքը հարաբերած ամենամեծ հերթափոխում աշխատող բանվորների միջին ցուցակային թվաքանակին (հաշվի է առնվում, որ մյուս հերթափոխում նույնպես օգտագործվում են նույն միջոցները):

$$\Phi_{\text{զին}} = \frac{\Phi}{R_{\text{հերթ.}}}$$

որտեղ՝ Φ ֆոնդերի արժեքը

$R_{\text{հերթ.}}$ բանվորների միջին ցուցակային թիվն ամենամեծ հերթափոխում

Աշխատանքի տեխնիկական զինվածության մակարդակը որոշվում է արտադրական սարքավորումների արժեքը հարաբերած ամենամեծ հերթափոխում աշխատող բանվորների միջին ցուցակային թվաքանակին:

$$\Phi_{\text{տ.զ.}} = \frac{O}{r}$$

$\Phi_{\text{տ.զ.}}$ տեխնիկական զինվածություն

O = սարքավորումներ

10.2 Հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության վերլուծություն

Հիմնական միջոցների օգտագործման արդյունավետության ցուցանիշներից է համարվում ֆոնդահատույցը, որը որոշվում է՝

$$\text{Ֆոնդահատույցը} = \frac{\text{Արտադրական ծավալը բնութագրող որևէ ցուցանիշ}}{\text{Հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեք}}$$

$$F_h = \frac{\Pi}{\Phi}$$

F_h - ֆոնդահատույց

Π - արտադրական ծավալը բնութագրող որևէ ցուցանիշ

$$\text{Ֆոնդատվությունը} = \text{Հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեք}$$

արտադրանքի ծավալ

$$F_h = \frac{\Phi}{\Pi}$$

$$\text{ֆոնդերի շահութաբերությունը} = \frac{\text{շահույթ}}{\text{Հիմնական արտադրական ֆոնդերի միջին տարեկան արժեք}}$$

$$P = \frac{\Pi P}{\Phi}$$

Վերլուծության ժամանակ ուսումնասիրվում է նշված ցուցանիշների ծրագրի կատարման աստիճանը, դինամիկան և կատարվում են միջտնտեսական համեմատություններ:

Հիմնական ֆոնդերի արդյունավետության ֆոնդահատույցի ցուցանիշն ավելի խորը վերլուծելու համար պետք է ուսումնասիրել բոլոր հիմնական ֆոնդերը: Ֆոնդահատույցի մակարդակի փոփոխման վրա ազդում են մի շարք գործոններ, դրանք են.

1. ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդահատույցը
2. ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշռի փոփոխությունը
3. սարքավորումների աշխատաժամանակի փոփոխությունը
4. սարքավորումների կառուցվածքի փոփոխությունը
5. սարքավորումների արտադրած արտադրանքի փոփոխությունը
6. շուրջօրյա պարապուրդներն
7. հերթափոխության գործակիցը
8. հերթափոխային պարապուրդը
9. նոր սարքավորումների շահագործումը
10. գիտատեխնիկական առաջադիմական միջոցառումների ներդրումն արտադրության տեխնոլոգիայի և կազմակերպության կատարելագործման համար
11. սոցիալական գործոններ

Աղյուսակ 16. Տվյալներ ֆոնդահատույցի վերլուծության համար

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Շեղումը
1. Արտադրանքի թողարման ծավալը	69.000	73.400	+4400
2. Միջին տարեկան արժեքը			
հիմնական արտադրական ֆոնդերի	8600	9200	+600
ակտիվ մասի	6200	7000	+800
միավոր սարքավորման միջին գինը	110.7	116.7	+6
3. ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշիռը	0.72	0.76	+0.04
4. ֆոնդահատույց	8.02	7.98	-0.04
5. ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդահատույց	11.13	10.49	-0.64
6. Տեխնոլոգիական սարքավորումների միջին տարեկան քանակը	56	60	+4
7. Սարքավորումների աշխատ. ժամանակը տարվա ընթացքում 1000ժ	210	180	-30
8. Այդ թվում սարքավորումների ժամերը	3750	3000	-750
հերթափոխ	500	460	-40
օրերը	250	245	-5
9. Սարքավորումների հերթ. գործակիցը	2	1.88	-0.12
10. Հերթափոխի միջին տևողությունը ժամերով	7.5	6.5	-1
11. Մեկ մեքենայի ժամում արտադրած արտադրանքը	328.57	407.78	+79.21

10.3. Կազմակերպության սարքավորումների և արտադրական հզորությունների վերլուծություն

Հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության ընդհանրացնող ցուցանիշների վերլուծության հետ ավելի մանրամասն պետք է ուսումնասիրվի կազմակերպությունների արտադրական հզորությունների, առանձին մեքենաների և սարքավորումների օգտագործման աստիճանը:

Կազմակերպության արտադրական հզորության տակ հասկանում ենք արտադրանքի հնարավոր մաքսիմում թողարկումը, արտադրության կազմակերպման, տեխնիկայի և տեխնոլոգիայի նվաճված մակարդակի պայմաններում: Արտադրական հզորությունների օգտագործման աստիճանը բնութագրվում է հետևյալ գործակիցներով՝

$$\text{Ընդհանուր գործակից} = \frac{\text{արտադրության փաստացի կամ ծրագրային ծավալ}}{\text{կազմակերպության միջին տարեկան արտադրական հզորություն}}$$

$$\text{Ինտենսիվ գործակից} = \text{արտադրության միջին օրեկան թողարկումը}$$

միջին օրեկան արտադրական հզորություն

աշխատաժամանակի փաստացի կամ ծրագրային ֆոնդ

$$\text{Էքստենսիվ գործակից} = \frac{\text{աշխատաժամանակի հաշվարկային ֆոնդ, որն ընդունված է արտադրական հզորության որոշման ժամանակ}}{\text{արտադրական հզորության որոշման ժամանակ}}$$

Ուսումնասիրվում է այս ցուցանիշների դինամիկան, ծրագրի կատարումը, դրանց փոփոխության պատճառները, նոր սարքավորումների գործի մեջ դնելը, դրանց վերականգնումը, արտադրության տեխնիկական վերազինումը: Արտադրական հզորությունների ծավալը որոշվում է նաև արտադրության հրապարակների օգտագործման աստիճանով, այսինքն 1մ^2 արտադրական հրապարակին ընկնող արտադրանքի ծավալով:

Սարքավորումների աշխատանքի վերլուծությունը հիմնված է ցուցանիշների այն համակարգի վրա, որը բնութագրում է նրանց թվաքանակը, աշխատաժամանակը և հզորությունը:

Տարբերում ենք առկա և տեղակայված սարքավորումներ, որոնք փաստացի օգտագործվում են արտադրության մեջ և, որոնք գտնվում են նորոգման մոդեռնիզացիայի մեջ և պահուստների տեսքով: Առավելագույն արդյունքի ենք հասնում, երբ այս խմբերն իրենց մեծությամբ նույնն են:

Արտադրության մեջ սարքավորումների օգտագործման աստիճանը բնութագրելու համար օգտագործում ենք հետևյալ ցուցանիշները՝

$$\text{Առկա սարքավորումների օգտագործման գործակից} = \frac{\text{օգտագործվող սարքավորումների քանակ}}{\text{առկա սարքավորումների քանակ}}$$

$$\text{Տեղակայված սարքավորումների օգտագործման գործակից} = \frac{\text{օգտագործվող սարքավորումների քանակ}}{\text{տեղակայված սարքավորումների քանակ}}$$

Առկա և տեղակայված սարքավորումների քանակի միջև տարբերությունը բազմապատկելով միավոր սարքավորման արտադրած միջին տարեկան արտադրանքի ծրագրային արժեքով, կստանանք արտադրանքի արտադրության ավելացման պոտենցիալ պահուստի ի հաշիվ գործող սարքավորումների քանակի ավելացմամբ:

Սարքավորումների էքստենսիվ ծանրաբեռնվածության աստիճանը բնութագրելու համար ուսումնասիրվում է նրա աշխատաժամանակի հաշվեկշիռը, այն ներառում է՝

- ժամանակի օրացուցային ֆոնդը, այսինքն՝ սարքավորումների աշխատանքի հնարավոր մաքսիմալ ժամանակ (օրացուցային օրերի թիվը հաշվետու ժամանակում անգամ ժամանակով և տեղակայված սարքավորումների քանակով):
- Աշխատաժամանակի ռեժիմային ֆոնդը (տեղակայված սարքավորումների թիվն անգամ հաշվետու ժամանակաշրջանի աշխատած օրերի քանակով և ամենօրյա աշխատանքի ժամերի թվով հաշվի առած հերթափոխության գործակիցը):
- Պլանային ֆոնդը, սարքավորումների աշխատաժամանակն է ըստ ծրագրի, այն տարբերվում է ռեժիմային ֆոնդից սարքավորումների ծրագրային նորոգման և մոդեռնացման մեջ գտնվելու ժամանակով:
- Փաստացի ֆոնդն աշխատած ժամանակն է, ժամանակի փաստացի և ծրագրային օրացուցային ֆոնդերի համեմատումը թույլ է տալիս գտնել շահագործման մեջ գտնվող սարքավորումների ծրագրի կատարման աստիճանը: Ըստ ծրագրի ժամանակի օրացուցային և ռեժիմային ֆոնդերի համեմատումը հնարավորություն է տալիս ուսումնասիրելու սարքավորումների օգտագործման լավագույն հնարավորությունն ի հաշիվ հերթափոխայնության գործակցի ավելացման, իսկ ռեժիմային և ծրագրային ֆոնդերի համեմատումը հնարավորություն է տալիս գտնելու ժամանակի պահուստներ, ի հաշիվ նորոգման ժամանակի կրճատման:

Ֆոնդահատույցի վրա ազդող գործոններն են՝

- ֆոնդերի ակտիվ մասի տեսակարար կշիռն ամբողջ արդյունաբերաարտադրական հիմնական ֆոնդերի մեջ
- ֆոնդերի ակտիվ մասի ֆոնդահատույցը:

Ինքնատուգման հարցեր

1. Նկարագրեք կազմակերպության տեխնիկական մակարդակի վերլուծությունը:
2. Որո՞նք են հիմնական ֆոնդերի օգտագործման արդյունավետության գնահատման ցուցանիշները:
3. Ի՞նչպես են բնութագրվում ֆոնդերի ինտենսիվ և էքստենսիվ ծանրաբեռնվածությունը:

ԳԼՈՒԽ 11. ՆՅՈՒԹԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի նպատակն է՝ նկարագրել նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծությունը, ներկայացնել վերլուծության խնդիրները և նյութատարության մասնակի ցուցանիշները:

Ուսուցիչների և հնտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ունենալու է ներկայացնել նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծությունը, առանձնացնել վերլուծության խնդիրները և նյութատարության մասնակի ցուցանիշները:

11.1. Նյութական ռեսուրսների վերլուծության խնդիրները և տեղեկատվական աղբյուրները

Արտադրանքի արտադրության ծրագրի կատարման, ինքնարժեքի իջեցման, շահույթի և շահութաբերության աճի անհրաժեշտ պայման է հանդիսանում պահանջվող տեսականիով և որակով, հումքով և նյութերով կազմակերպության լրիվ և ժամանակին ապահովումը:

Նյութական ռեսուրսների կազմակերպության պահանջը կարելի է ապահովել էքստենսիվ ուղիով (մեծ քանակի նյութերի ձեռքբերման ճանապարհով կամ պատրաստման) և ինտենսիվ ուղիով (ունենցած նյութական ռեսուրսների ավելի արդյունավետ օգտագործմամբ):

Առաջին ուղին բերում է միավոր արտադրանքի վրա տեսակարար նյութական ծախսերի աճի, չնայած կարող է այս պայմաններում ինքնարժեքն իջնել ի հաշիվ արտադրանքի ծավալի աճի և հաստատուն ծախսերի մեկ միավորի հաշվով նվազման: Երկրորդ ուղին ապահովում է տեսակարար նյութական ծախսերի կրճատում և արտադրանքի ինքնարժեքի նվազում: Նյութական ռեսուրսներով ապահովվածության և օգտագործման վերլուծության խնդիրներն են՝

- նյութատեխնիկական մատակարարման ծրագրերի կատարման աստիճանի գնահատումը և նրա ազդեցությունն արտադրանքի արտադրության ծավալի, ինքնարժեքի և այլ ցուցանիշների վրա
- նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության մակարդակի գնահատումը
- արտադրանքի նյութական ռեսուրսների տնտեսման ներարտադրական պահուստների բացահայտումը:

Ուշադրություն պետք է դարձնել հումքի և նյութի պահեստային պաշարների վիճակի վրա:

Պաշարները լինում են ընթացիկ, սեզոնային և ապահովագրական: Ընթացիկ պաշարների մեծությունը կախված է մատակարարների ինտերվալից (օրերով) և նյութերի միջին օրեկան ծախսից:

Վերլուծության ժամանակ ստուգվում են պաշարների փաստացի մեծությունների համապատասխանումը հումքի և նյութերի նորմատիվներին: Հաշվարկվում են արտադրանքի կորուստները.

1. նյութերի չմատակարարումից
2. նյութերի վատ որակից
3. նյութերի փոխարինումից
4. նյութերի գների փոփոխությունից և մատակարարման գրաֆիկի խախտման հետևանքով պարապուրդներից:

Արտադրանքի արտադրության ծավալի նվազումն ի հաշիվ նյութերի չմատակարարման, որոշվում է հետևյալ կերպ՝

$$\frac{\text{Չմատակարարված նյութերի արժեքը}}{\text{Միավոր արտադրանքի նյութ. ծախս}}$$

$$\Delta K = \frac{3_{\text{ն}} - 3_{\text{պ}}}{\Pi}$$

Հումքի և նյութերի ցածր որակի պատճառով ձևավորվում են գերծրագրային թափոններ: Որոշելու համար, թե այս գործոնի հետևանքով որքան է կրճատվել արտադրանքի արտադրությունը, անհրաժեշտ է հումք և նյութերի գերծրագրային թափոնների քանակը բաժանել արտադրանքի միավորի ծախսի նորմայի վրա.

$$\frac{\text{Հումքի, նյութերի գերծրագրային թափոնների քանակ}}{\text{Արտադրանքի միավոր ծախսի նորմա}}$$

Մատակարարվող նյութերի տեսականու խախտման ժամանակ կազմակերպությունը պետք է կատարի լրացուցիչ աշխատանք ստացված նյութերով կամ էլ գնի դրանց փոխարինիչները: Նյութերի վրա լրացուցիչ աշխատանք կատարելիս գոյանում է արտադրանքի միավորի հաշվով գերածախս, որը բերում է փոփոխուն ծախսումների գումարի աճին: Որպեսզի որոշենք կորուստները, անհրաժեշտ է նյութերի գերածախսը, որը գոյացել է լրացուցիչ աշխատանքի շնորհիվ բազմապատկել արտադրանքի փաստացի թողարկման ծավալով և արտադրանքի միավորի գնով.

$$\Delta 3 = (P_1 - P_0) * K * \Pi$$

P₁ և **P₀** - ծախսեր

K - քանակ

Π - գին

Եթե տեղի է ունենում մեկ նյութի փոխարինում մեկ այլ, ավելի թանկարժեք նյութով, ապա ծախսերի գումարը նույնպես ավելանում է: Այն որոշելու համար անհրաժեշտ է փոխարինող նյութի քանակը բազմապատկել նյութերի գների փոփոխմամբ.

$$\Delta 3 = K * (\Pi_1 - \Pi_0)$$

Նմանատիպ վիճակի մեջ է հայտնվում կազմակերպությունը, երբ մատակարարը բարձրացնում է հումքի, նյութերի գները: Այստեղ կազմակերպությանն անհրաժեշտ է՝

- ավելացնել փոփոխումն ծախսումները կապված ավելի թանկարժեք նյութերի փոխարինման հետ, և ի հաշիվ ծավալի ընդլայնման ստանալ լրացուցիչ շահույթ
- փոքրացնել արտադրանքի ծավալը, եթե թանկարժեք նյութեր օգտագործելով արդյունքում արտադրանքը վնասաբեր է, կամ էլ գտել է ավելի էժան շուկաներ, կամ էլ փոխել է արտադրության կառուցվածքը:

Մեծ կորուստներ կարող են առաջանալ հումքի և նյութերի անհամաչափ մատակարարումներից, որի պատճառով կազմակերպությունները պարապուրդների են ենթարկվում, չեն աշխատում և արտադրանք չեն ստանում, ինչպես նաև չեն ստանում շահույթ: Այս կորուստները որոշելու համար անհրաժեշտ է նյութերի բացակայության հետևանքով բաց թողնված մարդ.ժամերի քանակը բազմապատկել ծրագրային միջին ժամային արտադրանքի մեծության հետ.

$$\Delta T\Pi = K * \text{ԿԵ}$$

ԿԵ – մարդկային ժամանակ

Մեծանում է նաև ծախսերի գումարը, որովհետև կազմակերպության մեղքով թույլ տված պարապուրդների ժամանակ աշխատողներին վճարվում է աշխատավարձ: Այն կարելի է հաշվարկել բաց թողած մարդ.ժամերիթիվը բազմապատկելով մեկ ժամի վարձավճարով:

11.2. Նյութական ռեսուրսների օգտագործման վերլուծություն

Նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետության բնութագրման համար օգտագործվում են ընդհանրացնող և մասնավոր ցուցանիշներ: Ընդհանրացնող ցուցանիշներից է՝ նյութահատույցը, նյութատարությունը, արտադրության ծավալի և նյութական ծախսերի աճի տեմպի փոխհարաբերության գործակիցն արտադրանքի ինքնարժեքի մեջ, նյութական ծախսումների տեսակարար կշիռը, նյութերի օգտագործման գործակիցը: Նյութահատույցը որոշվում է.

Արտադրված արտադրանքի արժեքը

Նյութական ծախս

Այս ցուցանիշը ցույց է տալիս, թե որքան է հատուցված մեկ դրամ նյութական ռեսուրսը: Նյութատարությունը որոշվում է,

Նյութական ծախս

Արտադրանքի արժեքը

Այն ցույց է տալիս, թե որքան նյութական ծախս է ընկնում արտադրանքի միավորին: Արտադրության ծավալի և նյութական ծախսերի աճի տեմպերի հարաբերական գործակիցը որոշվում է,

$\frac{\text{Համախառն կամ ապրանքային արտադրանքի ինդեքս}}$

Նյութական ծախսերի ինդեքս

Նյութական ծախսերի տեսակարար կշիռն ինդեքսի մեջ որոշվում է.

Նյութական ծախս

Արտադրանքի ինքնարժեք

Նյութական ծախսերի գործակիցն իրենից ներկայացնում է.

Նյութական ծախսերի փաստացի գումար

Պլանային վերահաշվարկված փաստացի թողարկած արտադրանքի ծավալը

Այն ցույց է տալիս, թե որքան արդյունավետ են օգտագործվում նյութերն արտադրության գործընթացում, եթե գործակիցը մեծ է մեկից, ապա տեղի է ունեցել զերծախս, իսկ եթե փոքր է մեկից, ապա տեղի է ունեցել տնտեսում:

11.3. Նյութատարության մասնակի ցուցանիշները

Նյութատարության մասնակի ցուցանիշները օգտագործվում են առանձին տեսակի նյութական ռեսուրսների օգտագործման արդյունավետությունը բնութագրելու համար (հումքատարությունը, վառելիքատարությունը և այլն): Տեսակարար նյութատարությունը կարող է հաշվարկել արժեքային, բնական արտահայտությամբ (ծախսված տվյալ նյութական ռեսուրսների ծավալի կամ քանակի հարաբերությամբ տվյալ տեսակի թողարկված արտադրանքի քանակի վրա): Վերլուծության ժամանակ նյութերի օգտագործման արդյունավետությունը բնութագրող փաստացի ցուցանիշները համեմատում ենք ծրագրայինի հետ, ուսումնասիրվում է դրանց դինամիկան և փոփոխության պատճառները:

Նյութատարությունը կախված է արտադրանքի ծավալից և նյութական ծախսերից: Իր հերթին արտադրանքի ծավալն արժեքային արտահայտությամբ կարելի է փոփոխել ի հաշիվ արտադրված արտադրանքի քանակի, նրա կառուցվածքի և բացթողման զանգվածի մակարդակի:

Նյութական ծախսերի գումարը նույնպես կախված է արտադրված արտադրանքի ծավալից, նրա կառուցվածքից, արտադրանքի միավորի վրա նյութերի ծախսից և նյութերի արժեքից: Արդյունքում ընդհանուր նյութատարությունը կախված արտադրանքի կառուցվածքից, նյութերի ծախսերի նորմաներից, միավոր արտադրանքի վրա նյութական ռեսուրսների զանգվածի և արտադրանքի բաց թողման զանգվածից.

$$\frac{ME}{T\Pi} = \frac{M \mathcal{E}}{T\Pi} = \frac{V * Y * M * M\Pi}{V * Y * \Pi}$$

M E - նյութական ծախսերի ամբողջ ծավալը

T\Pi - արտադրված արտադրանքի ծավալ

ME - նյութատարություն

V - արտադրանքի քանակ

Y - արտադրանքի կառուցվածք

MI - միավոր նյութի գին

M - միավոր արտադրանքի վրա ծախսված նյութերի քանակ

II - միավոր արտադրանքի բացթողման գին

Օգտագործելով գործոնային վերլուծության շղթայական տեղադրումների եղանակը, կարող ենք հաշվարկել նյութատարության վրա գործոնների ազդեցության չափերը: Պետք է ուսումնասիրել նաև արտադրանքի առանձին տեսակների նյութատարության և նրա մակարդակի փոփոխության պատճառները, այն կախված է նյութերի ծախսի նորմաներից, նրանց գնից, արտադրանքի բացթողման գնից:

Ինքնաստուգման հարցեր

1. Որո՞նք են ռեսուրսների վերլուծության տեղեկատվական աղբյուրները:
2. Թվարկեք նյութատարության մասնակի ցուցանիշները:

ԳԼՈՒԽ 12. ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՆՔՆԱՐԺԵՔԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թեմայի նպատակն է՝ պատկերացում տալ արտադրանքի ինքնարժեքի վերլուծության մասին, ներկայացնել միավոր արտադրանքի ծախսերի վերլուծությունը, ուղղակի նյութական ծախսերի, իրացման ծախսերի, վարչական և անուղղակի ծախսերի վերլուծությունը:

Ունակությունների և հմտությունների նկարագիրը: Թեման ուսումնասիրելուց հետո ունկնդիրը կկարողանա՝ ներկայացնել արտադրանքի ինքնարժեքի վերլուծությունը, առանձնացնել միավոր արտադրանքի ծախսերի վերլուծությունը, ուղղակի նյութական ծախսերի, իրացման ծախսերի, վարչական և անուղղակի ծախսերի վերլուծությունը:

12.1. Ապրանքային արտադրանքի արտադրական ծախսերի վերլուծություն

Կազմակերպությունների (հատկապես արդյունաբերական) աշխատանքի բնութագրման գլխավոր ցուցանիշներից է համարվում արտադրանքի ինքնարժեքը: Նրա մակարդակից են կախված կազմակերպության գործունեության ֆինանսական արդյունքները: Տնտեսվարող սուբյեկտների ֆինանսական վիճակն արտադրանքի, աշխատանքի և ծառայությունների ինքնարժեքի վերլուծության առումով բացառիկ կարևոր նշանակություն ունեն: Այն թույլ է տալիս պարզել տվյալ ցուցանիշի փոփոխության միտումները, ծրագրի կատարումը, որոշել նրա հավելաճի վրա ազդող գործոնները և այդ հիմքի վրա տալ կազմակերպության աշխատանքի գնահատականը և բացահայտել արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստները: Ինքնարժեքի վերլուծության օբյեկտ են համարվում հետևյալ ցուցանիշները՝

1. ապրանքային արտադրանքի լրիվ ինքնարժեքն ամբողջությամբ և ըստ տնտեսական տարրերի
2. մեկ դրամ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսերը
3. առանձին արտադրանքների ինքնարժեքը և ծախսերի առանձին էլեմենտները, տարրերը և հողվածները Տեղեկատվական աղբյուրներն են հանդիսանում.
 - արտադրանքի ինքնարժեքի ծրագրային և հաշվետու հաշվարկները
 - սինթետիկ և անալիտիկ հաշվառման տվյալները
 - հիմնական և լրացուցիչ արտադրական ծախսերի մասին հաշվետվությունները և այլն

Ծախսումների տարրերն են հանդիսանում.

- նյութական ծախսերը (հումք և նյութեր, կիսաֆաբրիկատներ և կոմպլեկտավորված արտադրատեսակներ, վառելիք, էլեկտրաէներգիա և այլն)
- աշխատավարձի ծախսերը (հատկացումներ սոցիալական կարիքներին, հիմնական միջոցների ամորտիզացիա, այլ ծախսեր, ոչ նյութական ակտիվների մաշվածք, վարձավճար, պարտադիր ապահովագրական վճարներ, բանկի վարկի տոկոսներ, հարկեր, որոնք մտնում են ինքնարժեքի մեջ, հատկացումներ արտաբյուջետային ֆոնդերին և այլն):

Ըստ տարրերի ծախսերի խմբավորումն անհրաժեշտ է, որպեսզի ուսումնասիրենք նյութատարությունը, էներգատարությունը, աշխատատարությունը, ֆոնդատարությունը և որոշենք տեխնիկական առաջընթացի աղեցությունն արտադրանքի վրա: Եթե աշխատավարձի բաժինը նվազում է, իսկ ամորտիզացիան ավելանում, ապա դա վկայում է կազմակերպության տեխնիկական մակարդակի բարձրացման մասին: Աշխատավարձի տեսակարար կշիռը կրճատվում է այն դեպքում մաս, երբ ավելանում է գնովի կոմպլեկտավորված արտադրանքների բաժինը, որը վկայում է կոոպերացիայի և մասնագիտացման աստիճանի բարձրացման մասին: Արտադրանքի ինքնարժեքն ըստ տնտեսական տարրերի կազմված է հետևյալից.

- ուղղակի նյութական ծախսումներ
- ուղղակի ծախսումներ աշխատանքի վարձատրության գծով
- ուղղակի ծախսումներ սոցիալական ապահովության վճարների գծով
- ուղղակի արտադրական այլ ծախսեր
- անուղղակի արտադրական ծախսեր:

Ա Ծախսերը դասակարգվում են ուղղակի և անուղղակի ծախսերի:

Ուղղակի ծախսերը կապված են որոշակի տեսակի արտադրանքի արտադրության հետ: Հումք, նյութեր, արտադրական բանվորների աշխատավարձ: Այս ծախսերն ուղղակիորեն ներառվում են արտադրանքի ինքնարժեքի մեջ:

Անուղղակի ծախսերը կապված են մի քանի տեսակի արտադրանքի արտադրության հետ և կալկուլյացիայի ժամանակ տարբեր օբյեկտներին են վերաբաշխվում հավասարաչափ բաշխման ճանապարհով: Անուղղակի ծախսերի օրինակ է ընդհանուր արտադրական և ընդհանուր տնտեսական ծախսերը:

Շուկայական տնտեսության պայմաններում ծախսերը դասակարգվում են ակնհայտ և ոչ ակնհայտ ծախսերի: Ակնհայտ ծախսերը այն ծախսերն են, որոնք ընդունում են ուղղակի վճարների պես.

- Ակնհայտ ծախսերի թվին է պատկանում բանվորների, մեքենայների, մնացած աշխատողների աշխատավարձը, առևտրական ֆիրմաների կոմիսիոն վճարները, բանկերին և նյութական արժեքների դիմաց, մատակարարներին վճարումները, տրանսպորտային ծախսերի վճարները և այլն:

- Ոչ ակնհայտ ծախսերը, դրանք ռեսուրսների օգտագործման այլընտրանքային ծախսերն են, որոնք պատկանում են ընկերության սեփականատերերին: Այդ ծախսերը մախատեսված են համաձայնագրերով և չեն արտացոլվում հաշվապահական հաշվետվություններում, օրինակ ֆիրման օգտագործում է տարածք, որը պատկանում է իր տիրոջը, որի համար նա ոչ ոքի ոչինչ չի վճարում, ոչ ակնհայտ ծախսը հավասար կլինի այդ տարածքի վարձով տալու ժամանակ ստացված դրամական վճարին:

Արտադրության ծավալից կախված ծախսերը լինում են հաստատուն և փոփոխուն:

Հաստատուն ծախսերը (մաշվածություն, վարձավճարները, գույքահարկը, բանվորներին տրվող ժամանակավճարը, վարչականափարչական ապարատի աշխատավարձը, դրանց համապատասխան սոցիալ հատկացումները) մտնում են անփոփոխ արտադրական ծավալի փոփոխման ժամանակ, իսկ փոփոխուն

ծախսերը (արտադրական բանվորների գործավարձով տրվող աշխատավարձը, հումքի, նյութերի, տեխնոլոգիական վառելիքի) փոփոխվում են արտադրանքի արտադրության ծավալի փոփոխման ժամանակ: Հաստատուն և փոփոխուն ծախսերի հարաբերակությունը կարող ենք ներկայացնել հետևյալ բանաձևով՝ $Y = a + b \cdot x$, որտեղ՝

Y - արտադրանքի արտադրության ծախսերի գումարն է

a - հաստատուն ծախսերի բացարձակ գումարն է

b - արտադրանքի միավորին ընկնող փոփոխուն ծախսն է

x - արտադրանքի արտադրության ծավալը:

Հաստատուն ծախսերի բացարձակ մեծությունն արտադրանքի արտադրության ծավալի փոփոխման ժամանակ չի փոփոխվում, սակայն այն փոփոխվում է արտադրանքի միավորի նկատմամբ: Փոփոխուն ծախսերն ամբողջ արտադրության արտադրանքի ինքնարժեքում աճում են, եթե արտադրանքի ծավալն աճում է, իսկ միավոր արտադրանքի ինքնարժեքում մնում են անփոփոխ:

Գտնենք միավոր արտադրանքի ինքնարժեքը՝

$$CM = \frac{a}{x} + \frac{bx}{x} = \frac{a}{x} + b$$

Ծախսերի ընդհանուր գումարը կարող է փոփոխվել արտադրանքի թողարկման ծավալից նրա կառուցվածքից, արտադրանքի միավորի վրա փոփոխուն ծախսերի մակարդակից և հաստատուն ծախսերի գումարից կախված:

12.2. Մեկ դրամ ապրանքային արտադրանքի ծախսերի վերլուծությունը

Այն հաշվարկվում է ապրանքային արտադրանքի վրա կատարված ամբողջ ծախսերի ընդհանուր գումարի հարաբերությամբ ապրանքային արտադրանքի արժեքին գործող գներով: Այս ցուցանիշի փոփոխության վրա ազդում են ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ, ինչպես ներքին այնպես էլ արտաքին գործոններ: Մեկ դրամ ապրանքային արտադրանքին ընկնող ծախսերի ցուցանիշի փոփոխության վրա գործոնների ազդեցության հաշվարկը կատարվում է շրջայական տեղադրման եղանակով: Այդ գործոններն են՝

- արտադրանքի ծավալը
- արտադրանքի կառուցվածքը
- տեսակարար փոփոխուն ծախսերը
- տեսակարար ծախսերի ամբողջ գումարը
- արտադրանքի բաց թողման գինը

Իրենց հերթին, հաստատուն և փոփոխուն ծախսերը կախված են ռեսուրսատարության մակարդակից և նյութական ռեսուրսների արժեքի փոփոխությունից: Որպեսզի որոշենք, թե այս գործոններն ինչպես են ազդել շահույթի գումարի վրա, ծախսերի բացարձակ հավելածն ի հաշիվ յուրաքանչյուր գործոնի պետք է բազմապատկել արտադրանքի փաստացի իրացման ծավալին արտահայտված ծրագրային գներով:

12.3. Կարևորագույն արտադրատեսակների ինքնարժեքի վերլուծություն

Ինքնարժեքի փոփոխության պատճառներն ավելի խորն ուսումնասիրելու համար անհրաժեշտ է վերլուծել առանձին արտադրատեսակների հաշվարկները, արտադրանքի ծախսերի փաստացի և ծրագրային մակարդակները ծախսերի բոլոր հոդվածների գծով:

Առաջին կարգի գործոնների ազդեցությունն արտադրանքի փաստացի ինքնարժեքի մակարդակի փոփոխության վրա որոշվում է գործոնային վերլուծության բանաձևի օգնությամբ:

Աղյուսակ 17. Տվյալներ Ա տեսակի արտադրանքի ինքնարժեքի գործոնային վերլուծության համար

Ցուցանիշներ	Պլան	Փաստացի	Շեղում
1. Արտադրանքի արտադրության ծավալը (հատերով)	55000	55600	+600
2. Հաստատուն ծախսումների գումարը (1000 դր)	6600	6950	+350
3. Արտադրանքի միավորի փոփոխուն ծախսերի գումարը (դրամով)	250	290	+40
4. Մեկ հատի ինքնարժեքը դրամով	370	415	+45

Օգտագործելով շրջայական տեղադրման եղանակը, հաշվարկենք գործոնների ազդեցության չափերը՝

$$c = \frac{a}{x} + b$$

$$C_{պլ} = \frac{a_{պլ}}{x_{պլ}} + b_{պլ} = \frac{6600000}{55000} + 250 = 370$$

c - միավոր արտադրանքի ինքնարժեք

x - արտադրանքի քանակ

a - հաստատուն ծախսերի ընդհանուր գումարը

b - միավոր արտադրանքի փոփոխուն ծախսերի գումարը

$$C_1 = \frac{a_{պլ}}{x_{փ}} + b_{պլ} = \frac{6600000}{55600} + 250 = 368.7$$

$$C_2 = \frac{a_{փ}}{x_{փ}} + b_{պլ} = \frac{6950000}{55600} + 250 = 375$$

$$C_{\phi} = \frac{a_{\phi}}{x_{\phi}} + b_{\omega l} = \frac{6950000}{55600} + 290 = 415$$

$$\Delta C = C_{\phi} - C_{\omega l} = 415 - 370 = +45$$

Արտադրանքի միավոր ինքնարժեքի ընդհանուր փոփոխությունը Այդ թվում ի հաշիվ՝

1. արտադրանքի արտադրության ծավալի փոփոխության հաշվին,
 $\pm \Delta C_x = C_1 - C_{\omega l} = 368.7 - 370 = -1.3$
2. հաստատուն ծախսերի գումարի փոփոխության հաշվին,
 $\pm \Delta C_a = C_2 - C_1 = 375 - 368.5 = 6.5$
3. տեսակարար փոփոխուն ծախսումների գումարի հաշվին:
 $\pm \Delta C_b = C_{\phi} - C_2 = 415 - 375 = +40$

Այնուհետև ուսումնասիրում ենք ապրանքային արտադրանքի ինքնարժեքն ըստ առանձին հոդվածների, որի համար փաստացի տվյալները համեմատվում են ծրագրայինի հետ:

12.4. Ուղղակի նյութական ծախսումների վերլուծություն

Ինքնարժեքի մեջ, հատկապես արդյունաբերական արտադրանքի, մեծ տեսակարար կշիռ ունեն հումքի, նյութերի ծախսերը: Ծախսումների ընդհանուր գումարը կախված է արտադրանքի արտադրության ծավալից (V), նրա կառուցվածքից (Y), առանձին արտադրատեսակների վրա տեսակարար ծախսումների փոփոխությունից (M3), իրենց հերթին տեսակարար փոփոխուն ծախսումները կախված են ծախսված նյութերի քանակից՝ արտադրանքի միավորի վրա (P) և միավոր նյութի միջին գնից (II): Տվյալ գործոնների ազդեցության հաշվարկը կատարվում է շղթայական տեղադրման եղանակով:

Արտադրության նյութական ծախսերը.

Աղյուսակ 18. Արտադրանքի արտադրության նյութական ծախսումներ

Արտադրանքի արտադրության նյութական ծախսումներ	Գումար 1000 դրամ
ա) Պլանով	$\Sigma (V_{\omega l} \times P_{\omega l} \times II_{\omega l})$ 28.168
բ) Պլանը վերահաշվարկված արտադրանքի արտադրության փաստացի ծավալով K-ն արտադրանքի ծավալի կատարման գործակից.	$\Sigma (V_{\omega l} \times P_{\omega l} \times II_{\omega l}) K$ 28.901
գ) Արտադրանքի փաստացի թողարկմամբ ծրագրային նորմաներով և ծրագրային գներով	$\Sigma (V_{\phi} \times P_{\omega l} \times II_{\omega l})$ 29.895
դ) Փաստացի թողարկումը ծրագրային գներով	$\Sigma (V_{\phi} \times P_{\phi} \times II_{\omega l})$ 30.385
ե) Փաստացի	$\Sigma (V_{\phi} \times P_{\phi} \times II_{\phi})$ 31.746

Այստեղից երևում է, որ արտադրանքի արտադրության վրա կատարված նյութական ծախսումներն ավելացել են.

3578 (31746 - 28168)

Այդ թվում ի հաշիվ՝

- արտադրանքի արտադրության ծավալի՝ 28901 - 28168 = +733
- արտադրանքի արտադրության կառուցվածքի՝ 29895 - 28901 = 994
- նյութերի տեսակարար ծախսի՝ 30385 - 29895 = 490
- հումքի և նյութերի գնի՝ 31746 - 30385 = 1361

Ընդամենը՝ + 3578

Նյութական ծախսերի գումարն առանձին արտադրատեսակների գծով կախված է արտադրանքի արտադրության կառուցվածքից:

12. 5. Ուղղակի աշխատանքային ծախսումների վերլուծություն

Աշխատավարձ հոդվածի ծախսերն ուսումնասիրենք որպես աշխատանքային ծախսումներ: Ուղղակի աշխատավարձի ընդհանուր գումարը կախված է ապրանքային արտադրանքի ծավալից, նրա կառուցվածքից և առանձին արտադրատեսակների վրա կատարված աշխատանքային ծախսումներից, որոնք էլ, իրենց հերթին, կախված են աշխատատարությունից և մեկ մարդ ժամին ընկնող աշխատավարձի մակարդակից:

12.6. Իրացման ծախսեր

Իրացման ծախսերն իրենց մեջ ներառում են արտադրանքի առաքման ծախսերը (բեռնման, բեռնաթափման, առաքման աշխատանքները), փաթեթավորման, գովազդի, շուկայի ուսումնասիրման ծախսերը և այլն: Ապրանքների առաքման ծախսերը կախված են տեղափոխման հեռավորությունից, տեղափոխվող բեռների կշռից, բեռների տեղափոխման տրանսպորտային տարիֆներից, տրանսպորտային միջոցների ձևից:

Բեռնման և բեռնաթափման ծախսերը կարող են փոփոխվել՝ կախված բարձրագույն արտադրանքի կշռի փոփոխությունից, և մեկ տոննա արտադրանքի բեռնման, բեռնաթափման գնից, փաթեթավորված նյութերի և տարայի ծախսերը կախված են նրանց քանակից և արժեքից:

Իր հերթին, քանակը կախված է բարձրագույն արտադրանքի ծավալից և որովհետև փաթեթավորումն արտադրանքի պահանջարկի բարձրացման գործոններից է, և դրանց վրա կատարված ծախսերը հետ են գնվում վաճառքի ծավալի ավելացման հաշվին:

Նույնը կարելի է ասել գովազդի, շուկայի ուսումնասիրման և այլ մարքեթինգային ծախսերի մասին: Վերլուծության նպատակն է գտնել պահուստներ և մշակել միջոցառումներ՝ իրացման ծախսերը կրճատելու համար:

12.7. Անուղղակի արտադրական ծախսումներ

Այս ծախսերի մի մասը փոփոխուն են, մյուս մասը՝ հաստատուն: Անուղղակի արտադրական ծախսումներն են.

- արտադրական ստորաբաժանումների և կառավարման ու սպասարկող անձնակազմի աշխատանքի վարձատրության ծախսերը,
- սոցիալական ապահովության հատկացումների ծախսերը,
- արտադրական նշանակության հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսերը,
- արտադրական նշանակության ոչ նյութական ակտիվների ամորտիզացիան,
- աշխատանքի պաշտպանության և տեխնիկայի անվտանգության ծախսերը,
- արտադրական անձնակազմի գործուղման ծախսերը,
- այլ ծախսեր:

Վերլուծության ժամանակ որոշվում է հողվածի գնով բացարձակ և հարաբերական շեղումը, դրանց վրա տարբեր գործոնների ազդեցությունը, որից հետո նաև հարաբերական շեղումը փոփոխուն ծախսումների համար:

12.8. Վարչական ծախսեր

Վարչական ծախսերը հաստատուն ծախսեր են, դրանց կազմը հետևյալն է.

- աշխատանքի վարձատրության ծախսեր,
- սոցիալական ապահովության հատկացումների ծախսեր,
- հիմնական միջոցների մաշվածության, նորոգման և սպասարկման ծախսեր,
- գործուղման և ներկայացուցչական ծախսեր,
- աուդիտի և խորհրդատվական ծառայությունների ծախսեր,
- փոստի հեռահաղորդակցման, կոմունալ ծախսեր, երաշխիքային սպասարկման ծախսեր և այլն:

12.9. Արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստների վերլուծություն

Արտադրանքի ինքնարժեքի իջեցման համար պահուստների բացահայտումն ինքնարժեքի վերլուծության կարևոր խնդիրներից է:

Ինքնարժեքի իջեցման պահուստների թվին է պատկանում տարբեր ծախսային հոդվածների չարդարացված գերածախսերը և ոչ արտադրական ծախսերը: Այդ պահուստներից է արտադրանքի ինքնարժեքի պայմանական հաստատուն ծախսերի կրճատումը:

Ինքնարժեքի իջեցման պահուստներից է նյութական ծախսումների նվազումը, որը կարելի է իրականացնել կազմակերպչական միջոցառումների միջոցով, որը որոշվում է ներդրումից առաջ կատարված նյութական ծախսումների և ներդրումներից հետո կատարված նյութական ծախսումների տարբերության և արտադրանքի արտադրության քանակի և նյութերի ծրագրավորված ծախսի արտադրյալով.

$$U_1 = (m_1 - m_0) * U_p * U_q$$

Աշխատանքի վարձատրության ծախսերի իջեցումից ինքնարժեքի իջեցման պահուստը կարելի է հաշվարկել աշխատանքի վարձատրման ծախսերը մինչև միջոցառումը և միջոցառումից հետո բազմապատկելով միջին ժամային տարիֆային դրույքաչափով և արտադրված արտադրանքի քանակով:

$$U_2 = (U_{\delta_0} - U_{\delta_1}) * S_{\delta} * U_p$$

Հիմնական միջոցների իրացումից տնտեսված ծախսերը որոշվում է իրացված հիմնական միջոցների նախնական արժեքի և ամորտիզացիայի նորմայի արտադրյալով:

$$U_3 = Z_{U_1} * U_{\delta}$$

Արտադրական սարքավորումների արդյունավետ օգտագործման հաշվին տնտեսումը հաշվարկվում է ամորտիզացիայի գումարների հաշվետու և ծրագրային ժամանակահատվածի համար և արտադրանքի արտադրության ծավալի հարաբերությամբ:

$$U_4 = (U_{\delta\delta 2} - U_{\delta\delta 1}) / U_{\delta}$$

Արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստները բացահայտվում են առանձին-առանձին, այնուհետև որոշվում է դրանց գումարը:

12.10. Կազմակերպության կազմակերպչատեխնիկական մակարդակի վերլուծություն

Կազմակերպչատեխնիկական մակարդակ ասելով, հասկանում ենք կազմակերպության արտադրական միջոցների կազմակերպման և կառավարման մեթոդների զարգացման, նվաճման մակարդակը, այն բնութագրելու համար օգտագործում ենք ցուցանիշների համակարգ: Պատվերների զանգվածային արտադրությունը, նրա անընդհատությունը պահանջում է ճկունություն անհրաժեշտ արդյունք ստանալու համար, առկա տեխնոլոգիական համակարգերի և արտադրանքի թողարկման մասշտաբների և անվանացանկի փոփոխման պայմաններում: Ճկունության բացահայտման համար գոյություն ունեն երկու հիմնական չափանիշներ.

- Ներկա պայմաններում կազմակերպության գործունեության այնպիսի պայմաններ, որոնք թույլ են տալիս հասնել պահանջները բավարարող արդյունքի:
 - Կազմակերպության հնարավորությունը պլանավորելու և կանխատեսելու իր զարգացման գործընթացը:
- Ելնելով վերը նշվածից, կազմակերպչատեխնիկական մակարդակը կարելի է ներկայացնել հետևյալ ցուցանիշների միջոցով. $y = f(x_1; x_2; x_3)$, որտեղ y կազմակերպչատեխնիկական մակարդակն է՝
- x_1 - ցուցանիշների համակարգ է, որը բնութագրում է արտադրության գործընթացի անընդհատությունը,
 - x_2 - ցուցանիշների համակարգ է, որը բնութագրում է տեխնոլոգիական կարգավորումը,
 - x_3 - ցուցանիշների համակարգ է, որը բնութագրում է արտադրության ճկունությունը:
- Արտադրության ճկունությունը կախված է հետևյալ գործոններից.
- կայունությունից,
 - նորացման հնարավորությունից,
 - ձեռնարկության ակտիվներից,
 - սեփական միջոցներից,
 - իրացման ծավալից,
 - զուտ շահույթից,
 - շահույթի այն մասից, որն ուղղված է արտադրանքի նորացմանը, նոր արտադրատեսակների պատրաստման և յուրաքանչյուր միջին ժամանակաշրջանից, արտադրանքի իրացման մեջ գտնվելու ժամանակաշրջանից և արտադրանքի անվանացանկից:

Ինքնատուգման հարցեր

1. Նկարագրեք միավոր արտադրանքի ինքնաժեքի վերլուծությունը:
2. Որո՞նք են ինքնարժեքի վերլուծության մեջ ուսումնասիրվող ծախսային հոդվածները:
3. Ինչպե՞ս կարելի է նվազեցնել արտադրանքի ինքնարժեքը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. *Анализ хозяйственной деятельности предприятия. Г.В.Савицкая, М: - 2000 г.*
2. *Анализ финансово экономической деятельности предприятия. М.С. Абрютина, А.В. Грачев, М., 1998*
3. *Методика комплексного анализа хозяйственной деятельности. А.Д. Шеремет, Р.С. Сайфулин. – М: Экономика, 1980*

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ՑԱՆԿ

Աղյուսակ 1. Արտադրանքի արտադրության ծրագրի կատարումը.....	15
Աղյուսակ 2. Փաստացի տվյալների միջին ցուցանիշների.....	15
Աղյուսակ 3. Կազմակերպչատեխնիկական միջոցառումների ծրագրի կատարումը.....	16
Աղյուսակ 4. Արտադրանքի ծրագրի հեռանկարային կատարում.....	16
Աղյուսակ 5. Հումքի և նյութերի օգտագործումը.....	16
Աղյուսակ 6. Հիմնական ցուցանիշների դինամիկան.....	16
Աղյուսակ 7. Ապրանքային արտադրանքի դինամիկան.....	26
Աղյուսակ 8. Չեռնարկության ապրանքային թողարկման ծրագրի կատարման վերլուծությունը.....	27
Աղյուսակ 9. Ծրագրի կատարումն ըստ տեսականու.....	27
Աղյուսակ 10. Ապրանքային արտադրանքի կառուցվածքի վերլուծությունը.....	28
Աղյուսակ 11. Ծրագրային և փաստացի ցուցանիշներ.....	28
Աղյուսակ 12. Արտադրանքի թողարկման համաչափությունն ըստ տասնօրյակների.....	30
Աղյուսակ 13. Պայմանագրային պարտավորությունների կատարման վերլուծությունը (հազար դրամ).....	32
Աղյուսակ 14. Արտադրանքի աշխատատարության դինամիկայի վերլուծություն.....	35
Աղյուսակ 15. Հիմնական ֆոնդերի կազմը, կառուցվածքը և շարժը.....	41
Աղյուսակ 16. Տվյալներ ֆոնդահատույցի վերլուծության համար.....	43
Աղյուսակ 17. Տվյալներ Ա տեսակի արտադրանքի ինքնարժեքի գործոնային վերլուծության համար.....	49
Աղյուսակ 18. Արտադրանքի արտադրության նյութական ծախսումներ.....	50

ՀԱՆԳՈՒՑԱՅԻՆ ԲԱՌԵՐԻ ՑՈՒՑԻՉ

Ա	Հ
Անալիտիկ ցուցանիշների համակարգ, 21	Հակադարձ գործոնային վերլուծություն, 34
Անուղղակի արտադրական ծախսումներ, 97	Համեմատման եղանակ, 25
Անուղղակի ծախսեր, 92	Համեմատական և միջին մեծությունների կիրառման եղանակներ, 28
Աշխատանքային ռեսուրսներ, 64	Հաշվեկշռային եղանակ, 30
Աշխատավարձի ֆոնդ, 69	Հետադարձ վերլուծություն, 35
Առաջադարձ վերլուծություն, 35	
Արտադրանքի առաքման և իրացման վերլուծություն, 60	Մ
Արտադրված արտադրանքի որակի վերլուծություն, 55	Մասնավոր մեթոդիկա, 20
Արտադրանքի ինքնարժեքի իջեցման պահուստներ, 98	Միաստիճան վերլուծություն, 34
Արտադրանքի կառուցվածքի վերլուծություն, 54	
Արտադրության համաչափության վերլուծություն, 58	Ն
	Նյութատարություն, 88
Բ	Շ
Բազմակի կորելյացիա, 41	Շրթայական տեղադրումների եղանակ, 36
Բազմաստիճան վերլուծություն, 34	
Բացարձակ տարբերությունների եղանակ, 39	Պ
	Պահուստներ, 46
Գ	Պահուստների որոնման սկզբունքներ, 49
Գծային ծրագրավորման եղանակ, 40	Ս
Գրաֆիկական եղանակի կիրառումը ՏԳՎ-ում, 31	Ստատիկ վերլուծություն, 35
Դ	Վ
Դինամիկ վերլուծություն, 35	Վարչական ծախսեր, 98
	Տ
Չ	Տեղեկատվության խմբավորման եղանակ, 30
Չանգվածային սպասարկման եղանակ, 43	Տոկոսների տարբերության եղանակ, 40
Չույգային կորելյացիա, 41	
Է	ՈՒ
Էքստենսիվ գործակից, 82	Ուղղակի աշխատանքային ծախսումներ, 96
Ը	Ուղղակի նյութական ծախսումներ, 95
Ընդհանուր մեթոդիկա, 20	Ուղղակի ծախսեր, 92
Ի	Ուղիղ գործոնային վերլուծություն, 34
Ինդեքսացիայի եղանակ, 38	
Իրացման ծախսեր, 97	Ֆ
Խ	Ֆունկցիոնալ գործոնային վերլուծություն, 34
Խաղերի տեսության եղանակ, 42	
Կ	
Կորելյացիոն վերլուծություն, 34	
Կորելյացիոն եղանակ, 40	

Ա Ր Ք Ո Ր Ա Ն Ղ Ր Ե Ա Ս Յ Ա Ն

**Տ Ն Տ Ե Ս Ա Կ Ա Ն Գ Ո Ր Ծ ՈՒ Ն Ե ՈՒ Թ Յ Ա Ն
Վ Ե Բ Լ ՈՒ Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն**

Խմբագիր՝

Համակարգչային ձևավորում՝

Լարիսա Նաղարյան

Աննա Գևորգյան